ՕՐԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Այսուհետև ոչինչ Եգիպտոսեան խորամանկ քուրմեր, որ կամէին լինել գիտութեան միայնակ պահապանքը. այսուհետև ոչինչ Չինէական պարիսպ, որ պիտոյ է փակէր լուսաւոր գաղափարների մուտքը ազգերի մէջ: Այսուհետև լոյս և ճշմարտութիւն և ազատութիւն խաւարի բաբելոնեան գերութենից:

Ս. Նազարեանց:

ԱՌԱՋԻ՛Ն ՏԱՐԵԳ՛ՆԱՑՔ.

ՄԱՅԻՍ 1858 ԹՈՒԱԿԱՆԻ.

ԱՄՍԱՏԵՏՐԱԿ 5.

ՄՈՍԿՎԱ

Imprimerie d'Ernest Barfknecht.

1858.

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ք·

ՇԱՏ ԹԱՆԳ ԳՆՈՎ ՍՏԱՑԱԾ·

(Ընտանեկան անցք. Թարգմանութիւն դանիականից։)

Ա·

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԵՐԱԶՆԵՐ·

Հիւսիսային Իւտլանդիայի Վիբօրգ անուն քաղաքից մօտ մի մղոն հեռաւորութեամբ դրած է անուանի ագարակը Հալդ։ Ամրոցը մի ոչ աննշան բլուրի վերայ, ծովակը որ նորա ոտքումը վէտ վէտ ճօճումէ իւր ալիքը, աւերակքը վաղաժամանակեայ ասպետական ագարակի, կղզու վերայ, դալար ու կանաչ անտառները զուգախառնվելով կացուցանումեն այս տեղ մի քաղցր զմայլեցուցիչ պատկեր, որ մացառուտ բլուրներից շրջապատած, բաղկացնումէ մի օտարոտի ներհակութիւն, համեմատելով այն տրտում և միատեսակ սահմանի հետ, որի մէջ երևումէ դա որպէս մի ծաղիկ անապատումը, անմոռանալի և սակաւագիւտ, և այդ պատճառով այնքան սիրելի և յարգելի։

Մի գարնանային երեկոյ, 1703 թուականին, երեք ձիաւորք այս անտառապատ սահմանի միջով իջանումէին դէպ ի Վիբորգ։ Դոցանից մինը էր մի մանուկ կնամարդ, նորա մօտից հետևումէր մի դեռևս ծաղկափթիթ հասակում երիտասարդ, և մի փոքր հեռի դոցանից գալիս էր ձիով մի սպասաւոր, փառահեղ և ինչպէս այն ժամանակի սովորութիւնն էր, խայտաճամուկ հագուստով։

Մանուկ կնամարդը շատ գեղեցիկ էր. նորա ազնիւ երեսի խաղաղաւէտ հանդստութիւնը, նորա խոշոր և մուգ կապոյտ աչքերի հեզ և հաւատաւոր արտայայտութիւնը ցուցանումէին այն մեղմ կանացի արարածներից մինը, որոնց կեանքը պիտոյ է միշտ պահպանէ հանդստութիւն և ներքին խաղաղութիւն միայն, մինչև ապա կը վհատվին նոքա և կը խորտակվին կեանքի փոթորիկների մէջ։

Այն պարոնը որ այս կնամարդուն այնքան մօտ ձիընթաց էր, ինչքան որ թոյլ էին տալիս ձիանքը, կրումէր մի զինուորական պաշտօնակալի զգեստ. նորա երեսի կերպարանքը ցուցանումէր քաջութիւն և խոհեմութիւն, թէև նոյնպէս այն անհոգութիւնը որ մանկութեան և անփորձութեան բաղդաւոր բաժինն է։

Կնամարդը էր Յովհաննա Րիպէ, դուստր պայազատ տիկնոջ Րիզընշտէյնումը, Րիպլինեան վիճակի մէջ։ Երիտասարդը էր նորա հեռաւոր ազգական, կապիտէն Քրուզէ։ Երկուքն ևս վերադառնումէին մի այցելութենից որ արած էին գեներալ-մայիօր Գրեգերս Դայլին, որ մօտ երկու տարի յառաջ գնել էր Հալդ անուն ագարակը, և այն տեղ կառուցել էր բլուրի վերայ նոր ամրոցը։

Անտարակոյս պիտոյ է Յովհաննայի և կապիտէնի մէջ լինէր մի աւելի սրտակից յարակցութիւն, քան թէ այն հեռաւոր ազգականութիւնը միայն. այդ մասին ակնարկութիւն էին անում որպէս նոցա վստահասիրտ խօսակցութիւնը, նոյնպէս և Յովհաննայի ժպտելը, և այն հայեացքները որ ասես թէ սիրալից գգուանքով հանդիպումէին միմեանց և պատասխան էին տալիս։ Նոքա սիրումէին իրեար։ Անտառի միջից անցանելու ժամանակին, խորհուրդ էին անում նոքա իւրեանց ապագայի համար։ Ներկայ ժամանակին ուշադիր չէին այլևս. միայն երեխայութիւնը և ծերութիւնը, այս երկու սահմանագլուխքը կեանքի, գտանումեն իւրեանց երջանկութիւնը ներկայ բոպէի մէջ։ Նոցա շրջակայքումը ամենայն բան գտանվումէր մի անվրդով և խորին խաղաղութեան մէջ. պայծառ, թափանցիկ օդը, արևի լուսափայլութիւնը, որ ծառերի ճիւղերի միջից շողշողումէր, ծաղիկների անուշահոտութիւնը, թռչունների սրնգածութիւնը, — այս բոլոր իրողութիւնքը ձեռնտու էին

բաղմապատկելու այն բաղդաւորութիւնը որ այս երկու մանուկ մարդերի սիրտը լցուցանումէր, այն դալար ու ջերմ մանկական սէրը որ դուրս է բողբոջեցնում սրտի բոլոր ծաղիկները։

— «Այսօր երեկոյին» — ասաց Յովհաննան — «կը պատմեմ իմ մօրը ամենայն բան. պատճառ, ինձ յանցանք է երևում աւելի երկար թաքուցանել նորանից մեր սրտակցութիւնը։»

— «Խօսք այդ մասին սպասենք դեռ ևս» — ասաց նորա ճանապարհորդակիցը — «այդ խոստովանութիւնը երբէք կարող չէր մի բան յաւելացնել մեր բաղդաւորութեան վերայ։»

— «Այո, կարող էր և պիտոյ է յաւելացնէ» — պատասխանեց Յովհաննան — «իմ մայրը մինչև այժմ եղել է միշտ իմ խորհրդապահը. նա տրտմելու էր, եթէ իմանար վերջումը, որ ես հաւատ չունիմ դէպ ի նա։ Մի վախեցիր, իմ սիրական, իմ մայրս այնքան բարեմիտ է. նա երբէք կամեցած չէ մի այլ բան, քան թէ իմ բաղդաւորութիւնը, և այս պատճառով այժմ ևս օրհնելու է մեր սրտի դաշնաւորութիւնը։ Թող այդ, ես յառաջուց գիտեմ, որ նա կարող չէ մերժել իմ խնդիրը որ և իցէ մասին» յաւելացրեց նա ժպտելով։

Կապիտէն Քրուզէն ոչինչ չը պատասխանեց. երկուքը ամենևին լուռ շարժվումէին ձիաների վերայ, միմեանց մօտից։ Այս միջոցին մտածումէին նոքա մի և նոյն բաղդաւորութեան վերայ, միայն թէ զանազան կողմից ըմբռնելով այդ բանը։ Այր մարդը մտածումէր, ինչպէս բնական է նորան, իւր բաղդաւորութեան վերայ. բայց Յովհաննան այն երջանկութեան վերայ, որով յոյս ունէր բաղդաւորել իւր սիրականը։

— «Եթէ քո մայրը ընդդիմանայ մեր զուգաւորութեանը» յայտնեց յետոյ Քրուզէն, երբ որ նոքա թողել էին անտառը և դիմումէին դէպ ի Վիբօրգ, որ մի փոքր հեռաւորութեամբ երևումէր նոցա աչքին։

— «Նա չէ ընդդիմանալու մեր զուգաւորութեանը» — պատասխանեց Յովհաննան հաստատապէս. «ես լաւ եմ ճանաչում իմ մայրը։ Թէ այսպէս և թէ այլապէս, իմ բարեկամ» — յաւելացրեց նա և պարզեց դէպ ի նա իւր փոքրիկ վայելչաձև ձեռքը — «մեք առ ի սրտէ սիրելի ենք միմեանց և միշտ կը սիրենք իրեար. այսպէս չէ՞։ Այնուհետև մի՞ թէ բաւական չէր քեզ այս վկայութիւնը քո սրտի, որ դու կարողանայիր յաղթել ամենայն դժուարութեան, քաջութեամբ և համբերութեամբ։»

Քրուզէի պատասխանը նոյն էր, ինչպէս այդպիսի դիպուածներում սկսեալ ջրհեղեղից մինչև այժմ տուած են ու լսած են։ Դոքա յայտնի են, և հարկաւոր չէր կրկնել դորանց։ Միայն թէ երկուքն ևս մոռացան այս րոպէիս, թէ ինչքան երկարատև էր մշտնջենաւորութիւնը։

Նոյն օրի երեկոյին, երկու ժամ յետոյ քան թէ մեք տեսած էինք այդ մանուկ մարդերը, Յովհաննան նստած էր իւր մօր սենեկումը և թափումէր նորա առաջև իւր սրտի բոլոր գաղտնիքը իւր յարակցութեան մասին Կապիտէն Քրուզէի հետ։ Ծերունի տիկինը հանդարտ ականջ էր դնում նորան, և առանց ընդհատելու թոյլ տուեց նորան աւարտել իւր խօսքը։ Նորա երեսը պահպանեց անփոփոխ մի և նոյն ժպիտը, նորա ձայնը պահպանեց իւր սովորական մեղմ և սիրալիր հնչիւնը։

— «Այդ ձգտողութիւնքը քո հեռաւոր ազգականի կողմից դէպ ի քեղ, իմ զաւակ, վաղուց դուշակել եմ ես» — ասաց նորան մայրը վերջապէս» — բայց ես կարծումէի թէ դու չէիր լինելու այդ ձգտողութեններին կցորդ, մինչև ինձ տեղեկութիւն տուած չլինէիր այդ մասին։»

— «Ով սիրելի մայր» — ասաց Յովհաննան փաղաքշական ձայնով. «խնդրեմ ներել ինձ։»

— «Այս տեղ ներելու բան չկայ» — պատասխանեց պայազատ կինը — «բանը մի անգամ խօսքի է հասել. բայց այդ մասին թող լուռ մնանք մեք։ Ես ծանօթ եմ քո հեռաւոր ազգականի բնաւորութեանը սկսեալ նորա երեխայական տարիներից. նա ունի մի բարի, ազնիւ սիրտ և մի փառաւոր մարդ է իւր բոլոր վարքի մէջ։ Այլև հաւատումեմ ես, որ նա ճշմարտապէս սիրումէ քեղ, սիրելի զաւակ, և մի՞ թէ կարող էր այդ այլապէս լինել։

Եւ ծերունի մայրը թեքվեցաւ ծունկ չոքած աղջկայ վերայ, որ ձեռքերը դրել էր իւր մօր գոգումը, և տպաւորեց մի համբոյր նորա ըսպիտակ ճակատի վերայ. — «բայց Կապիտէն Քրուզէն, թէև այդպիսի պատուական մարդ էր, երբէք կարող չէ քո ամուսին դառնալ։»

Յովհաննան արձակեց մի բարձրաձայն աղաղակ։

— «Այդ ինչ խօսք է, մայր իմ. ինչու կարող չէ նա իմ ամուսին դառնալ» — ձայն արձակեց աղջիկը զարհուրած։

— «Ականջ դիր ինձ մինչև վերջը» — խօսքը յառաջ տարաւ Բրիղէ տիկինը — «և հանդարտ կաց։ Քրուզէն աղքատ է և չունի ոչինչ բաց ի իւր պաշտօնական արժանաւորութենից, որ չէ բերում այնքան եկամուտք, որ լցուցանէ մի ազնուական մարդու օրական պէտքը։ Դու, իմ զաւակ, նոյնպէս հարուստ չես, երբ որ քո եղբայրը իմ մահից յետոյ դարձած էր մեր նախնական կալուածի տէր։ Այս պատճառով, մի հարստականի ամուսնութիւն միայն կարող է ապագայումը ապահովել քո կեանքը։ Այս բոլոր հանգամանքը, ինչպէս հաւատի եմ ես, կշռել չես դու, և այդ մի բնական բան է։ Քո հասակումը, փառք Աստուծոյ, սովոր՝ է մարդս բաղդաւոր խորհուրդներ յղանալ, բայց երբ որ կեանքի

հասարակ օրերը վերայ են հասանում, այնուհետև չքանումեն մեր մանկական երազները։ Երբ որ դու մտածումեիր հարսնանալ քո հեռաւոր ազգականին, ես սահմանեցի քեզ մի այլ մարդու, որ լինելով նոյնպէս փառաւոր տղամարդ, ունի և հնարք վարելու մի ապահով կեցութիւն։ Այո՛, լացիր դու, իմ սիրելի աղջիկ, ես հասկանումեմ քո արտասուքը, որովհետև իմ սիրտը ևս զգացել է այդպէս, ինչպէս քո սիրտը, և ես սիրած եմ ինչպէս դու։ Երբ որ ես քո տարիներումն էի, սնուցանումեի իմ մէջ մի քաղցր առ ի սրտէ ձգտողութիւն դէպ ի մի մանուկ ազնուական, որ նոյնպէս աղքատ էր, ինչպէս քո հեռաւոր ազգականը։ Իմ ծնողքը չհաւանեցան իմ ընտրութեանը, և ընտրեցին ինձ մի այլ ամուսին այր։ Այժմ միայն խելամուտ եմ ես, որ նոքա լաւ արեցին, միտ չդնելով իմ ցանկութեանը․ պատճառ, ես գտնումեմ ականատես լինելով, որ իմ սրտի սիրածը անբաղդացրեց այն կինը որ նա ընտրել էր յետոյ իւր ամուսին։»

Երբ որ մայրը այսպէս խօսումէր, Յովհաննայի երեսումը երևեցաւ մի խորին տրտմութիւն․ նա լաց եղաւ, կցեց ձեռքերը և վերջապէս դուրս թողեց բերանից այսպիսի խօսքեր․

— «Ո՛վ սիրելի մայր, հոգալով իմ ապագայի համար, մտածել ես դու նոյնպէս, որ քո սահմանադրութիւնը կացուցանելու է ինձ մի շատ անբաղդ արարած աշխարհիս վերայ, և թէ ցաւից ու տրտմութենից կը մեռանիմ ես։»

— «Չես մեռանելու դու, Յովհաննա․ մի այդպիսի բանի հաւատումէ մարդը քո հասակում․ այնու ամենայնիւ ոչ ոք մեռանում չէ․ ժամանակը բժշկումէ բոլոր այդպիսի վէրքերը։»

— «Ո՛ւմ ես սահմանել ինձ որպէս հարսն։»

— «Գեներալ-մայիօր Գրեգերս Գաային որ Հալդի կալուածատէրն է։ Նա իմ մօտ էր այն միջոցին, երբ որ դու Քրուգէ Կապիտէնի հետ ձիով զբօսանք առնելու դուրս գնացիր։ Նա խնդրեց քո հարսնութիւնը և ստացաւ իմ հաւանութիւնը․»—

Գեներալ-մայիօր Գրեգերս Գաան էր մի բարձրահասակ, գունաթափ այր մարդ ծանրահայեաց և խիստ կերպարանքով։ Նորա մազերը սկսել էին ճերմակել․ այն շատ խորշոմութիւնքը նորա ճակատի վերայ յառաջացել էին իցէ թէ նոյնքան ևս սուր մտածողութենից, ինչքան որ այն տարիներից որ համարումէր նա․ պատճառ, երկուքը ևս ձգումեն իւրեանց ակօսները մի և նոյն կերպով։

Գրեգերսը գործունեայ և պատուաւոր կերպով մասնակից էր գըտանված վերջին պատերազմին։ Այն կարճատև խաղաղութեան միջոցին որ յաջորդեց Տրավենթալեան հաշտութենից յետոյ 1700 թուակ. դարձաւ նա դէպ ի Իւտլանդ, գնեց Հալդ անուն ագարակը և հրամայեց նորոգել նորան։ Մինչև այս երկու անցքը, նորա կեանքը հոսած էր հանդարտ ու միատեսակ, առանց սեփական բաղդաւորութեան և անօգուտ իւր ընկերների համար։ Նորա դրացիքը, հարուստ կալուածատէարք, ոչինչ քաղցրութիւն չէին գտանում նորա սառն, անընկերասէր բնաւորութեան մէջ։ Նորա հակառակ, չքաւորքը փառաբանումէին նորա մարդասիրութիւնը և բարեգործութիւնը, որպէս և այլ առաքինութիւնք որ, միտ դնելով այս մարդու բնութեանը, աւելի յաճախ յառաջանումէին իւր պարտաճանաչ սրտից քան թէ յօժարութենից օգնելու պակասաւորներին։ Ոչ ոք խնդրում չէր նորա կենակցութիւնը և ընկերութիւնը, այլ շատերը փախչումէին ևս նորանից։ Այն բարեկեցութեան մէջ, որ շրջապատումէր նորան, միայն էր նա, չքաւոր էր նա. պատճառ, նոյն իսկ բաղդը լինումէ ծանրութիւն միայնութեան մէջ։ Ներկան ոչինչ չէր տալիս նորան, ապագայից երևումէր թէ ոչինչ ակնկալութիւն չունի, և անցեալը ոչինչ քաղցր յիշատակ չէր թողել նորա սրտի մէջ։

Երբ որ Գրեգերսը յետ էր եկած պատերազմից և վերջացրել էր իւր կռիւը թշնամիների հետ, իւր հայրենիքում ունէր նա պատերազմելու մի աւելի կամակոր թշնամու հետ, և սա էր տաղտկութիւնը։ Նորա աւելի մանուկ քոյրը, որ նորա տանը կացած էր և նորա տնտեսութիւնը պահած էր կարգի մէջ, այս պատմութենից մի քանի տարի յառաջ մեռաւ։ Այս քուեր պակասութիւնը որ ամենայն օր ցաւելի էր նորան, զարթեցրեց նորա մէջ և մի անորոշ քաղցր յիշատակ այն տպաորութենների մասին, որ իւր քոյրը միշտ արած էր նորա վերայ։ Մօտ այս միջոցիս հանդիպեցան միմեանց նա և Յովհաննան։ Նորա տեսութիւնը յառաջացրեց նորա սրտի մէջ մի շարժողութիւն որ մինչև այժմ անծանօթ էր մնացած նորան։ Նա ցանկացաւ ընտրել նորան իւր հանդուցեալ քուեր փոխանակ. նա կամէր լինել նորա խորհրդապահը, նորա խորհրդատուն, նորա ուղեցոյցը, նորա պաշտպանը. այլապէս չէր մտածել նա այս յարակցութիւնը, երբ որ այն պայաղատ Բիգէ տիկնոջից խնդրեց նորա աղջկայ հարսնութիւնը։ Եւս աւելի նուաղ ըմբռնողութիւն ունէր նա այն թշուառութեան մասին, որ նորա առաջարկութիւնը անպատճառ բերելու էր այս մանուկ աղջկայ հանդարտ ու խաղաղ կեանքի վերայ։

Նա հարուստ էր, և իւր ազգատոհմի վերջին, միայնակ զաւակը. այս երկու հանգամանքը շատ ձեռնտու եղան Գրեգերսի դիտաւորու-

թեանը պսակ տալու, և դոքա փոքր խորհրդաւոր չէին Բիգէ տիկնոջ համար։ Բայց իմացականութիւնը և խաղաղ դատողականութիւնը սովորաբար սխալվումեն իւրեանց եզրակացութիւնների մէջ, մոռանալով հաշիւ դնել մարդու սիրտը և նորա կիրքը։ Այս սխալանքը արեցին և՛ Գրեգերսը և՛ պայազատ տիկինը։

Մօտ ութ օր այն խօսակցութենից յետոյ, որ եղած էր Յովհաննայի հետ, տեսան Բիգէ տիկնոջ կառքը գլորվելով դէպ ի Հալդ, սուրհանդակներ ձիերի առաջևից, ձիավարք ու սպասաւորք սպիտակեցուցած սուտ մազերով. կարճ ասեմ, այնպիսի շքեղութեամբ և ունայն փառահեղութեամբ որ պիտոյ է նայեցողներին մոռանալ տար Հէնրիկ Բիգէ Հոլլանդացու յիշատակը, որին այդ գերդաստանը պարտական էր իւր աղնուականութեան վկայագիրը։ Նոյն իսկ պայազատ տիկինը երևեցաւ պատշաճաւոր զգեստով. նա այն պառաւած գեղեցիկներից մինն էր, որոնց կերպարանքի մէջ պիտոյ է արուեստը փոխարինէր այն բանը որ յափշտակել էր ժամանակի ձեռքը։

Գրեգերս Դաան ընդունեց այս տիկինը սանդուղքի վերայ, մի այնպիսի հագուստով, որ ցուցանումէր թէ այս րոպէիս սպասած չէր նորա այցելութեանը։ Ուշը վերան չը լինելով, տարաւ նա եկաւոր տիկինը դէպ ի իւր ուսումնասիրական սենեակը, ուր զբաղված էր հիւրի գալուց յառաջ։ Ամէն բան այս սենեկումը ակնարկութիւն էր անում դէպ ի մի չամուսնացած ծեր մարդու անախորժելի բնակարան. մի պառաւ որսորդական շուն հանգստացած սօֆայի վերայ, զարմացքով նայումէր եկաւորի վերայ, առանց հեռանալու իւր տեղից։ Փոշին մատնաչափ հաստութեամբ պատել էր լուսամուտքը և տան կարասիքը, օդը լցուած թմբաքի շոգիներով, բոյսեր ու զէնքեր մի խայտաճամուկ անկարգութեամբ ձգած էին սեղանների և աթոռների վերայ։

Հեգնական ժպիտը և այն քննողական հայեացքը որով պայազատ կինը աչք ման ածեց սենեկի մէջ եղած առարկաների վերայ, իսկոյն զգաստացրեցին Գրեգերսը, ցուցանելով նորա սխալանքը։ Այս պատճառով կակազեց նա մի չքմեղական խօսք և բացեց դուռը դէպ ի մի մեծ կողմնահայեաց դահլիճ, կամենալով այն տեղ տանել այցելու կինը. բայց ողորմած տիկինը չընդունեց այդ բանը։

—«Թո՛ղ այս տեղ մնանք» — ասաց նա — «մի սենեակը նոյնպէս լաւ է, ինչպէս միւսը, այն գործի վերայ խօսելու համար, որ պիտոյ էր մեզ երկուքիս վճարել։»

Այնուհետև գլորեց նա մի թղթակոյտ մի հնաշէն աթոռից, նըստեցաւ նորա վերայ և ակնարկեց դէպ ի Գրեգերսը, որ նոյնպէս անէ։

Արևը դուրսից պատուհանի ապակիներով ներս էր փայլում սենեկի մէջ, լուսաւորելով այն երկու անձինքը որ նստած էին այն տեղ։ Մեղմաշունչ հողմը շարժումէր մի մեծ, դալար ու կանաչազգեստ զարդարած ծառի տերևներ, այս կողմ ու այն կողմ տարուբերելով․ Ճնճղուկները ճռվողումէին տանիքի տակ․ աւելի հեռի, արձակ դաշտումը լսումէին արտուտի երգը, երբ որ սա բարձրանումէր հին ամրոցի վերայ, որի աւերակքը լուսափայլելով արևից տեսանելի էին նայեցողին նոր ամրոցի պատուհաններից։

Ծեր տիկինը խօսքը վեր կալաւ և ասաց․

—«Ես եկել եմ ձեր մօտ, պարոն գեներալ, այն գործի պատճառով, որ, վաղուց չէ, բերել էր ձեզ իմ մօտ։ Այսօր ես բերել եմ ձեզ իմ կատարեալ հաւանութիւնը ձեր և իմ աղջկայ զուգաւորութեան մասին, և պարծանք եմ համարում ինձ, որ դուք իմ դուստրը ընտրել էք ձեզ հարսն։»

—«Գրեգերսի բարձրահասակ կերպարանքը վեր կալաւ մի զինւորական տեսք․ ապա քաղաքավարութեամբ խոնարհեցաւ նա և ասաց․

—«Ուրեմն դուք յայտնել էք ձեր աղջկան իմ ցանկութիւնը։»

—«Այո, նոյն օրին, երբ որ դուք մեծարեցիք ինձ ձեր այցելութեամբ։»

—«Եւ նա չունի՞ պատճառ ընդդիմանալու այն բանին, որ է իւր գալոց օրերը անցուցանել այնպիսի ծեր մարդու հետ, ինչպէս ես եմ։»

—«Արդարև» — պատասխանեց Ռիզէ տիկինը հանդարտ և անտարակոյս — «նա ունի շատ պատճառներ ընդդիմանալու այդ բանին։»

Գրեգերսը լսելով այս խօսքերը, կանգնած էր այն տեղ կայծակից զարկուածի պէս, և մտածումէր որպէս թէ լաւ լսած չէ ասողի խօսքը։

—«Իմ պատուելի պարոն գեներալ» — խօսքը յառաջ տարաւ պայազատ տիկինը, մի քաղցր ժպիտ խաղալով նորա շրթունքի վերայ — «առաջին պարտականութիւնը որ մեք երկուքս ունինք լցուցանելու միմեանց հետ, է ճշմարտութիւն և պարզութիւն, և ես կ՚աշխատեմ առանց թագուցանելու խօսել ձեր հետ։ Արդարև իմ դուստրը սիրումէ մի այլ ոք․․․ Ո՛չ․ մի՛ ընդհատէք իմ խօսքը․ ես կամէի ասել դորանով, թէ նա արդէն սնուցանումէ իւր մէջ մի ձգտողութիւն, մի ջերմ բարեկամութիւն դէպ ի իւր աղքատ ազգականը, որ գրեթէ նորա հետ միասին մեծացած է, ուրեմն և մի հատ մարդն էր, որ մինչև այժմ կարող էր իրագործել այն երազական պատկերը որ ամեն մի մանուկ աղջկայ երևակայութիւն մի որոշեալ հասակում ձևացնումէ իւր մտքի

մէջ։ Բայց Աստուած իմ ինչ խորհուրդ ունի այդ բանը։ Մանկութեան օրերումը մեք սիրումենք այս բոլոր աշխարհը — կամ թէ աւելի լաւ ասեմ, մեք սիրումենք մե՛ր անձը միայն ամէն մի առարկայի մէջ, որի վերայ ընկնումէ մեր սրտի յօժարութիւնը։ Ես իմ դստերը հասկացուցել եմ թէ հարկաւոր էր բաց թողուլ իւր երազական պատկերը, և հրաժարվել այն աշխարհից որի մէջ ապրած էր նա մինչև այժմ, որ իբրև ձեր ամուսին մտանէ մի այլ աշխարհի մէջ։

—«Եւ նա յօժա՞ր էր հնազանդել ձեզ» — հարցրեց Գրեգերսը ոչ առանց տարակուսանքի։

Պայաղատ կնոջ ժպիտը թեթևացրեց գեներալի սիրտը։

—«Յօժա՞ր» — կրկնեց տիկինը — «մի՞ թէ մտածումէք դուք, պարոն գեներալ, որ ես ցանկանումէի ամուսնացնել իմ դուստրը ձեր հետ, յառաջ քան թէ նա հնազանդութեամբ դէպ՝ի իւր ծնողքը ցոյց էր տուած, թէ պատրաստ էր հնազանդել իւր ամուսնուն։»

—«Բայց որովհետև նա սիրումէ մի այլ անձն, մի աւելի մանուկ այր մարդ, որ գուցէ թէ աւելի լաւ քան թէ ես կարող է հասկանալ նորա սրտի բաղձանքը և սրտակից լինել նորան, ուրեմն չէ կարող նա սիրել ինձ։»

—«Ձեզ սիրե՞լ․» — կրկնեց ողորմած տիկինը — «ոչ․ դոնեայ այս րոպէիս դեռ ևս ոչ, որովհետև հազիւ թէ նա արժանացել էր ձեր ծանօթութեանը։ Բայց ինչ որ վերաբերվումէ ապագային, յատկապէս ձեր ձեռքումն էր լինելու, նորա սէրը գրաւել կամ չգրաւել։ Ձեր գերազանց փորձառութիւնը, և այն քաղցր ու մեղմ բնաւորութիւնը որ սեփական է ձեզ, ինչպէս նկատած եմ ես, անտարակոյս կ՚առաջնորդեն մանուկ կնամարդուն դէպ ի այն նպատակը որ ցանկալի է ձեզ։ Ես աստւեմ առաջնորդել, որպէս ուղեցոյց վարել, բայց ոչ կրթել, ըստ որում ենթադրումեմ ես, որ մի այր մարդ աւելի հեշտ կարող է իւր սրտի սիրած կինը նորա կենսական ճանապարհի վերայ որպէս ուղեցոյց վարել, քան թէ նորան կրթութիւն տալ․ նա կարող չէ կրթել նորան։ Ինչպէս իմ յատուկ փորձերը իմ յատուկ սեռի մասին ցուցանումեն, այր մարդու խնացողութենից է կախ այնքան սէր ճարել իւր համար, ինչքան կամէր նա․ դոքա գիտեն նոյնպէս սէր գտանել, քան թէ պահպանել, և համարեա թէ միշտ այսպէս է պատահում, որ կին մարդը որպէս փոխարէն այն նախողջոյն ուշադրութեններին որ ցուցել էր նորան այր մարդը, վճարումէ իւր պարտքը, հատուցանելով վերջին ուշադրութիւնքը։»

Այսպիսի կերպով բացվեցաւ մի խօսակցութիւն, որով պայազատ կինը առ փոքր փոքր կարողացաւ փարատել գեներալի երկմտութիւնքը։ Վերջապէս թողեցին նոքա այս նիւթը, որ, ինչպէս մտածումէր ողորմած տիկինը, մի աւելի խորհրդաւոր բանի վերայ խօսեն, այսինքն կշռադատեն տեսակ տեսակ խնդիրները մի ամուսնական դաշնաւորութեան, որ տիկինը բերել էր իւր հետ հարևանցի ստուերագրած։ Պատուելի տիկինը այս միջոցին ցոյց տուեց գործնական խելք շատ, ինչպէս արդէն յառաջընթաց խօսակցութեան մէջ երևեցուցել էր, և Գրեգերս Դաան իւր կողմից ցոյց տուեց այնքան վեհանձնութիւն, որ ի վեր էր քան թէ տիկնոջ առաւել համարձակ ակնկալութիւնքը։

Ամուսնութիւնը վճռահատվեցաւ և որոշվեցաւ — աւաղ մի վաճառական դաշնագրութիւն որի մէջ անփոյթ արեցին մի մանուկ աղջկայ բաղդաւորութիւն, միտ դնելով այն բանին միայն, որ ապահովեն նորա կեանքը մի քանի ինքն ըստ ինքեան անխորհուրդ երկրաւոր բարութեններով։ Նմանապէս ամուսնութիւնը կատարվեցաւ հանդէսներով, ծաղիկներով, զուարճութեամբ ու երգերով մի կողմից, հառաչանքով ու ծածուկ արտասուքով միւս կողմից։ Նոյն հարսանիքի զանգակները որ հնչեցին Գրեգերսի բաղդաւորութիւնը, հնչեցին և Յովհաննայի անդորրութեան և հոգու խաղաղութեան երթը դէպ ի գերեզման։

Առաջին շաբաթները հարսանիքից յետոյ անց կացան ընկերական ժողովներով, այցելութեններով և այլ տեսակ զբօսանքով, որ այն ժամանակի ծէսը աւելի էր պահանջում քան թէ մեր օրերումը, և այս միջոցին նորահարսի ու նորափեսայի բաղդաւորութիւնը ցոյց տրվեցաւ դուրսից, թէպէտ ներսից մի այդպիսի բաղդաւորութիւն չկար իսկապէս։ Գրեգերսը թէպէտ ընդդէմ էր մի այդպիսի յիմարական խաբէութեան դէպ ի իւր շրջակայքը, բայց զուր եղաւ այդ· պատճառ, այդպէս էր հաճոյ իւր պայազատ զոքանչին, և հնազանդ փեսան թոյլ տուեց նորան կատարել իւր հաճոյքը։ Պատուելի տիկինը յոյս ունէր այսպիսի կերպով զբօսեցնել իւր աղջիկը և մոռացուցանել նորան իւր զրկանքը, ըստ որում և ինքը իւր կեանքի մէջ իմացած չէր մի այլ բան, քան թէ այն փոքրոգի հոգսերը, որ վառած մոմեղէն ճրագների մէջ և աղմկային ընկերական ժողովի դահլիճի մէջ չքանումէն։ Այսպէս ևս հասկացողութիւն չունէր նա և այն մասին, թէ Յովհաննան այժմ կարող էր այս հանդէսներից խլանալ ու ձանձրանալ, բայց առանձնութիւնը միայն է ցաւի մխիթարութիւնը և սրտի խորին ու մեծ վշտերի բժշկական դեղը։

Մօր ու աղջկայ մէջ, որ բնութեամբ այնքան ներհակ էին միմեանց, կար այն գլխաւոր զանազանութիւնը, որ մայրը մտածումէր մի-

այն լոկ ամուսնութեան վերայ, բայց աղջիկը սիրու և սրտի հաւանութեան վերայ, և կամէր իրաւունք ունենալ այդ մասին ։

Բայց եթէ քննենք այժմ գեներալի որպիսութիւնը, նա զարմացած էր այն բանի վերայ, որ նորա սրտի բոլոր զգացողութիւնքը, որ մինչև այժմ այնքան խաղաղ ու մեղմ ընթացել էին, յանկարծ փոխեցին իւրեանց բնաւորութիւնը։ Այն քնքուշ սիրու ախտը, որ նորա սիրտը դուրս էր հանել իւր սովորական հանդարտ զարկողութենից, ծագեցաւ որպէս մի արեգակնային ճառագայթ որ շտապումէ մարդ ըմբռնել և ջերմանալ նորանով, ինչպէս որ միւս կողմից երկիւղ ունի, մի՛ գուցէ որ շուտով կորուսանէ նորան։ Ի՜նչպէս շատ աշխատումէր նա, այն անբաղդը, սիրել, որպէս թէ մտածումէր թէ պիտոյ էր նորան կորուսեալ ժամանակը յետ դարձուցանել․ ի՜նչպէս մեծափոյթ էր նա քնքշութեամբ վարվիլ իւր կնոջ հետ, մտածելով թէ մի հասակաւոր մարդու երկիւղոտ և ամօթապարտ սէրը կարող էր փարատել այն տհաճութեան և ցաւի ամպերը որ նստած էին Յովհաննայի գեղեցիկ դունաթափ ճակատի վերայ, կամ թէ արտաքսել այն բանի յիշատակը, որից զրկված էր Յովհաննան, այն փոխարէնովը որ սա ստացել էր այժմ։ Ի՜նչպէս խնամատար, ի՜նչպէս սրտառուչ, ի՜նչպէս անձնուրաց էր այս ինքն ըստ ինքեան ազնիւ տղամարդու սէրը որ յատկապէս խնդրումէր այդքան փոքր, բայց չէր գտնում ամենևին ոչինչ ընդունելութիւն ։

Երբ որ նա երկար ու ձիգ չարչարանքից յետոյ խելամուտ եղաւ թէ անկարելի էր իւր մանուկ ամուսնու սէրը գրաւել, ինչպէս նա կարօտով ու փափագով ցանկացած էր, միշտ և հանապազ նորա հոգու առաջև պատկերանալով այդ բանի հնարաւորութիւնը որպէս մի ֆատա մօրգանա, այնուհետև անյոյս եղած առանձնացաւ նա իւր ուսումնական սենեկի մէջ, բայց ոչ ևս այլ առաջին անդորրութեամբը և բաւականութեամբը․ Նա կրումէր իւր վերայ իւր վշտի նշանները․ Նորա թշերը գունատվեցան և ներս ընկան․ Նորա մազերը կարճ միջոցում աւելի ճերմակացած էին, քան թէ յառաջուց տարիներով ։ Այս անբաղդ ամուսինը սկսեալ այն ժամանակից կրումէր այնքան ցաւ, ինչքան Յովհաննան, միայն թէ նոցա երկուստեք ցաւի աղբիւրը այլ էր ։

Այս հանգամանքների մէջ շատ տարիք եկան ու գնացին։ Գեներալը զգումէր, որ նորա ամուսնութիւնը օրհնութեամբ չէ ։ Անզաւակ մնաց նա․ Վիբօրղեան մայր եկեղեցումը, նորա ազգատոհմի գերեզմանատեղումը ամփոփած է մի բալասանապատ մանուկի դի, որի դագաղի ծածկոցի վերայ կարելի է կարդալ այսպիսի գանգատական, ցաւեցու-

ցիչ մակագիր. «Սա եղած է Գրեգերս Գաայի մի հատիկ զաւակը, որ մեռաւ իսկոյն յետ իւր ծնանելուց։»

Այն մի հատ անձը, որ ասես թէ կուրացած ու խլացած, չէր նկատում այս թշուառ յարակցութիւնը գեներալի և Յովհաննայի մէջ, էր պայապատ տիկինը։ Ամառան միջոցին, մի քանի ամիս անցուցանումէր նա իւր փեսայի մօտ. այնուհետև կառքի մէջ նստած գնումէր նա զբօսնլու, կարգադրումէր ընկերական հանդիպմունք իւր բոլոր ծանօթների համար, որպէս այն նորոգութիւններով և փոփոխութիւններով որ իւր Բիլլինշտէյն ագարակումը արած էր, ակնյայտնի ցուցանումէր նա, թէ ինքը բացարձակ տէր է իւր փեսայի գիւղի վերայ։

Այս միջոցիս նոր ի նորոյ պատերազմ բացվեցաւ Շվեդիայի հետ, ընդհատվելով միայն մի կարճատև հաշտութեամբ անցեալ դարու սկզբումը, որ և ստիպուած էր Դանեմարքիան ընդունել։ Արքայ Ֆրիդրիկոս չորրորդը ծածուկ դաշնաւորութիւն էր հաստատել Պոլոնիայի և Սաքսոնիայի հետ ընդդէմ Շվեդիային։ Զօրապետ Բեվենտլովը պատերազմ տուեց Շօնըն սահմանումը և փոքր ինչ յետոյ լսվեցաւ առաջին անգամը, թէ Դանիացոց ազնուականներից մի հին և հռչակաւոր տոհմանուն մասնակից է եղած մի անյաջողութեան պատերազմի մէջ — մի տոհմանուն որի հետ մինչև այժմ անբաժանելի կապակից էին քաջալնական հոգի և յաղթութիւն։ Իւրգեն Ռանցաու զօրապետը Գրաֆ Ստենբօքի ձեռքով յաղթուեցաւ Հելզինգբօրգի դարպասից դուրս և դորա հետևութեամբ պատերազմը տեղափոխվեցաւ դէպ ի Գերմանիա։ Այնուհետև գանչեցին դէպ ի պատերազմի դաշտը և գեներալ-մայիօր Գրեգերս Գաային։ Մի երեկոյ, սեպտեմբերի մէջ հասաւ նորան հրամանը նորա Հալդ ամրոցումը։

Բ.

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՈՂՋՈՅՆ.

Գեներալ-մայիօր Գրեգերս Գաան ճանապարհորդութեան պատուէրը ստացաւ իւր կնոջ ներկայութեամբ։ Գեներալի թշերը կարմրեցան, երբ որ նա կարդաց նամակը։ Յովհաննան նկատեց իւր ամուսնու ներքին շարժողութիւնը. նա նստած էր կրակարանի մօտ և զբաղած էր ձեռագործութեամբ. մի փոքր հեռի Յովհաննայից նստած էր այն տեղ և մի այլ անձն, այսինքն Կապիտէն Քրուզէն, Յովհաննայի հեռաւոր ազգականը։ Յովհաննայի պսակվելուց յետոյ, այս ազգականը յաճախ երթումէր նորան տեսութիւն Հալդումը։ Ինքը Գրեգերսը քաջալերած էր նորան յառաջ տանել իւր այցելութիւնքը, ըստ որում նկատումէր այն քաղցր տպաւորութիւնը որ Քրուզէի ներկայութիւնը գործումէր

Յովհաննայի վերայ, և որովհետև դեռ ևս ամենևին անտեղեակ էր այն մասին, թէ ինչ յարակցութիւն յառաջուց եղած է այս երկուքի մէջ.

—«Այդ նամակը երևի թէ գրաւումէ քո ուշադրութիւնը»—ասաց Յովհաննան, երեսը դարձուցանելով դէպ ի գեներալը։

—«Այո, անտարակոյս»—ասաց Գրեգերսը—«էգուց ճանապարհ կ՚ընկնիմ ես։»

—«Մի՞ թէ այդպէս շուտով պիտոյ էր ճանապարհ դուրս գալ»—կրկնեցին միասին Յովհաննան և կապիտէն Քրուզէն։

Ճիշտը կապիտէնի բացագանչութեան մէջ երևումէր թէ հաւանելի չեղաւ գեներալին. Նորա ճակատը խորշոմեցաւ այն րոպէին, երբ որ ասաց նա.

«Ինձ պիտոյ էր ասել յատկապէս, թէ Մեք ճանապարհ ենք ընկնում. պատճառ, ես հրաման եմ ստացել ահա, որ մեր զօրագունդը միանայ Հոլստէյնումը եղած զօրքի հետ։

Յովհաննան ոչինչ չխօսեց յետոյ. վերջին տարիքը տուել էին նորան կարողութիւն կատարելապէս տէր լինելու իւր սրտի վերայ. այս պատճառով հանգիստ մնաց նա, չցուցանելով և ոչ ամենափոքր խռովութեան հետք։ Սորա հակառակ, Գրեգերսը կրկին խորասոյզ եղաւ իւր առաջին լռութեան մէջ. Նա կրկին հանգստացել էր իւր տեղումը, մի սեղանի մօտ, դահլճի մի անկիւնում, փոքր ինչ մեկուսի Յովհաննայից, ըստ որում պատճառ բերեց, թէ ճրագը Յովհաննայի սեղանի վերայ ցաւեցնումէր իւր աչքերը։ Բայց այն տեղից նորա հայեացքը անդարձաբար ուղղեցուցած էին դէպ ի այն երկու անձինքը։

Այն անախորժ լռութեան միջոցին, որ տիրեց այժմուս, լսելի էր ողմի շառաչիւնը վառարանի փողովակի մէջ, և բուերի աղաղակը ծառերի մէջ պատուհանների առաջև։

Մի քանի ժամանակից յետոյ տեղից վեր կացաւ Գրեգերսը, առաւ մի ճրագ և թողեց դահլիճը։ Յետ մնացողքը լսումէին նորա քայլերի դղրդիւնը երկար ձեմելիքի մէջ, որ տանումէր դէպ ի նորա առանձնարանը։ Երբ որ այն երկուքը միայն էին ահա, Յովհաննան ցած դրեց իւր ձեռագործութիւնը, նոյն միջոցին ծածկելով երեսը այն ձեռքով որ դրած էր սեղանի վերայ։ Բայց երբ որ նա բարձրացրեց գլուխը, արձակեց մի մեղմահնչիւն աղաղակ. պատճառ, կապիտէն Քրուզէն չոքած էր նորա ոտքի առաջև։ Յովհաննան մի հրաժարեցուցիչ շարժողութիւն արեց ձեռքովը, բայց Քրուզէն ըմբռնեց այն սպիտակ ձեռքը և սեղմեց նորան իւր շրթունքի վերայ, մի անասելի պաղատական հայեացք ուղղելով նորա վերայ։

—«Դուք լսեցիք արդէն» — շշնջեց Քրուզէն — «որ մեք պիտոյ է ճանապարհորդենք, ուրեմն կը բաժանվինք միմեանցից, գուցէ յաւիտեան։ Ինձ պիտոյ է յառաջուց խօսել ձեր հետ։ Հանդիպեցէ՛ք ինձ այն տեղ ցածումը . . . միանգամ միայն, առաջին և վերջին անգամ։»

—«Ոչ, ոչ.» — պատասխանեց Յովհաննան սաստկապէս — «Ես միշտ մերժած եմ ձեր խնդիրը։ Վե՛ր կացէք, կարող էր մի մարդ ներս մտանել։»

—«Ո՜վ, խնդրումեմ ձեզանից,» — խօսքը յառաջ տարաւ Քրուզէն աւելի և աւելի փափուկ ու դողդողուն ձայնով — «մի՛ մերժէք իմ խնդիրը։ Մի՞ թէ, Յովհաննա, երկիւղ ունիք ինձանից, թէպէտ ես այսքան տարի բաւականապէս ապացուցել եմ, թէ որքան ապահով կարող էիք դուք լինել իմ կողքին։ Կամ թէ վախենո՞ւմէք դուք, մի՛ գուցէ ձեր աչքը հանդիպէր այն անտառին, ուր այն յետ ճաշի պահուն ուխտեցիք միշտ և յաւիտեան սիրել ինձ, այն պահուն, երբ որ արեգակը փայլումէր և թռչունքը երգումէին, մինչ երկինքը լսումէր այս ուխտը, որ յետոյ այդպիսի անգութ կերպով քակտված է։»

Յովհաննան լսելով այս բառերը որ կիսով չափ հնչումէին որպէս յանդիմանութիւն, սաստիկ արտասուեց։

—«Վե՛ր կաց դու միանգամ, ո՛վ անբաղդ։ Չե՞ս լսում դու, որ ահա գալիս է մի մարդ. դա իմ ամուսինն է։»

—«Թո՛ղ գայ նա. այս րոպէիս, նա իմ ամենամեծ թշնամին է։»

Յովհաննան պարզեց ձեռքը դէպ ի նա, մի ցաւալից և յանդիմանական հայեացք ուղղելով նորա վերայ. Քրուզէն բարձրացաւ։

—«Ուրեմն դուք ցաւակից էք ինձ, որ այսքան վիշտ էի կրել.» — ասաց Քրուզէն — «ուրեմն իմ բաժանվելուց յառաջ կ՚արժանանամ ես լսելու ձեր բերանից մի քաղցր բառ որպէս հրաժարական ողջոյն։»

Յովհաննայի գլուխը խոնարհեցաւ դրեթէ անզգալի կերպով, այնպէս որ նա կանգնած էր այն տեղ մի վիզը կոտրած ծաղկի պէս. բայց այս տեսարանը հերիք էր Քրուզէի համար. Նորա աչքը ճառագայթվեցաւ, նորա շրթունքը դողացին մի տենդոտ շարժողութեան մէջ։

Երբ որ այնուհետև Գրեգերսը ներս մտաւ դահլիճի մէջ, երկու անձինքը նստած էին այնպէս հանգիստ ու հանդարտ, ինչպէս յառաջ։

Փոքր ինչ յետոյ Քրուզէն հրաժարական ողջոյն տուեց և հեռացաւ։ Մի ժամ յետոյ դուրս սողաց մի մանուկ կերպարանք մի կողմնակի դռնից որ գեներալի կնոջ սենեկից բացվումէր դէպ ի այգին։ Այս կերպարանքը պատատված էր մի մեծ թաշկինակով և ծանրաքայլ շարժվումէր ասես թէ ակամայ յառաջ գնալով։ Կապիտէն Քրուզէն հան-

դէպ նկաւ սորան այգու դրան մօտից: Յովհաննան ընդունեց նորան աւելի սառնութեամբ, քան թէ այս րոպէի յաջողութիւնը երևումէր թէ առիթ է տալիս: Բայց Քրուզէն շատ քաջ տեղեակ էր նորա խոհեմութեանը, քան թէ կարող էր մի այլ ընթացք յուսալ նորանից:

—«Դուք հրամայեցիք ինձ» — արձակեց նա խօսքը թոյլ և մեղմ ձայնով — «չգալ դարձեալ դէպ ի Հալք. և այսօր բարկացած էք իմ վերայ, որ ես այնու ամենայնիւ համարձակվեցայ հակառակել ձեր հրամանին: Վկայ է Աստուած, Յովհաննա, որ իմ հաստատ դիտաւորութիւնն էր հնազանդել ձեզ:»

—«Եթէ այդպէս էր, ապա ինչո՞ւ եկաք դուք» — հարցրեց նա:»

—«Որովհետև ես աւելի կանուխ քան թէ գեներալը գիտէի, որ պիտոյ է մեզ դուրս գնալ զօրքով: Պարտ էր ինձ միւսանգամ տեսանել ձեզ, յառաջ քան թէ կը զարկէր մեր հրաժարական ողջունի ժամը:»

—«Երանի՛ թէ մեք երբէք տեսած չլինէինք միմեանց» — շշնջեց Յովհաննան բութ ձայնով — «այս բարի էր լինելու երկուքիս ևս:»

—«Ո՜հ. քաւ լիցի. մի՛ ասէք այդպէս» — ասաց Քրուզէն այն անընդդիմանալի փափկութեամբ, որ միշտ գտել էր իւր ճանապարհը դէպ ի Յովհաննայի սիրտը — «Այժմ հեռանումեմ ես ձեզանից և ձեր ցանկութիւնը կը կատարվի. ինչո՞ւ համար կամէիք դուք այլև մի այդպիսի տրտում յիշատակ տալ ինձ որպէս ճանապարհի պաշար: Կարելի է, Յովհաննա, որ ես չվերադառնամ միւսանգամ. այո՛ գրեթէ հաւաստի է, որ մեք այժմ վերջին անգամն ենք տեսանում միմեանց. պատճառ, ընդէ՞ր պիտոյ էր ինձ ցանկալ պահպանել իմ կեանքը: Բայց եթէ այնու ամենայնիւ վերադառնամ ես պատերազմից, և այ́նուհետև կամէիք դուք անողոքելի լինել և թոյլ չտալ ինձ այցելութիւն գալ ձեզ: Ցուցէ՛ք ինձ այս շնորհը. ես կը զգուշանամ միշտ, որ երբէք դէպ ի չարը գործ չդնեմ դորան, ասելով մի բան կամ խօսք որ կարող էր անհաճոյ լինել ձեզ. ոչ մի հառաչանք, ոչ մի գանգատ յայտնելու չէ ձեզ իմ սրտի վիշտը:»

—«Ո՛հ. բարի Աստուած» — ձայն արձակեց Յովհաննան հառաչելով — «Մի՛ թէ վշտացած չեմ և ես. մի՛ թէ չէք հասկանում դուք, որ ձեր ներկայութիւնը երկարայնումէ միայն պատերազմը, որի մէջ սահմանած է մեզ կորուստ գտանել: Ի՞նչ կամէիք դուք աւելի իմանալ, քան թէ գիտէք արդէն: Ի՞նչ կամիք դուք այս տեղ աւելի տեսանել քան թէ որ ես Գրեգերսի ամուսինն եմ:»

—«Այո՛, ստոյգ է այդ» — շշնջեց Քրուզէն — «լաւ է մեզ երբէք այլ չտեսանել միմեանց. մնացէ՛ք բարեաւ:»

—«Բարեա՛ւ մնա» — պատասխանեց Յովհաննան նոյնպիսի անմխիթար ձայնով — «բայց ընդէ՛ր կամիս դու քո կեանքը վտանգի տակ ձըգել․ է՛ր կամիս դու մեռանել․ չունիս դու այդպիսի համարձակութիւն, ասում եմ քեզ․ զգուշացի՛ր ապա։»

—«Արդէն ձանձրացած եմ պատերազմելով իմ չար բաղդի հետ։»

—«Ո՛հ․ և ես նոյնպէս» — ասաց Յովհաննան և արտասուեց սաստկապէս։

Այս բառերի մէջ կար այնքան խորին հոգեկան ցաւ, այնքան անձնուրացութիւն, որ Քրուզէն բարձրացրեց գլուխը, ըմբռնեց նորա ձեռքը և սեղմեց նորան իւր շրթունքի վերայ։

—«Բարեա՛ւ մնա» — ասաց նա — «բարեաւ մնա․ Աստուած քո հետ, թանգագին Յովհաննա։»

Յովհաննան պահեց նորա ձեռքը իւր ձեռքի մէջ և շշնջեց դէպ ի նա — «բարեա՛ւ մնա . . . մինչև միւսանգամ արժանի կը լինինք միմեանց տեսութեան։»

—«Ուրեմն ունիմ ես համարձակութիւն միւսանգամ գալ․» — ձայն արձակեց Քրուզէն ուրախութեամբ։

—«Որովհետև ահ էք տալիս ինձ ձեր մահովը . . . այո։ Բայց այժմ ե՛րթ և թող ինձ, խնդրում եմ ձեզանից։»

Քրուզէն ծունր չոքեց նորա առաջև, կրկին անգամ համբուրեց նորա ձեռքը, ասելով․

«Յիշեցէ՛ք ինձ ձեր աղօթքի մէջ, և ես կը վերադառնամ և Աստուած կ՚ողորմի մեզ երկուքիս։» —

Ապա վեր կացաւ Քրուզէն և հեռացաւ․ մի փոքր յետոյ լսելի էր նորա ձիու սմբակների զարկը փողոցի կողմից։

Յովհաննան մնաց կանգնած և ականջ էր դնում։

Ու ահա զգաց նա յանկարծ, որ մի մարդ ըմբռնեց նորա ձեռ, և մի ձայն շշնջեց նորա մօտ, գրեթէ անհնչիւն և անլսելի․ — «Աղօթի և վասն իմ, Յովհաննա։»

Յովհաննան զարհուրեցաւ և արձակեց մի դղրդեցուցիչ ձայն նորա առաջև կանգնած էր մի այր մարդ, որի մէջ ճանաչեց նա Գրեգերս Գատն։ Նորա երեսը լուսնի թոյլ փայլողութեան մէջ երևում էր ևս առաւել գունաթափ, քան թէ սովորապէս, բայց նորա ժպիտը էր այնքան մեղմ, խաղաղ և անձնանուէր, ինչպէս սովորաբար։ Յովհաննան համարեց իւր անձը կորած, ընկաւ նորա ոտքերը և պաղատագին տարածելով ձեռքերը, արտասանեց այսպիսի խօսքեր․

«Ո՜վ․ ների՛ր ինձ, ողորմի՛ր ինձ, մեղապարտ չեմ ես․ միայն թէ դու հասկանայիր ինձ . . . »

—«Հանգարտի՛ր, սիրելիդ իմ» — շշնջեց Գրեգերսը մի տրտում, բայց և մեղմ ու մխիթարագին ձայնով — «մի՛ լար, ես տեղեակ եմ բոլորին․ դու միա՛յն ես, որ չես հասկանում ինձ․ դու երբէք հասկացած չես ինձ։ Արի՛, ներս գնանք։» Սորանից յետոյ տարաւ նա իւր դողդողուն ամուսինը դէպ ի նորա սենեակը և ինքը դարձաւ դէպ ի իւր ուսումնասիրական սենեակը։ Գալոց առաւօտուն, Գրեգերսը իւր սպասաւորի հետ միասին ճանապարհ ընկաւ, յառաջ քան թէ քնից զարթած էր Ցոլհաննան։

Մի երեկոյ դեկտեմբերի մէջ, մօտ մի ամիս գեներալի դուրս գալուց յետոյ իւր հայրենիքից, Դանիացոց զօրքը հաստատել էր իւր բանակը Գադէբուշ քաղաքի մօտ։ Թէպէտ և մութ էր և ճանապարհները վատ էին, այնու ամենայնիւ բանակի մէջ այն երեկոյին մի անսովոր շարժողութիւն և ներգործականութիւն եղաւ, որ անտարակոյս ցուցանումէր թէ մօտ է մի խորհրդաւոր իրողութիւն։

Գիշերի վերայ հասանելուց փոքր ինչ յառաջ, վերադարձել էր մի դուրս ուղարկած լրտեսների գունդ և լուր էր բերել թէ գեներալ Ստենբօք անուն զօրավարը Շվեդացոց մի մեծ հեռաւորութեամբ մօտեցել է, և թէ, ինչպէս ամենևին հաւանական էր, պատրաստվումէ գալ Դանիացոց վերայ, երբ որ լուսացած էր օրը։ Ադիւտանտներ և հրամաններ վազումէին դէպ ի ամենայն կողմ, ոմանք այն խորհրդով, որ Դանիական զօրապետները հրաւիրեն պատերազմական խորհուրդ կատարելու, միւսերը, որ առանձին զօրաբաժինների հրաման բերեն դուրս շարժվելու։

Արքայ Ֆրիդրիկոս չորրորդը, երկու օր յառաջ, Օլդեսլօէի կողմից հասած էր բանակին։ Նա իջևանել էր Վաքնշտէթ գիւղումը, ուր գնացին գլխաւոր հրամանակալքը որոնց պիտոյ էր մասնակից լինել պատերազմական խորհրդին։ Մի օտարոտի ներհակ տեսարան էր այս տեղ․ մի կողմից այն բոլոր պարոնները որ թագաւորի ներկայութեան պատճառով իւրեանց փառաւոր ոսկեկար և շողշողուն զգեստներով յանդիման էին, միւս կողմից այն ցած ու աննշան գիւղային սենեակը, որի մէջ ժողովը պիտոյ է կատարէր իւր խորհուրդը։

Մի մեծ կրակի բոց բարձրանումէր բաց ծխահանից, և նորա լոյսը ընկնումէր ծեփած կաւեղէն պատերի վերայ, որոնց տուել էր ժամանակը և խոնաւութիւնը մի կանաչ գոյն։ Երկու փոքրիկ պատուհանք,

որոնց ապակիքը բաղխումէր դուրսից հողմը, առանց վարագուրների էին։ Սենեկի յատակը էր կոխոտած կաւից, կարասիքը բաղկանումէին մի երկար տախտակեայ նստարանից և երեք յարդեայ աթոռներից, որ դրած էին սենեկի մէջ տեղումը և ծածկած էին աշխարհացոյցներով և նըկարուածներով։ Երկու աղօտավառ ճարպեղէն ճրագներ տալիս էին հարկաւոր լուսաւորութիւնը։ Բայց ներկայ րոպէն այնպէս խորհրդաւոր էր, որ ոչ ոք ժամանակ չունէր առանձնապէս ուշադիր լինելու իւր շրջակայքին։

Բանախօսութիւնքը այս պատերազմական խորհրդարարութեան մէջ էին փոթորկալից և երկարատև։ Երբ որ Թագաւորը յայտնել էր այն լուրերը որ բերած էին լրտեսքը, յառաջացաւ տարաձայնութիւն նորա և հրամանակալ գեներալ Բեվէնտլովի կարծիքի մէջ։ Գրաֆ Բեվէնտլովը սխալ էր համարում կռիւը այն տեղ բանալ թշնամու հետ, ուր այժմ գտնվումէր զօրքը, ըստ որում հետևակ գունդը կամ չէր կարող մինչև գալոց առաւօտ հաւաքված լինել, կամ թէ ստիպագին ճանապարհորդութենից անպատճառ պիտոյ է վաստակած լինէր, քան թէ կարող էր իւր ժամանակին հասանել պատերազմի դաշտին։ Թող այս· Սաքսոնիայի օգնական զօրքը, երեսուն երկու էսկադրոն ձիաւորք, երեկոյին դեռ ևս վեց մղոն հեռի էին Դանիացոց զօրքից։ Ընդդէմ այս կարծիքին Թագաւորը յարգի կացուց իւր մտածութիւնը, ըստ որում քաջայոյս լինելով բաղդի հաստատութենից, որ արդէն 'Շվեդիայի գլխաւոր կալուածները Գերմանիայի մէջ ձգել էր նորա ձեռքը, շատ պատուական էր տեսանում իւր զօրքի կացութիւնը, այսինքն սարերով լաւ պաշտպանված, անտառներով և մօրուտ տեղերով շրջափակված։ Նա յոյս ունէր, որ գալոց կռիւը յաւելացնելու էր նորա ստացած յաղթութենների վերայ մի նոր լրացուցիչ պարծանք։

Բեվէնտլովը, այս խորամանկ քաղաքագէտը՝ այնքան երկար հաստատ մնաց իւր կարծիքի վերայ, ինչքան որ Թագաւորը կամք չունէր հրաժարվել իւր սեփականից։ Երևումէր թէ նա փոքր առ փոքր կամի համոզվել Թագաւորի բերած պատճառներով։ Նա գլուխ տուեց ժպտելով և ասաց·

«Ես իմ կարծիքն այն է, որ մեք այս տեղ կանգնած մնանք և սպասենք թշնամուն։ Եթէ մեք կը յաղթենք նորան, յաղթութեան բոլոր պարծանքը լինելու էր Ձեր մեծութեանը։»

—«Բոլոր պարծանքը, բայց և բոլոր պատասխանատուութիւնը» շշնջեց նա դէպ ի իւր մօտակայ մարդը, հանգստանալով փայտեայ նստարանի վերայ, սեղանի մօտ։

Բեվեռնալովի տեղատուութիւնը նորա կուսակիցների համար մի նշան էր, թէ նոքա ևս նոյն հոգով պիտոյ է վարվէին։ Մի մարդ դեռ ևս վեր կացաւ ընդդէմ Թագաւորի կարծիքի անուղղութեանը, և այս մի հատ մարդը էր գեներալ-մայիոր Գրեգերս Գաան․ Նա երևեցաւ այս ժողովի մէջ մի փոքր աւելի գունաթափ և ըստ երևութին աւելի ցաւագար քան թէ սովորաբար, աւելի ծանրադէմ, սառն և խիստ քան թէ երբ և իցէ եղած էր յառաջուց։ Նա չկամեցաւ հրաժարվիլ իւր կարծիքից, թէ պիտոյ էր լոյս տալ (փախչել) մի կռուից, յառաջ բերեց պատճառներ պատճառների վերայ և, երևումէր թէ նկատում չէ, որ նորա կուսակիցքը հետ զհետէ փոփոխելով իւրեանց ընթացքը, դարձած էին նորա հակառակորդք։

—Այս ինչ դիւական բան է, պարոն գեներալ-մայիոր․» — վերջապէս ձայն արձակեց Թագաւորը սաստիկ բարկացած նորա սառնամիտ, խաղաղ և հաստատ դիմադարձութեան վերայ — «ձեզ պիտոյ էր ամենևին այլ, ամենևին առանձին պատճառներ ունենալ այդպէս ընդդիմանալու մեզ, քան թէ այն պատճառքն էին, որ դուք մէջ բերեցիք։ Սկսեալ այն միջոցից, երբ որ դուք միացաք զօրքի հետ, ձեր հիւանդոտութիւնը չէ թողել ձեզ մասնակից լինել անցած պատերազմերին․ բայց այժմ, երբ որ դուք, ինչպէս երևումէ, առողջ էիք, դուք որպէս թէ այն մի հատ մարդն էք, որ խորհուրդ է տալիս յետ քարշվիլ կռուից և հաստատումէ այդ առաջարկութիւնը։ Մի՞ թէ վախենումէք դուք պատերազմել Շվեդացոց հետ։»

Այս վշտացուցիչ պատասխանուն և հարցուածին հետևեց մի ընդհանուր լռութիւն։ Ներկայ մարդիկը փոխ առ փոխ նայումէին Թագաւորի և գեներալի վերայ — Գրեգերսի երեսը ևս աւելի գունաթափվեցաւ, նորա աչքերը փայլատակումէին կայծերի պէս և նորա շրթունքը դողումէին բարկութենից։ Նա վեր կացաւ տեղից և ասաց հանդարտութեամբ․

«Տէր Թագաւոր, Ձեր մեծութեան հարցուածին կը պատասխանեմ էգուց․ բայց այժմ ունիմ նոյն կարծիքը, ինչպէս բոլոր միւսերը։»

Այս խօսքերը ասած, գլուխ տուեց նա և դուրս գնաց սենեկից։

Թագաւորը շատ լաւ նկատելով այն անախորժ ներգործութիւնը որ յառաջացուցել էր իւր վշտացուցիչ խօսքը, անունը տալով զանչեց նորան, որ յետ գայ։ Բայց Գրեգերս Գաան չլսելու առնելով հեռացաւ և դուռը փակվեցաւ նորա քամակից։

Երբ որ Գրեգերս Գաան արդէն մի փոքր տարածութիւն հեռացած էր այն դիւղից, ուր ահա ժողովվումէր բանակը, մի քանի րոպէ

դադարեց մի տեղ, որ իբրև թէ մտածէ. Նա ուղղեց մի ցաւալից հայեացք դէպ ի երկինք, և ձեռքով սեղմեց իւր կուրծքը: Ապա ճանապարհ ընկաւ դէպ ի բանակը:

Աղմուկ և շարժողութիւն թագաւորումէր այս տեղ այն բոլոր միջոցին. զօրքի կերակրածախքը այն երեկոյին ունեցած էին առատ եկամուտք: Մեծաթիւ բազմութեններով բանակված էին սոլդատքը պահապանների վառած կրակների չորս կողմ, կամ ուտելով ու խմելով և զրուցելով, կամ թէ քուէ խաղալով մի թմբուկի վերայ: Երգումէին, ծիծաղումէին և խմումէին, կամ թէ պատմելով միմեանց արդէն կատարած քաջագործութիւններ, պատրաստումէին իւրեանց անձը դէպ ի նորանոր վտանգներ: Թշնամիների մօտենալը յայտնի էր ամենեցուն: Գրեգերսը անց կացաւ ամբոխի միջից, մինչև հասաւ նա վերջին վրաններից մինին: Այն տեղ դադարեց նա մի քանի րոպէ, ականջ դընելով, և ներս մտաւ յետոյ:

Կապիտէն Քրուզէն նստած էր մի սեղանի մօտ, որ դրած էր նորա զինուորական մահճակալի մօտ: Գլուխը բռնած երկու ձեռքերով անշարժ նայումէր մի բաց նամակի, որ նորա առաջև դրած էր սեղանի վերայ: Նա այնպէս խորասոյզ էր եղել նամակի բովանդակութեան մէջ, որ գեներալի գալուստը չնկատեց, մինչև սա կանգնած էր սեղանի մօտ: Նոյն րոպէին Քրուզէն թաքրեց նամակը և վեր կացաւ տեղից, զինուորական կարգին համեմատ ողջոյն տալով զօրապետին:

— «Արդեօք խանգարեցի՞ ձեզ» — հարցրեց Գրեգերսը:

— «Ոչ.» — պատասխանեց Քրուզէն, նկատելի կերպով խռոված:

— «Նամա՞կ էք ստացել դուք:»

— «Ոչ.»

— «Ինչպէս ոչ. դուք կարդումէիք մի նամակ, երբ որ ես ներս մտայ:»

— «Այդ նամակը վեց տարի յառաջ գրած է.»

— «Ճշմարիտ, և դա այդքան ժամանակից յետոյ պահել է դեռ ևս այնքան քաղցրութիւն ձեր համար, որ դուք առել էք նորան ձեր հետ դէպ ի պատերազմի դաշտը, և իսկապէս այս երեկոյիս պիտոյ է կարդայիք:»

— «Այդ նամակը յիշատակ է մի կորուսեալ բարեկամի, մի սիրելի հանգուցելու: Յայտնի է ձեզ, տէր զօրապետ, որ սիրտը իւր յիշողութիւնը չէ չափում տարիներով, այլ միայն կշռումէ միտ դնելով այն արժանաւորութեանը, որ ունէր մեր համար պարգևողը:»

— «Ոչ, այդ չգիտեմ ես.» — պատասխանեց Գրեգերսը — «ես չունիմ ոչինչ յիշատակ, ոչինչ յիշողութիւն։»

Քրուգէն ապշեցաւ այն դառն և տրտում ոճի վերայ, որ ամփոփւումէր այս բառերի մէջ։ Գրեգերսը յաւելացրեց.

«Ես եկել եմ հրաւիրելու ձեզ այս երեկոյիս գալ իմ մօտ, մի գործի պատճառով, որի վերայ կամէի ձեր հետ խօսել։ Ունի՞ք ժամանակ։»

— «Այո, պարոն զօրապետ։»

— «Բարի է. ուրեմն մի ժամից յետոյ, բայց ոչ անագան, եկեցէք իմ վրանս եղևնատունկ անտառի մօտ։»

— «Գալու եմ։»

Գրեգերսը ողջոյն տուեց և հեռացաւ, երբ որ արդէն աչք էր ձգել այն սեղանի վերայ, ուր Քրուգէն թաքուցել էր նամակը։ Բայց սորա հակառակ, կապիտէնը մնաց մտածութեան մէջ, չհասկանալով զօրապետի այցելութեան խորհուրդը։ Վերջին միջոցներումը, Գրեգերսը երևութաբար փախել էր ամենայն հաղորդակցութենից կապիտէնի հետ. թող այդ, մի հարկաւոր պաշտօնական խօսակցութեան մէջ երևումէր զօրապետի կերպարանքումը մի խիստ ու անախորժ բան, որ անտարակոյս պիտոյ է ցուցանէր մի խաւար, թշնամական տրամադրութիւն դէպ ի նա։

Մի ժամից յետոյ, ինչպէս սահմանադրած էր, ներս մտաւ Քրուգէն զօրապետի վրանը։ Նա գտաւ նորան նստած մի սեղանի մօտ, որի վերայ դրած էին երկու թափանչա և մի կնքած նամակ։ Գրեգերսը ակնարկեց դէպ ի նա և հրաւիրեց նորան հանգստանալ մի աթոռի վերայ, որ դրած էր սեղանի մօտ։

— «Լսած էք արդէն» — ձայն արձակեց նա — «էգուց պիտոյ է կռիւ լինի։»

— «Այո,» — պատասխանեց Քրուգէն — «փառք Աստուծոյ։»

— «Այդպէս մտածումէի և ես ձեր հասակումը, և ինչպէս հաւանական է, այժմ ևս մտածելու էի այդպէս, եթէ նոյնպէս միայն լինէի աշխարհի վերայ, ինչպէս դուք, և իմ կեանքս կապած չլինէի մի այլ մարդու հետ։»

— «Դուք մտածումէք ձեր ամուսնու վերայ, որ մնացել է տանը։»

— «Այո, և գուցէ զարմանումէք դուք որ ես յատկապէս այս երեկոյիս մտածումեմ նորա վերայ» — սաստկութեամբ հարցրեց Գրեգերսը։

— «Ոչ. ամենևին ոչ.» — պատասխանեց Քրուգէն զարմացած — «և ինչո՞ւ պիտոյ է զարմացնէր ինձ այդ բանը։»

— «Դուք չէք ասում ճշմարիտը, պարոն կապիտէն։ Բոլոր ադամորդիների մէջ դուք միայն էք, որ կարող էք համարձակվել այդպիսի զարմանքի տեղիք տալ։ Դուք միայն» — յառաջ տարաւ խօսքը մի այնպիսի ձայնով որ հնչումէր դատարկ և դժուարութեամբ դուրս էր ճըլնշվում նորա ատամների միջից — «որ սիրումէք Ցովհաննան և նոյնպէս… սիրելի էք նորան։»

Պրուզէն առաջին րոպէումը մնաց այն տեղ անխօս ու անբարբառ, որ միջոցին Գրեգերսը երևութաբար պատերազմումէր ինքը իւր հետ, որ վերստին գտանէ իւր առաջին խաղաղութիւնը։

— «Այժմ հասկանումեմ ես նորան.» — մտածումէր Քրուզէն ինքը իւր մէջ — «նա գիտէ բոլորը և կամի սպանել ինձ։»

Երբ որ այս մտածութիւնը յառաջացել էր նորա մէջ, զօրացաւ իսկոյն և ստուգվեցաւ Քրուզէի սրտումը։ Այն խորին լռութեան մէջ որ այժմ թագաւորումէր վրանումը, լսումէր նա զօրապետի հառաչանքը շնչառութեան միջոցին, և տեսաւ որ դողումէին նորա բազուկները որոնց վերայ հաստատվել էր նա։

— «Ի՞նչ ունիք պատասխանելու ինձ» — հարցրեց Գրեգերսը։

Պրուզէն բարձրացրեց գլուխը և ասաց.

— «Ինչ որ ասացիք դուք, պարոն զօրապետ, ուղիղ է. ես սիրումեմ Ցովհաննան։»

Այս խօսքը չփոխեց զօրապետի կերպարանքը, այլ մանաւանդ հարցրեց նա.

— «Ո՞ր ժամանակից սկսած է ձեր սէրը։»

— «Սկսեալ իմ երեխայութենից ես սիրած եմ ձեր ամուսինը։ Նա էր առաջինը և մի հատիկը, որ ես սիրած եմ և սիրելու եմ։ Այժմ, տէր զօրապետ, այս բաց խոստովանութենից յետոյ սպասումեմ միայն թէ ի՛նչ ունիք դուք ասելու ինձ։ Ես պատրաստ եմ դէպ ի ամենայն ինչ» — յաւելացրեց նա, աչք ածելով այն թափանցաներին որ դրած էին սեղանի վերայ — «ես վաղուց արդէն պատրաստ էի դէպ ի ամենայն ինչ. այն միջոցին, երբ որ դուք եկաք իմ վրանը, գուշակեցի ես, որ թէ յառաջ և թէ յետոյ պիտոյ է գործը այսպէս վերջանայ։»

Գրեգերսը լուռ կացաւ մի քանի րոպէ. յետոյ ցնցեց թիկունքը և ասաց.

— «Դուք սխալվումէք, կապիտէն. ես չունիմ դիտաւորութիւն ձեզ սպանելու, և ոչ իսկ մտածել եմ այդ բանը, երբ որ եկած էի ձեր մօտ. ապա թէ ոչ. վաղուց արդէն պատահած կը լինէր այդ։ Երեք տա-

րի արդէն, Ճղբայր Քրուզէ, գիտէի ես, որ դու և Յովհաննան սիրումէիք իրեար. բայց ես գիտէի և գիտեմ այժմ ևս, որ այդ ծածուկ սէրը մնացել է միշտ անարատ։» — Նա մատուց ձեռքը Քրուզէին և յառաջ տարաւ խօսքը. — «Անբախտ մարդիկ, ինչպէս կարող էիք դուք սառն մնալ, եթէ սէրը լցուցանում էր ձեր սիրտը։ Դուք, որ մանուկ և Աստուծուց սահմանած էիք մինը միւսի համար։ Սխալանքը այն էր, որ ոչ ոք չզգաստացրեց ինձ մինչդեռ ժամանակ կար։ Ես տեսանում էի այն զրկանքը, որին դուք երկուքդ համբերում էիք, ես լսում էի այն վերջին խօսքը, այն հառաչանքը, երբ որ դուք բաժանվում էիք միմեանցից. Ես գիտէի ամենայն բան։ Բայց ինչ որ դու չգիտէիր, իմ որդի, էր այն, որ և ե՛ս սիրում էի Յովհաննան։»

— «Ի՛նչպէս... Դո՞ւք.» — բացագանչեց Քրուզէն։

— «Այո՛, այս զարմացնում է ձեզ, այդպէ՞ս չէ.» — խօսքը յառաջ տարաւ Գրեգերսը մի տխուր ժպիտով — «ես մի ալևոր եմ որ ոչինչ այլ իրաւունք չունի այն անմեղ կնամարդու սրտի վերայ, եթէ ոչ մի դիպուածական և իշխանական իրաւունք։ Այնու ամենայնիւ ես սիրած եմ նորան մի այնպիսի սիրով, որ կարող էր իւր զօրաւորութեամբը չափվել քո սիրու հետ։ Նա միայն էր, այն վերջին օղն էր նա, որ դեռևս կապում էր ինձ այս կեանքի հետ. իմ սիրտը մանկացաւ այս սիրովը որ, չը նայելով ամուսին մարդու իրաւունքին, միշտ պահել է սիրողի քնքուշ փայփայողութիւնը։

— «Դուք սիրո՞ւմ էիք նորան.» — կրկնեց Քրուզէն, որպէս թէ պիտոյ էր նորան երկրորդել այս բանը, որ կարողանար հասկանալ այդ ասացուածի հնարաւորութիւնը։ Բայց այդ բանը երբէք գուշակած չէ Յովհաննան։

— «Ու մի՛ թէ կամէիք դուք, իմ բարեկամ, որ ես յայտնէի ձեզ իմ սրտի գաղտնիքը, թէպէտ գիտէի ես յառաջուց, որ նա կարող չէր փոխարինել իմ զգացողութիւնքը։ Ցածումը, այգու տակից, նոյնպէս յաճախ ինչպէս դու, անդարձ աչքով նայած եմ ես դէպ ի նորա պատուհանքը, մինչև կը շիջանէր ճրագը։ Ես զգում էի իմ անձը արբեցած, ներս շնչելով այն անուշահոտութիւնը որ նա դուրս էր բուրում. բայց ես աւելի չափաւոր էի քան թէ դու. պատճառ, դու պատմում էիր նորան քո սէրը, բայց ես հազիւ թէ համարձակվում էի այդ բանը խոստովանել ինձ անգամ. և Յովհաննան չէ իմանալու դորան, մինչև ես մեռած չէի։»

Այժմ Գրեգերսը մի քանի րոպէ լռեց և անդարձ աչքով նայում էր վրանի դատարկ տարածութեան մէջ։ Քրուզէն չկարողացաւ պատասխանել. այսպէս ահա լցուած էր նորա սիրտը այն խօսքերից որ մի քանի րոպէ յառաջ լսած էր զօրապետի բերանից։

Սորանից յետոյ խօսքը յառաջ տարաւ Գրեգերսը·

«Էգուց երթալու ենք կռիւ, կամ թէ կ՚ընդունենք նորան, եթէ առաջարկեց մեզ թշնամին։ Կարելի է, որ ես մինչև երեկոյ կենդանի չը լինիմ· այո՛, հաւանական իսկ է։»

— «Հաւանակա՞ն·» — կրկնեց Քրուզէն։

— «Այո՛, իմ բարեկամ» — պատասխանեց Գրեգերսը հանդարտութեամբ· — «ինչպէս դու մի փոքր յառաջ ասացիր, այս աշխարհում ունի մարդ իւր գուշակութիւնքը· ապա թո՛ղ ընդունենք, որ և իմ գուշակութիւնքը կատարվելու են։ Եթէ կատարվեցան սոքա, այդ դիպուածի համար ունիմ ես այս տեղ մի նամակ, որ յանձնումեմ քեզ· լաւ պահիր նորան, դա իմ կտակս է։ Իմ դիտաւորութիւնը էր, որ դու մի քանի ժամանակ անգէտ մնայիր այդ մասին, բայց այժմ այլապէս եմ որոշել ես։ Երբ որ ես մեռած էի, ապա պիտոյ է քեզ վերադառնալ դէպ ի Հայք։ Սա չէ այնուհետև բանալու քեզ իւր դռները, որ ընդունէ քո հառաչանքը և դանդատները, այլ դու իբրև տէր և իշխան ներս կը մտանես այն տեղ։ Ես տալիս եմ քեզ Յովհաննան, և դու ստանալով նորան ինձանից, ստանումես ամենայն բան· պատճառ, իմ գոյքը պատկանումէ ձեզ երկուքիդ, ըստ որում ես անզաւակ եմ և իմ ազգատոհմի վերջին սերունդը։ Բարձրացրո՛ւ գլուխդ, իմ որդի, և ուրախ կաց· ընդէ՞ր կամիս այժմ տրտում լինել և վհատվիլ։ Յովհաննան պիտոյ է լինի քո սեփականը որպէս փոխարէն նորա հաւատարմութեան և քո զոհկանքի։ Ձեզ պիտոյ է սիրել իրեար· այս է իմ վերջին պատուէրը ձեզ երկուքիդ, ինչպէս և իմ վերջին ցանկութիւնն էր, իմ վերջին խնդիրը քեզանից, որ դու, ինչքան կարելի է, վերստին հատուցանես նորան, ինչ որ ես պարտական եմ մնացել։

Գրեգերսը դրեց իւր ձեռքը կոր ի գլուխ եղած կապիտէնի վերայ, և սա վայր ընկաւ այժմ նորա առաջև դէպ ի գետին, ծնկերի վերայ։ Բայց զօրապետը բարձրացրեց նորան իսկոյն, գրկախառնեց նորան, և երկուքը ևս թափեցին ջերմ արտասուք։ Անտարակոյս, մի շատ սրտառուչ տեսարան էր երկու նախանձաւորների մէջ, որ այս տեղ որպէս ամուսին և սիրող մի և նոյն կնոջ, երես առ երես կանգնած էին մինը ներելով և միւսը հրաժարվելով։

— «Ո՛վ իմ Աստուած·» — ձայն արձակեց Քրուզէն — «այժմ հասկանումեմ ես բոլորը· դուք կամիք ձեր գլուխը մահու տալ։»

— «Ոչ· ամենևին ոչ, իմ բարեկամ» — ասաց Գրեգերսը — «ես կը մեռանիմ պատերազմի մէջ· ահա՛ բոլորը։ Ես հաւատումեմ, ինչպէս ասացի, իմ գուշակութեններին, և պարտական էի ձեզ երկուքիդ, ինչ

որ տնօրինեցի։ Ե՛րթ այժմ, իմ որդի, և տար քո հետ այս նամակը. այժմ կամիմ ես մի փոքր միջոց միայնակ լինել։»

Այս բառերը ասած, զօրապետը բացեց վրանը և դուրս խթեց դիմադարձ կապիտէն Քրուզէին։

Միւս օրին, մօտ ճաշի ժամուն սկսվեցաւ կռիւը Գադէբուշի մօտ։ Քրուզէն առաւօտուն երկու անգամ գնաց զօրապետի մօտ, բայց սաննբողութիւն խնդրեց, թէ չէր կարող ընդունել նորան, ըստ որում զբաղված էր։ Շուտով հնչեցին թմբուկները և եղջիւրները, գանչելով զօրականքը դէպ ի պատերազմ, և կապիտէն Քրուզէն ստիպուեցաւ հետևել հրաւիրական ձայնին։

Երբ որ Գրեգերս Գաան ձիու վերայ նստած անցանումէր զօրապետ Րեվենտլովի մօտից, որ հասանէ այն գունդին, որին առաջնորդումէր, դադարեցրեց իւր ձին, դարձուց երեսը դէպ ի դերադոյն հրամանատարը և ասաց նորան մեղմ ձայնով, այնպէս որ շրջակայ մարդերից ոչ ոք կարող չէր հասկանալ նորա ասածը.

— «Տէ՛ր զօրապետ, մի խնդիր ունիմ ձեզանից։»

— «Ինձանի՞ց» — ձայն արձակեց Րեվենտլովը զարմացած։

— «Այո՛» — խօսքը յառաջ տարաւ Գրեգերսը — «ես խնդրումեմ ձեզանից այն բարեկամութեան անունով, որի փորձերը այնքան շատ ստացած եմ ձեզանից, անտես չառնել իմ խնդիրը։»

— «Ձեր խնդիրը շնորհած է, տէր զօրապետ, այն պատճառով ահա, որ դուցէ թէ դալոց ժամին կարող չէի ես աւելի կատարել որ և իցէ բարեկամի խնդիր։»

— «Երրորդ ազգային զօրագունդի մէջ, մեր զօրքի ձախ թևումը հրամայումէ մի կապիտէն Քրուզէ։ Ցանկալի է ինձ, որ ինչքան կարելի է, խնայեն նորա կեանքը։ Որպէս փոխարէն նորա կեանքի թող զոհ բերվի մի այլ կեանք։»

— «Հազարապետ» — ձայն տուեց Րեվենտլովը իւր մերձակայ պաշտօնակալներից մինին. Թող տուեցէք, որ երրորդ ազգային զօրագունդի մի հատուածը կապիտէն Քրուզէի հրամանի տակ դուրս խաղայ պաշտպանելու այն սարաբլուրը, ուստի նորին մեծութիւնը կառավարումէ կռուի շարժողութիւնքը։»

Հազարապետը խթեց ձիու կողքը և հեռացաւ։ Գրեգերս Գաան շնորհակալ եղաւ Րեվենտլովից առ ի սրտէ երախտապարտութեամբ, և ապա հետևեց զօրագունդին։

Դանիական զօրքը ճակատ էր յօրինել մի սարաբլուրի վերայ, մի մօրի (ճահճոտ տեղի) քամակում. ձախ թևը պատսպարված ու պաշտպանված էր մի գետով, բայց աջը մի մեծ և խիտ եղևնեայ անտառով: Կռուի սկսանելուց երկու ժամ յառաջ, վերայ հասաւ Սաքսոնական հեծելազօրը և միացաւ Դանիականի հետ: Շվեդացիք սկսեցին կռիւը մի սաստիկ ումբարձակութեամբ և արշաւեցին դէպ ի սարաբլուրը, ձայնարկելով — «Աստուած իմ և Յիսուս, օգնութի՛ւն:» Մի փոքր միջոցից յետոյ բոլորը ծածկվեցաւ փոշով ու վառօդի ծխով, որ հողմը տարաւ զարկեց թշնամու երեսին: Հրացանների շառաչիւնը խառնվեցաւ թնդանօթների որոտի հետ. օրհասական եղջիւրները հնչումէին, թմբուկները գոռումէին և մարդիկը մորթումէին միմեանց:

Մի հին յիշատակարան վկայումէ, որ կռիւը մեծ արիւնհեղութեամբ տևել է մինչև հինգ ժամը ճաշից յետոյ, ըստ որում ոչ ոք երկու կողմից չկամէր ոչ ներողութիւն տալ և ոչ առնուլ. և այս պատճառով շատ սակաւ մարդիկ գերի ընկան. այլ և պաշտօնակալքը կռվումէին միմեանց հետ մենամարտութեամբ, այնպէս որ Շվեդացիք և Դանիացիք մեռած և վայր ընկած միմեանց մօտ գտած էին դիակնադաշտի վերայ: Նոյն յիշատակարանից իմացվումէ, որ Շվեդքը երեք անգամ յարձակված են սարաբլուրի վերայ. վերջին անգամը յաջողվեցաւ նոցա ամրանալ նորա ոտքումը, և Դանիացիք չկարողացան խափանել այդ բանը: Երկու այդպիսի փորձեր անյաջող կացուցին Շվեդացիք. Սաքսոնական հեծելազօրը յետ քարշվեցաւ և վերջումը փախաւ ճակատամարտից: Ստենբօք զօրագլուխը Շվեդացոց յառաջ գնաց իւր բազդի ասպարէզի մէջ, և միշտ նոր զօրութիւնք էր ուղարկում դէպ ի այն տեղ: Հուսկ յետոյ Դանիացիք սկսեցին յետ քարշվիլ. թշնամիների թնդանօթքը լցուցած երկաթի կտորտանքով և մանր գնդակներով և արձակվելով կարճ հեռաւորութեամբ յառաջուցին մի ահարկու ներգործութիւն:

Նոյն րոպէին տեսան ահա, որ մի գունդ Դանիացի ձիաւորների, և նոցա առաջնորդ մի բարձրահասակ նիհար մարդ, սարաբլուրից ներքև շտապելով, երրորդ անգամ փորձ էր փորձում, հալածել թշնամին իւր ձեռք բերած կացութենից: Ձիաւորքը երկու կողմից ճանճերի պէս վայր էին թափվում թշնամական գնդակների երեսից, բայց միւսերը յառաջ ընթանալով յարձակվեցան թշնամու վերայ, զօրապետը նոցա գլխին: Լռեցին թնդանօթքը. հրացանները և թափանչաները յառաջ տարան կրակաթափութիւնը: Ուրախագին ձայներ, վիրաւորված ձիաների խրխընջիւնը, աղօթք, մեռանողների աղաղակք և քաջալերութիւնք հնչումէին խառնիխուռն ամբոխի միջից, որ շրջափակված էր փոշով և վառօդի

ծխով, որի միջից փայլատակումներ շողշողուն սուրերը բարձրանալով և ցածանալով: Բարձրահասակ Դանիական զօրապետը կռուումէր ինքը ամենախիտ ամբոխի մէջ և ասես թէ անխոցելի էր:

Մի փոքր հեռուից Ֆրիդրիկոս Թագաւորը ականատես էր բոլոր գործողութեանը: Նա տեսաւ այն երկու անյաջող փորձերը, որ արած էին, թշնամին հալածելու. Նա նկատած էր և Դրագոնները որ նոյն բանը փորձումէին երրորդ անգամ: Գրեգերս Դասայի անունը լսվեցաւ բոլոր շրջակայ մարդերի բերանից, և դա էր այն զօրապետը որ փութացել էր գործով կատարել իւր խոստումը:

Շվեդացիք մնացին շուարված այս կատաղի կռուի վերայ, նոքա սկսեցին վերջումը տեղի տալ. զուր էր Ստենբօքի ուղարկելը նոր, նպաստամատոյց զօրութիւն. պատճառ, յառաջ քան թէ այդ գունդը կը հասանէր ճակատատեղին, ցանուցիր լինելով, անկարգութեամբ փախստական եղաւ, և շուտով լռեցան այն մրճաղարկութիւնը որով Դրագոնները բռնելով անգործ կացուցին Շվեդացոց թնդանօթքը: Բայց նոյն իսկ ճակատատեղումը մեռածների և վիրաւորվածների ահագին բազմութեանից շրջապատած, կիսամեռ դրած էր Դանիացոց զօրապետը, Գրեգերս Դասան, որին հասել էր մի թափանչայի գնդակ այն միջոցին, երբ նա մի Շվեդական աստիճանաւորի ձեռքից խլումէր դրօշակը:

Այս միջոցին կրկին հաւաքվեցան Դանիացիք. կռիւը նորոգվեցաւ և յառաջ տարվեցաւ երկու կողմից ևս, մի և նոյն կատաղութեամբ, ինչպէս յառաջ: Դրագոնները այժմ դուրս տարան կռուի ամբոխի միջից իւրեանց վիրաւոր զօրապետը. նորան բերեցին այն գիւղը և դրեցին նոյն տան մէջ, որ վկայ էր եղած նորա անարգութեանը:

Ֆրիդրիկոս Թագաւորը մօտեցաւ նորա մահճին, խոնարհեցաւ նորա վերայ, մատուց նորան իւր ձեռքը և ասաց.

—«Ի՜նչպէս ցաւումեմ ես ձեր անբաղդութեան վերայ, պարոն զօրապետ: Ես ուղարկել եմ պալատական բժշկի քամակից, որ իսկոյն այս տեղ կը լինի: Նա ամենայն կերպով հոգաբարձու կը լինի պահպանել ձեր թանգագին կեանքը իմ և հայրենիքի համար:»

—«Դուք սխալվումէք, թանգագին Թագաւոր և տէր» — պատասխանեց Գրեգերսը սպառված ձայնով — «բժիշկը ոչինչ կարող չէ անել. ես գիտեմ այդ և պատրաստ եմ մեռանել: Եթէ Ձեր մեծութիւնը եղած լինէիք ինձ հաւասարակից մարդ, երբ որ դուք երեկ, երեկոյին տարակոյս ունէիք իմ քաջասրտութեան վերայ և անպատիւ արեցիք ինձ, ապա ես սպանած կը լինէի ձեզ. բայց որովհետև դուք իմ տէրն էք, ապա ի՛նձ պիտոյ էր սպանել տալ իմ անձը: Գնդակը նստած է իմ կուրծքի մէջ, և իմ ցանկութիւնը կը կատարվի:» —

Թագաւորը խօսեց այլևս մի քանի մեղմ բառեր, յայտնելով իւր խորին մեծարանքը դէպ ի մի տղամարդու քաջասրտութիւն, որ նորա մի անզգոյշ խօսքից գնացել էր դէպ ի մահ։

Երբ որ Գրեգերսը աւարտել էր իւր խօսքը, դարձուց երեսը Թագաւորից։ Նորա աչքերը հանդիպեցան Քրուզէին, որ միւս կողմից, նորա մահճի մօտ ծունր էր չոքել։ Մի քաղցր և երանական ժպիտ խաղումէր մեռանողի գունաթափ երեսի վերայ. նա պարզեց ձեռքը դէպ ի Քրուզէն և ասաց նորան գրեթէ անբարբառ ձայնով.

«Ահա՛ տեսանումես դու, որ իմ գուշակութիւնը սխալ չէ։ Այսուհետև երջանիկ կը լինի Յովհաննան, և դու ևս։ Արժան է ձեզ սիրել միմեանց . . . միշտ . . . անփոփոխելի։ Երբ որ դուք ձեր անձը շատ երջանիկ էք զգում . . . ապա մտաբերեցէ՛ք միանգամ . . . և ինձ . . . մի ծեր մարդ որ չգիտէր թէ փակումէ ձեր ճանապարհը։ Ես խափանարար էի ձեր բաղդաւորութեանը . . . բայց երբ որ իմացայ ճշմարտութիւնը, ահա երթումեմ աշխարհից։ — Բարեաւ մնա, իմ որդի. քաղցր կացիր Յովհաննայի հետ, որ սիրելի է մեզ երկուքիս։ Բարեաւ մնա։»

Գրեգերսը կցեց ձեռքերը, արձակեց մի խոր հառաչանք և դուրս փչեց իւր ազնիւ հոգին։

* * *

Գ.

ՎԵՐՋԱԲԱՆ

Այս խռովութիւններից յետոյ, երկու ամիս անցած, նստած էին երկու անձինք միասին մի սենեկի մէջ Հալդումը։ Սոցանից մինը էր Յովհաննան, միւսը Կապիտէն Քրուզէն, որ այն օրին զօրապետի մարմինը բերել էր Հոլստէյնից, որ նա ամփոփվի Վիբօրգի մայր եկեղեցումը, ուր հանգուցելու ազգատոհմի գերեզմանատեղն էր։

Յովհաննան կարդացել էր արդէն այն նամակը որ Գրեգերսը այն երեկոյին գրել էր բանակի մէջ։ Քրուզէն պատմեց բոլորը մանրամասնաբար, ինչ որ նորա և զօրապետի մէջ պատահել էր վրանումը։ Յովհաննան արտասուեց։ Երբ որ վերջումը լռեց և Քրուզէն, մի երկար հանդարտութիւն թագաւորեց սենեկի մէջ։

Վերջապէս Յովհաննան պարզեց դէպ ի նա ձեռքը և ասաց սաստկութեամբ.

— «Թո՛ղ ինձ այժմ, իմ բարեկամ, ես ցանկանումեմ միայնակ լինել։»

Յովհաննայի բառերի մէջ բացայայտվումէր մի այնպիսի ծանրութիւն և հաստատութիւն, որ զարմացաւ Կապիտէնը․ բայց սա Յովհաննայի ձեռքը ամուր պահեց իւր ձեռքի մէջ, և ասաց․

—«Ե՛րբ կարող էի միւսանգամ գալ։»

—«Ո՛չ երբէք․» — պատասխանեց Յովհաննան հեզ և խաղաղ ձայնով — «պատճառ, այսուհետև ես չեմ սիրում քեզ։»

Գրուզէն մնաց այն տեղ քարացած․ յետոյ շշնջեց մի այնպիսի ձայնով, որի մէջ կարելի էր նկատել յուսահատ սրտի դողիւնը։

«Այդ ի՛նչ ես ասում, Յովհաննա․ — մի՛ թէ մոռացել ես դու քո գրած ուխտը, քո հաւատացուցիչ խօսքերը, թէ ոչ ոք կարող չէր բաժանել մեզ իրեարից, երբ որ դու չէիր աւելի պատկանելու նորան։»

— «Ո՛չ․ մոռացել չեմ» — պատասխանեց Յովհաննան — «բայց այժմ ես պատկանումեմ նորան, առաւել քան թէ երբ և իցէ յառաջ։ Ե՛րթ այժմ, Յակոբ Գրուզէ, ես խնդրումեմ քեզանից։ Այժմ բաժանումէ մեզ ոչ թէ կենդանին, այլ մեռածը։»

Այս խօսքից յետոյ, թողեց նա սենեակը։

Ո՛վ զարմանալի փոփոխականութիւն կանացի սրտի։ Յովհաննան հաստատ կացաւ իւր խօսքի վերայ, մնալով մի տրտում, միայնակ այրի մինչև իւր մահը որ հասաւ նորան մի քանի տարի յետոյ։

Մի տարի անցած, երբ որ Սոմերսէթը յետ էր քարշվել դէպ ի Թեօննինգեան ամրոցը Նյդերսմէդի մէջ, սպանվեցաւ Գրուզէն այն միջոցին, յորժամ Դանիացիք պաշարել էին յիշեալ ամրոցը։ Մեռաւ Գրուզէն մի Շվեդական գնդակից միջաձեղք լինելով որպէս հայրենական պարծանքի նահատակ։

Ս․ Նազարեանց։

ԱՌՕՐԵԱՅ ԱՇԽԱՐՀ։

Ի՛նչ ես գոռում, ի՛նչ խնդրում,
Դու անհանգիստ հեղինակ.
Մեզ խաղալիք շինեցիր,
Ողջ աշխարհի խայտառակ.

Լաց ես լինում, հառաչում,
Գանգատդ անգամ յիմար է,
Թէ աշխարհն իւր գործերով,
Բոլորովին փոխվել է։

Աշխատումես մի կերպով
Խաղաղութիւն վրդովել,
Խլել մեր հանգիստ քունը,
Սրտերիս մէջ դող ձգել։

Չենք կամենում լսել քեզ,
Թո՛ղ մեր ճաշն ուտենք հանգիստ,
Յետոյ խաղաղ քուն լինինք....
Հեռի՛ գնա մեզանից։

Մի՛ գոռար, մի՛ որոտար,
Մա՛րդ եղիր և դու մեր պէս.
Վերացական խօսքերով
Մի՛ գար միւսանգամ հանդէս։

Մեք առօրեայ բաների
Ծառայումենք անդադար,
Դու ինչե՞ր ես մտածում,
Դրական է այս մեր դար։

Քո բարձր ճշմարտութեան
Ճառագայթները փայլուն,
Չեն տանելի մեր աչքին,
Ատելի են մեր հոգուն։

Ճ՛անաչումենք, հաւատում,
Բայց չկամինք խոստովանել.
Պատճառ, նորա շփոթումեն
Մեր երջանիկ կեանքի թել։

Մեք կամինք կեանք վայելել.
Ուրեմն ի՛նչ հարկի համար,
Մեզ պիտոյ էր ծառայել
Ճշմարտութեան անպատճառ։

Մինչդեռ և առանց նորան,
Մինչ լոկ սուտի շնորհքով
Այս աշխարհի բարութեան
Մի մասը վայելելով,
Կարելի էր Աստուծոյ
Փառաւորել անունը.
Եւ չթուլանալու համար,
Եւ մարմինը պահելու,
Երբեմն մի փոքր զրկել....
Երբեմն մի փոքր գողանալ...։

Չխռովելով մեր խիղճը,
Չաղմկելով մեր հոգին,
Տո՛ւր մեզ տաղեր, վէպ, առակ,
Հաճոյացիր մեր սրտին.
Թո՛ղ դատարկ բաներ լինին,
Մարդու վէրք տալ չունենան,
Թեթև ու ծիծաղաշարժ,
Փորերս փոյթ չէ թող շարժ գան։

Հանգստութեան միջոցին,
Մարսողութեան լաւ ժամին
Դու դատաւոր մի՛ նստիր
Խրատներով մեր գլխին։

Վշտաբեր ակնարկութիւնք,
Հեռի՜, նեղիչ գաղափարք.
Մի՛ լինիր դահիճ մոլութեան,
Որ չլինիս դահիճ մարդերին։

Կոմս Էմմանուէլ։

ՑԻՐՎԱՏԱԿԱՐԱՆ

Կոմս Էմմանուէլի օրագրական թերթերից։

—

Մայիսի 1։ Մտածումեմ, թէ մինչև ո՞ր աստիճան ողբալի էր կասկածամիտ մարդերի դրութիւնը. այդ բանի քանի օրինակները տեսած եմ։ Խեղճ ողորմելիքը չէին կարող հաց ուտել հանգիստ, ամեն մի չնչին բան վրդովումէր նոցա փոքրիկ հոգու խաղաղութիւնը, ծառի տերևների շարժողութիւնը կայծակնաբեր որոտմունքի նման բան է այդ մարդերի համար։ Ով որ չէ նկատել այս բանը, թող ուշադիր լինի, և տարակոյս չունիմ, որ ցաւելու էր թէ ինչ պատճառով բնութիւնը այդպէս վշտացուցել է այդ մարդերին։ Դոցա մէջ թագաւորված է մի սոսկական երկիւղ, երկիւղ օտարից, երկիւղ ազգականից, երկիւղ ընտանիքից, երկիւղ բարեկամից, երկիւղ թշնամուց, հեռաւորից և մերձաւորից և սեւս թէ դոքա ինքեանք մի կերպարանված երկիւղ լինէին, սեւս թէ երկինքը այն պատճառով հաստատ պահել էր իւր կամարակապ տարածութիւնը, որ կործանվելով մի այդպիսի մարդու գլխի վերայ, չքացնէր նորան։ Ցաւելի մտածութիւն. արդեօք կա՞յ մի բնական պատճառ, որ այդ մարդիկը ստանումէին այդպիսի սոսկական ուղղութիւն հոգու։ Եւ այդ պատճառը պիտոյ էր որոնել նոցա կազմուածքի մէջ ֆիզիկաբար, թէ լոկ բարոյական պատճառների մէջ. արդեօք ա՞յդպիսի մարդիկ շատ հարստահարված էին, կամ շատ խաբված, որ այժմ մատնվել էին այդ ողորմելի վիճակին. թէ չարագործ, ննջաւոր և այլ յանցանքների տէր լինելուց, մի խօսքով հոգու անբարոյականութենից յառաջանումէր այդ կասկածամտութիւնը։

Մտածութիւնքս կտրվեցան թղթաբերի ներս մտանելով, և ահա ստացած նամակիս բառացի պատճէնը. — «Ողորմած Պարոն, Կոմս Էմ- « մանուէլ. Ապրիլի 14, 1858. Բեդուտկալէ։ Իմ ձեռքը հասած Հիւ- « սիսափայլ անունով օրագրի մի քանի համարներից տեսանումեմ, որ « դուք գործակից էք այդ օրագրին. ուրախ եմ և հոգւով չափ ուրախ, « որ ձեր կոչումը և դրութիւնը աշխարհի երեսին խափան չէ ձեզ մի « ազգային և բարի գործի մասնակից լինելու. երանի՜ թէ ես ևս կարո- « ղանայի մի կերպով օգտակար լինել այդ ընդհանուր ազգային գործի « յառաջադիմութեանը. այո՛ ցանկանումէի երբեմն երբեմն տեղեկու- « թիւնք տալ այդ պատուական օրագրին, բայց երկբայումեմ, մի գուցէ « պարոն Հրատարակողը տեղ չը գտանէ իւր օրագրի մէջ իմ գրած բա-

«ների համար։ Ես ծանօթութիւն չունենալով ոչ Պ. Հրատարակողի և ոչ
«Պ. Նալբանդեանցի հետ, որ, ինչպէս տեսանում եմ, պիտոյ է գլխաւոր
«աշխատակից լինի Պ. Հրատարակողին, գրում եմ ձեզ այս նամակը
«այն խորհրդով, որ դուք մի նամակով միջնորդ լինիք իմ և Հիւսիսա-
«փայլ օրագրի մէջ, որպէս զի ընդունէ իմ աշխատութիւնքը եթէ պա-
«տահի ինձ ուղարկել։ Ես կարդում եմ այս տեղ Մեղու Հայաստանի
«անունով լրագիրը և շատ անգամ տեսանում եմ նորա մէջ այնպիսի
«բաներ, որ արժանի չէին բերանից հանելու, թող թէ պղծելով Գուտ-
«տենբերգի գիւտը հասարակութեան հրատարակելու։ Չգիտեմ, ար-
«դեօք ստանո՞ւմէք դուք այդ լրագիրը թէ ո՛չ. բայց եթէ չէք ստանում,
«մի կորուստ չունիք. դորա գործակատարների մէջ չէ՛ երևում մի հաս-
«տատ բնաւորութիւն և ինքը լրագիրը չունի իւր համար մի ուխտեալ
«խորհուրդ, առաջևումը մի նպատակ, որին հասանէր. դա մի առօրեայ
«բան է և ճակատագիրը նոյն վիճակով վճռելու է դորա ապագան,
«որով վճռվեցան Կովկասը և Արարատը։ Ես չեմ կարող տեսանել մի
«գործ, որ ազգային դիմակ ծածկելով երեսին, բայց էապէս հիմնված
«լինելով նիւթական շարժառիթների վերայ, աշխատումէր յանձն
«առնուլ ամենայն տեսակ յածութիւն, շողոքորթել ազգի թեթևամիտ և
«կարճատես անդամների անձնասիրութիւնը և այդ ճանապարհով հա-
«ճոյանալով ազգին, տարածել իւր անճոռնի լրագրի համարները ար-
«ծաթ ժողովելու աղագաւ։ Այսպէս անմխիթար է իմ հայեացքը Մե-
«ղուի վերայ. և ես անդադար գրագրութիւն ունենալով Թիֆլիզի հետ
«տեսանում եմ, որ այն տեղ ևս խելացի և բանագէտ մարդիկ այդ աչ-
«քով նայումեն դորա վերայ։ Մի քանիքը իմ բարեկամներից, լսելով
«ինձանից թէ կամենումէի երբեմն երբեմն քննութեան տակ ձգել դո-
«րա թերթերը, ասացին ինձ թէ անպատշաճ էր ուշադրութիւն դար-
«ձուցանել այդպիսի մի չնչին գործողութեան վերայ, և խօսակից լի-
«նելով նորա գործակատարների հետ անպատուել իմ անձը։ Ես բոլո-
«րովին համաձայն եմ, և եթէ այդ գործը յարաբերութիւն չունենար
«մեր ազգի հետ, եթէ դա յիմար գաղափարներ չը տարածէր ազգի մէջ,
«հաւատա՛, որ հետևելով իմ բարեկամների խորհրդին, անունը ևս տա-
«լու չէի այդ գործին։

«Ուղարկում եմ այժմ իմ մի քանի նկատողութիւնքը, «Հրաւիրակ
«հայրենասիրութեան» մակագրով Պ. Խաչակեանցի յօդուածի վե-
«րայ, որ տպած էր այդ Մեղուի 14 համարում, ապրիլի 5-ից։

«Խնդրեմ շուտով ուղարկել ինձ այն երաժշտական նոտերը,
«որոնց մասին դեռ ես գրել էի մարտի մէջ, դուք չգիտէք թէ այսպիսի

«մի խուլ տեղում մինչև որ ատրճան զգալի է գեղեցիկ ձայների կարօ-
«տութիւնը ականջի համար։ Գարունը բաւական շուտ սկսեց այս տեղ։
«Հիւսիսային արևելեան մրրիկները խառնուածն անդադար սև ծովի
«տարածութիւնը։ Ողջ եղէք։

Միշտ պատրաստական խոնարհ ծառայ

Սերովբէ Խաչատուրեան Շահբէգ։

P. S. «Այս րոպէիս ձեռքս հասաւ Մոսկվայում տպած «Նոր քնար
«Հայաստանի անունով տետրակի չորրորդ համարը. թէ ի՛նչ տպաւորու-
«թիւն կը գործէ իմ վերայ, այդ բանը կը գրեմ հետևեալ փօստայով։»

Ս. Շ.

Պ. Շահբէգի նկատողութիւնքը Պ. Խաահակեանցի «Հրաւիրակ հայ-
րենասիրութեան» մակագրով յօդուածի վերայ, որ տպած էր Մեղուի
մէջ, նորա 14 համարում։

—

Պ. Խաահակեանցը իւր գրութեամբը յայտնումէ իւր որպիսու-
թիւնը. տեսանումեմ, որ դա բարեմիտ և աշխոյժ երևակայութեամբ մի
երիտասարդ է, բայց շատ թոյլ դաստիարակված, որովհետև նորա գրա-
ծի մէջ չէ երևում մի հիմնաւոր դաստիարակութեան հետք։ Շատ տեղ
չարչարվումէ լօգիկան, և այդ պատճառով Պ. Խաահակեանցը ինքն չէ
իմանում կշռի որ թաթի վերայ դնէ իւր ծանրութեան քարը։ Այդ
պարոնը, ազգի յետ մնալու պատճառ լուսաւորութեան կողմից, գնումէ
այն բանը, որ բուն հնարն էր նորա յառաջխաղացութեան. պյսինքն այն
մեղադրանքը որ նորերումն լսվումէ մի քանի պարոնների գրչի բերանից,
ինչպէս վկայումէ Պ. Խաահակեանցը, ազգի անուսումնասիրութեան վե-
րայ։ Պ. Խաահակեանցը ասումէ, թէ այն ժամանակ միայն պատշաճ էր
այդ, «եթէ ազգայինք աղանդեվաճառութեան և լոմպարտութեան
«մէջ մոլորված և ապականված լինէին, և ազգային պլտութեան և յա-
«ռաջադիմութեան տունը աւաղակաց այր շինած լինէին. այս խօսքե-
րից յետոյ, որ բաւական հանդարտութեամբ յառաջ է տարել, իս-
կոյն վայր է ձգում երեսի դիմակը և ասպարէզ է մտանում.» այս ինչ
«դատաստան է, որ մեր լեզուագէտները գործ են դնում։ Այս ինչ հայ-

«բռնաւորութիւն է, որ կացին և մանգաղ վեր առած, լեզուները սրած,
«ազգը պախարակելու վերայ են և վէրք վէրքի վերայ դնելու. ո՜վ, մինչև
«Երբ մեր խեղճ ազգը այս դաժանակիր լծոյ տակը ծնգի և տառապի. մինչև
«Երբ պէտք է նախատանաց, բամբասանաց և զրպարտութեան պարսա-
«քարներ և թուք ու մուր արձակուեն նորա վերայ. ո՜վ Պարոններ, ազգը
«այս տեսակ կրթութիւն չի ստանալ, ազգը վայ ու վագլխով իւրա կո-
«րուստը չի գտնիլ. մանկութիւնը սիրում է գգուանք, սիրում է փայփայու-
«թիւն, սիրում է փաղաքշանք. . . . »

Չենք հասկանում, Պ. Խաչակեանց, թէ Հայոց ազգը ո՞ր տեղում ունի կրթութեան և յառաջադիմութեան տուն, որի մասին ասումէք թէ չէ շինել նա այր աւազակների, ուրեմն և անպատշաճ էր զուր տեղը ազգը մեղադրել, մեք ևս ինչպէս դուք ազգի որդիք ենք և կցորդ նորա փառքին և անարգանքին, նորա հարստութեանը և կարօտութեանը, տեղեակ նորա կարողութեանը և տկարութեանը, բայց չը նայելով այս բոլոր բաների վերայ, ո՛չ մի տեղում չենք տեսանում մի բան որ սեփական լինէր հասարակ ազգին, չենք տեսանում մի ծառ, որ ազգը միաբան գործակցութեամբ տնկած լինէր, և ազգային եղբարց կծու, բայց ճշմարտախօս մեղադրանքը ամենեւին յառաջանում է դոյն այդ բաների չլինելուց։ Խնդրումենք ցոյց տալ մեզ երկու Հայ որ միասին խորհուրդ կատարած լինէին ազգի յառաջադիմութեան վերայ, հոգ տարած լինէին ազգի զաւակների կրթութեան և լուսաւորութեան վերայ, և ինչպէս է, որ այս լուսափայլ ճշմարտութիւնը անտես արած, փորձ էք փորձում յարձակուիլ մի քանի Պարոնների վերայ, այն պատճառով, որ նոքա ճշմարտութիւն քարոզելով բամբասանքի տակ էին ձգում իւրեանց անձը հիւանդոտ և կարճատես մարդերի կողմից։ Դուք ասումէք, թէ այն ժամանակ արժան էր դնել ազգի վերայ այն մեղադրանքը, եթէ ազգայինքը աղաւնեվաճառութեան և լումայափոխութեան մէջ մոլորուած ապականուած լինէին։ Սիրելիս, աղաւնեվաճառութիւնը և լումայափոխութիւնը դատապարտվում է Աւետարանի մէջ որպէս անպատշաճ գործ Աստուծոյ տան համար, և այժմեան բաների կարգը չէր թոյլ տալու, որ այդ հանդէսը բացվէր եկեղեցու մէջ. բայց եկեղեցուց դուրս, ինչ մի պակաս բան է թռչնավաճառութիւնը, ձեզ յայտնի չէ՞ որ Անգլիայում ընկերութիւնք կան և այն, հարուստ ընկերութիւնք, որ պարապումէին թռչնավաճառութեամբ հարաւային Ամերիկայի և Եւրոպայի հետ, և Եւրոպայի երևելի Բանկերը ինչ մի պակաս արդիւնաբեր կամ անբարոյական գործ են, որ եթէ մեր Հայերը ևս պարապելու լինէին այդ գործերով, արժանի էին դատապարտութեան։

Մի՞թէ ձեր կարծիքով Հայերի վաճառականութիւնը մի երեւելի բան է. չէ սիրելիս. այդ վաճառականութիւն չէ, և այդ ճանապարհով Հայոց ազգը երբէք յառաջանալու չէ վաճառականութեան մէջ. և մեք դատապարտելու չէինք Հայոց ազգը, եթէ նա եւրոպական կերպով աղանեվաճառութեամբ և լումայափոխութեամբ պարապէր։

Ընդհանրապէս սկսանելով ձեր գրուածքը, խօսումէք ազգի հետ հասարակաբար, բայց յանկարծ տեսանումենք յետոյ, որ գործ ունիք մի քանի պարոնների հետ. ցանկալի էր մեզ իմանալ այդ Պարոնների անունները, որ այդպէս վրդովել էին ձեր հոգու խաղաղութիւնը և պատճառ էին տուել ձեզ այնքան խօսելու, մինչև որ Մուզան հարկադրվէր Մասեաց դարևանդիցը դադարեցնել ձեր գոչիւնը. . . . ։

Եղբայր, սիրական, պարոն, (ներեցէք ինձ որ այսպէս ընտանեբար վարվումեմ ձեր հետ), երբ կամ ո՞ւր տեսաք, որ հայրենասէրքը ազգի վէրքերի վերայ վէրք էին յաւելացնում. դուք հարցանումէք թէ «մինչև երբ պէտք է նախատանաց, բամբասանաց և զրպարտութեան պարսաքարեր և թուք ու մուր արձակվին ազգի վերայ, յառաջուց ասացէք ո՞վքեր են այդ մարդիկը որ անարգումէին ազգը և թքում ու մրումէին նորան. ոչ ոք չէ կատարել այդպիսի գործ. ես տեսանումեմ, որ դուք Հայոց ազգի մի քանի այլ անդամների հետ միասին, ֆանատիկոսութեամբ և տենդային ջերմութեան մէջ խօսումէք, և այդ է պատճառը, որ չէք կարող զանազանել ազգի անմխիթար պակասութիւնքը բուն ազգիցը և ձեր աչքումը, ինչպէս յայտնի ցոյց էք տալիս, մի և նոյն կշիռ ու յարգ ունին թէ ազգը և թէ նորա պակասութիւնքը և, եթէ աւելի լաւ կամիք, պակասութիւնքը աւելի նախընտիր են քան թէ բուն ազգը։ Եթէ այսպէս չը լինէր, դուք ուրանալով ազգի ապագայ բարօրութիւնը և լուսաւորութիւնը որ պիտոյ է յառաջանար պակասութիւնքը վերանալուց յետոյ, խունկ չէիք ծխելու այդ պակասութեանների կուռքերին և չէիք ազգացուցանելու նորանց։

Ազգը էապէս անարգողքը չէն նոքա, որոնցից գանգատ ունիք, որովհետև մերկացնումէին ծածուկ պահած ազգի վէրքերը, վիրաբուժական դարմաններ մատուցանելով, այլ, և բարոյական երկաթ ու կրակ գործ դնելով, այլ այն սուտ ազգասէրքը, որ խեղճ ողորմելի Մեղուին լծել են մի սայլի և ինքեանք լծուելով մէջը հարկադրումէն նորան աւելի մեծ ասպարէզ կատարել աշխարհի երեսին, հայկական լուսաւորութեան մէջ, քան թէ բնութիւնը կարողութիւն էր տուել Մեղուին. այդ սուտ ազգասէրքը անարգումէն ազգի անունը ամենայն եւրոպացի մարդու

առաջև, որովհետև այն մարդը, որ չէր խոստովանում իւր պակասութիւնքը, չունէր ուրեմն և սեփական արժանաւորութիւն: Հայերի միջից շատ մարդիկ անպատճառ կամենումեն, որ թագաւորէ սուտը և թաքնութիւնը. բայց ամենայն բանիմաց և ճշմարտասէր Հայի վերայ պարտականութիւն կայ պատժել և պատուհասել բերանով և գրչով ազգի պակասութիւնքը, հրապարակել նորանց այնքան, մինչև որ ազգը տեսանելով իւր վերայի կեղտը զզուի, գարշի և խնամ տանէ լուանալու և մաքրելու իւր անձը, որպէս զի արժանի լինի լուսափայլ դէմքով մասնակից լինել Եւրոպական մարդկութեան բարիքին: Եթէ մեք, որպէս անդամ ազգի ճանաչումենք մեր արժանաւորութիւնը, պիտոյ է ուրեմն խոստովանենք մեր ունեցած պակասութիւնքը, որովհետև նա միայն ուղղակի և կտրական կերպով կարող է խօսել իւր պակասութենների վերայ, որ գիտակցաբար ճանաչումէր իւր արժանաւորութիւնը: Առանց որ և իցէ փոքրոգի կասկածաւորութեան պիտոյ է հանդէս հանել ազգի առաջև նորա խաւար կողմերը, ապացուցանելու համար թէ լաւութեան ոյժը չէր կարող յաղթահարվել չարութենից, այլ դորա հակառակ պիտոյ է յաղթէր նորան և կանգնեցնէր առաքինութեան դրօշակը ջարդուփշուր եղած չարագործութեան ամրոցի վերայ: Պարոն Խաչակեանց, խնդրումենք անհանգիստ չլինել թէ Հայաստանի փլատակների տակից լսելու էիք մի իրաւացի անմռունչ գանգատանք, «թէ ինչ օգուտ, որ ունիմ բիւրաւոր գիտնական որդիք և այլն:» Հայաստանը գիտէ իւր ընթացքը, ուստի և չունի ոչինչ ժամանակ գանգատելու իրաւունք. դեռ Հայաստանը չունի գիտնական որդիք, որ իւր կաթով լինէր մեծացուցած, թող այդ գաղափարական Հայաստանը յառաջուց մի ծննդարան պատրաստէ գիտնական որդիք ծնուցանելու համար, թող կաթ պատրաստէ նորանց սնուցանելու համար, թող հաց պատրաստէ նոցա ապրուստը ապահովելու համար, ապա թէ իրաւունք կ՚ըստանայ ասել թէ «գիտնական որդիք ունիմ:» Հայաստանի որդոց գիտութիւնը, եթէ կան այդպիսի մարդիկ ուր և իցէ, այդ Հայոց ազգի շնորհքը չէ. մեզանից իւրաքանչիւր ոք, Գերմանական, Ֆրանսիական, և Ռուսիական համալսարաններումը դեգերվելով, օտարութեան մէջ, հազարաւոր նեղութեններին համբերելով, օրը խաւարեցնելով, ստացել է մարդկութեան ընդհանուր լուսից իւր բաժին մի քանի ճառագայթ. եթէ գանգատ ունի Հայաստանը, թող բարձրացնէ իւր մեծատուններին և հոգևոր իշխաններին անփոյթութեան վերայ, և դուք, Պ. Խաչակեանց, տուեցէք այդ խորհուրդը Հայաստանին. մեք ևս կ՚անէինք այդ գործը և չէինք ծանրաբեռնելու ձեզ, եթէ մօտ լինէինք Մասեաց դարևանդին և եթէ նորա Մասեան խօսակից լինէր մեր հետ: Եւ ձեր հետ խօսելու վերայ ևս կասկած

ունինք, մի՛ գուցէ Թիֆլիզի վարձաւոր լալկանների ձայնը համարած լինիք ձեր վառ երևակայութեամբ մուղայի ձայն Մասեաց դարևանդից. պատճառ, մուղայք չեն բնակվում Արարատի վերայ, այդ քնքուշ արարածքը իւրեանց անզգուշութեամբ վտանգի մէջ կարող էին ձգել իւրեանց անձը սաստիկ մրսելով և ջրային տենդ ստանալով, որ շատ անգամ պատճառումեն Արարատի և Արագածի մէջ խաղացած սառն հողմերը։ Մեք մուղաների բնակարան ճանաչումենք Պարնասը, այլև գիտենք մեր ազգային աւանդութիւնը, որ Մասեաց ոտքումը կայ մի փոս, դժոխք անուանված ուր շատ անգամ ընկնումեն մարդիկ....

Պարո՛ն, դուք մեղադրելով ուրիշների դաստիարակելու կերպը, ցոյց էք տալիս ձեր վերին աստիճանի թուլութիւնը Պեդագոգիայի մէջ. դուք ասումէք, մանկութիւնը պիտոյ է դաստիարակել գգուելով, փաղաքշելով, փափկացնելով և այլն. չգիտէք, որ իսկապէս այդ բաները այնպիսի թունաւոր տարերք են, որ մտանելով դաստիարակութեան մէջ կտրումեն նորա ընթացքը. և մի մարդ ձեր կերպով դաստիարակութիւն ստանալով կը դառնայ շատ անբարոյական մարդ։ Խնդրումենք, որ դուք մի փոքր աշխատութիւն յանձն առնուիք ծանօթանալ Պեդագոգիայի կանոնների հետ. և առհասարակ վատ չէր լինելու եթէ մի բարեկարգ դպրոցում ստանայիք մի հիմնաւոր կրթութիւն, որովհետև Ներսիսեան դպրոցի շնորհքով շատ հեռի չէք կարող գնալ։ Բայց այս մի խորհուրդ է իստակ սրտից, ինչպէս կամիք։

«Ո՜, հաւասիկ պարոններ» հանդէս էք գալիս, պարոն Իսահակեանց, «եթէ մեք ազգասէր ենք, եթէ հայրենասիրութիւնը պարծանք ենք համարում, այսպէս անենք կամ այնպէս անենք.» ինչ կամիք արեցէք սիրելիս, և մեք հոգւով չափ ուրախ կը լինինք ձեր յառաջադիմութեան վերայ եթէ յաջողի ձեզ ստանալ. բայց լսելով ձեզ, դիմել մեր բոլորովին մարմին դարձած մեծատունների ոտքը, ազգի անունով բան խնդրելու համար, յանձնառու չենք. մեք փորձը առած ենք այդ բաների, և մեր մեծատունների տտիպ համը առել են մեր ատամները. բայց եթէ դուք չէք փորձել, փորձեցէք, և կը գայ ժամանակ, որ ինքներդ կը խոստովանէք այս ճշմարտութիւնը, թէ Հայոց մեծատունը կերակրի, հանդերձի, գինու, փառաւոր ապրելու, մնոտի և անցաւոր փառք ճարելու համար թափումէ իւր քսակից վերջին մանէթը, բայց ազգային գործի, մի վերացական առաքինութեան համար, որի վարձը իսկոյն երևելու չէր նորա վերայ, նա շատ նեղութեամբ կը բանայ իւր քսակը. նորա ձեռքը սովորած չէ այդպիսի բաների համար արծաթ ձգել ազգի գանձանակը։ Այժմ, պարոն, բան խօսելու ժամանակ չէ պիտոյ մոռանալ

այն շրջապատը, որի մէջ կատարվումէին այն իրողութիւնքը, որոնց վերայ են մեր խօսք ու վրդյը:

Ճշմարտութեան պաշտօնեայ լինել մի հատիկ խորհուրդն է մի բարոյական մարդու, և վա՜յ այն մարդուն որ պիտոյ է ուրիշի ճշմարտութիւնը չափէր բարեկամութեան կամ թշնամութեան չափով: Ստոյգ ազգասէրը պիտոյ է խօսի ճշմարիտը, այո՛, ճշմարտութիւնը շատ անտանելի է լինում այնպիսի մարդերի համար, որ իւրեանց ծնած օրից նուիրել էին իւրեանց անձը ստութեան սպասաւորութեանը, բայց ինչ պիտոյ է անել, այդ նոր բան չէ աշխարհի երեսին, և մտածող մարդիկ վաղուց ահա փորձով իմացած են, որ ճշմարտութիւնը հալածվումէ միշտ և պատճառ է լինում իւր պաշտօնէի հալածանքին. մի այդպիսի անբաղդ պաշտօնէի համար ճշմարտութիւնը շատ անգամ ճանապարհ է բացել դէպ ի գլխապարտութեան սիւնը (էշաֆօդ), շատ անգամ հանել է նորան փայտակուտի վերայ: Ի հարկէ կարդացած կը լինիք Լերմոնտովի Մարգարէն. նա մի տեղ ասումէ,

«Սկսեցի սէր քարոզել,
Սուրբ ուսումը ճշմարտութեան,
Եւ իմ բոլոր մերձաւորքը
Կամէին ինձ քարկոծ անել:»

Եւ արդարև ճշմարտութիւնը մի այնպիսի բան է, որ պատճառ է լինում մարդերի միմեանցից հեռանալուն. ինքը ճշմարտութեան Վարդապետը գուշակել էր, որ իւր քարոզութիւնքը, իւր ճշմարտութիւնը պիտոյ է բաժինք յառաջացնէին: Բայց ծածկել և վարագուրել ճշմարտութիւնը աշխարհին հաճոյանալու համար, սատանայի գործ է. հեռի մեզանից, և մեք անպարտ ենք: Թող բամբասվինք ճշմարտութեան համար, փոյթ չէ, միայն թէ Աստուծոյ ձայնը չ՚ասէ մեր սրտի մէջ թէ մեղանչել էինք ընդդէմ ճշմարտութեան:

Ձեր յօդուածը վերջացնումէք նորանով, որ ազգը վատաբանելը և ազգի վերայ կծելը և ողբ կատարելը անօգուտ էք համարում ազգին. իբրև ապացոյց ձեր խօսքին մէջ էք բերում Խորենացու ողբը Հայոց ազգի վերայ և ասումէք, թէ այդ չորս հազար տարուայ ողբը ոչինչ արդիւնք յառաջացուցած չէ և այլն. այսքան պիտոյ է իմանալ, որ ոչ ոք դեռ ևս ճշմարտախօս հեղինակներից պարսաւապետ չէ և այդ պաշտօնը իւր պարծանքով հանդերձ մնացած է Հայոց միակողմանի ուսումնականներին, որոնց թիւը բարձրացնումէք մինչև բիւր. գուցէ ձեր աչքումը շատ փոքր նշանակութիւն ունի բիւրը, բայց մեք տասն

հազարը համարումենք մի բիւր։ Նմանապէս մեք անարժան ենք համարում կանացի ողբ ու կոծը, որ յառաջանումեն մեծ մասով յուսահատութենից, մինչ մեք իբրև քրիստոնեայ դատապարտվումենք եթէ կորուսանելով մեր յոյսը ձգէինք մեր անձը յուսահատութեան ծովը։ Ասումէք թէ Խորենացու ողբից բան չէ յառաջացել․ դորա մեղաւորը Խորենացին չէ։ Աշխարհիս երեսին ձայն ասացեալը լսողի համար է, ով ականջ ունի լսելու, թող լսէ․ իսկ Հայոց ազգի համար շատ բաներ անցանումեն որպէս «ձայն բարբառոյ յանապատի»։ Դուք կամիք արդարացնել Խորենացու անձը, ասելով որ հանգամանքը բռնի խլել էին նորա բերանից այդ ողբը․ առաջինը, Պարոն, Խորենացին անկարօտ է մեր նման փաստաբանների պաշտպանութեանը, մանաւանդ որ ոչինչ սուտ չը կայ նորա ասածի մէջ․ երկրորդ, ձեր այդ ընթացքով ցոյց էք տալիս ձեր թուլութիւնը Հայկական դպրութեան մէջ։ Խորենացին վերադառնալով Աղեքսանդրիայից չը գտաւ Հայաստանը այն վիճակի մէջ, ինչ վիճակում բարեաւ մնա էր ասել նորան։ Արշակունեաց թագաւորութիւնը և Հայրապետութիւնը Լուսաւորչի տնից վերջացել էին, երբ նա մեծամեծ յոյսերով ոտք էր կոխում Հայաստան, յունական լուսաւորութիւնը տարածելու, և պատահելով ազգի իշխանների անսիրտ ընդունելութեանը և հոգևորների կոպիտ, խաւարասէր հալածանքին, ամենայն արդարութեամբ պիտոյ է գրէր, մանաւանդ Խորենացու պէս երկնաքաղաքացի և տօնելի մարդը։ Նա բաց ի այդ ողբից նզովք ևս գրել է Հայոց կաթողիկոսների վերայ, որ աբեղաների ձեռքով ոչնչացուցած է երևում, ինչպէս և միւս նորա գործը «Ճարք Կաթողիկոսաց» անունով․ խնդրեմ կարդացէք Ղազար Փարպեցու նամակը, որ գրումէ Մամիկոնեանց տիրոջ Վահանին (տպած Մոսկվա, 1853)։ Դուք կը տեսանէք այն տեղը, որ Հայոց աբեղայքը մինչև ի մահ հալածելուց յետոյ և մահից զկնի չեն հաշտվում այն պատկառելի ծերունու հետ, սեղանապիղծ ձեռքով մօտենումեն նորա խնկելի ոսկրներին և հանելով գերեզմանից թափումեն ջրի մէջ։ Այս տեղ աւելորդ չէ խնդրել ձեզանից, որ յայտնէք նոյնպէս, թէ դուք ո՞ր ժամանակից սկսանումէք ձեր տարեգրութիւնը, որ Խորենացուն շինել էք չորս հազար տարեկան․ սովորական տարեգրութեանը նայելով, նա դեռ ևս հազա՛ր երեք հարիւրի և հազար չորս հարիւրի մէջ է, որովհետև այդ մեծարգոյ յիշատակի արժանի մարդը կեցած է 370—489 Քրիստոսից յետոյ։

Ու այսպէս, Պ․ Խաչակեանց, մեք աւարտումենք մեր նկատողութիւնքը, որ գուցէ թէ անախորժ թուին ձեզ, և եղբայրական (եթէ միայն հաճիք ընդունել) խորհուրդ ենք տալիս ձեզ բան գրելու ժա-

մանակ չը պատկանել այս և այն հակառակող բաժիններին, խօսել սառն հոգով, և հաւատարիմ մնալով լօգիգական կանոններին։

Բաց ի այս նամակակցութենից ուրիշ արժանի ուշադրութեան բան չէ կարող այսօր զարդարել իմ յիշատակարանը։ Ներողութիւն, պիտոյ էր այս տեղ գրել այն խօսակցութիւնը, որ պատահել է մի շինականի և մի վաճառականի մէջ։

—

Շինականը. — «Պարոն, քաղաք մտնելով տեսանում եմ բարձր տների վերայ ձողեր, որոնցից վայր է գնում մինչև գետինը մի երկաթի լար, դոքա ինչացո՞ւ են։»

Վաճառականը. — «Այդ շանթապահ գործիք է, որ հնարել է Բենիամին Ֆրանկլինը։»

Շին. — «Ի՞նչ ասել է շանթապահ գործիք։»

Վաճ. — «Կայծակից պահպանող. ուր որ կայ այդ բանը, այն տեղ կայծակը չէ կարող վնասագործութիւնք յառաջացնել, որովհետև այն ձողի ծայրի մագնիսացուցած մետաղ լինելով, անգործ է կացուցանում կայծակի զօրութիւնը։ Այդ բանի համար փառաւորվեցաւ Բենիամին Ֆրանկլինը։»

Շին. — «Այդպիսի ոչինչ բանի համա՞ր. դա ի՞նչ է, որ մարդ փառաւորէ։ Մեր գեղումը մի դրացի կին կար. նա շատ անգամ վայր էր քարշում կայծակը։»

Վաճ. — «Ի՞նչպէս։»

Շին. — «Իսկոյն կ՚ասեմ. միայն յառաջուց պիտոյ է իմանալ, որ այդ կինը վայր էր քարշում կայծակը մի մարդու զարկել տալու համար, եթէ դա ունէր մի թշնամի։ Եւ ահա այսպէս է դորա արարողութիւնը, ինչ մարդու կամենար, որ նա կայծակից զարկվէր, առանումէր նա որևիցէ ճանապարհով այդ մարդու հասակի (բարձրութեան) չափը, այդ չափով մոմ էր շինում և վառումէր եկեղեցում, բայց ոչ սովորական կերպով, այլ գլխիվայր. մոմի վերայ միտեղում գրումէր ասեղով և շատ աննշմարելի այս բառը «ելդըրըմ»։ Մոմը վառվելով մինչ հասանումէր այս խօսքին, որ կայծակ է նշանակում, իսկոյն երկինքը մթնումէր, որոտմունքը թնդումէին, փայլակները ջրի պէս սկսանումէին վազել և մի ակնթարթում կայծակը սևացնումէր այն մարդը, որի չափով շինած էր մոմը։»

Մ՚աձ. — «Դու ինչ յիմար բաներ ես ասում. ինչ յարակցութիւն կայ օդի ելեքտրականութեան և մի մոմի մէջ, թող գլխիվայր ես վառէիր, ինչպէս կարելի է հաւատալ այդպիսի բաների. Եւ դու տեսա՞ծ ես մի օր, որ այդ կնոջ կամքով կայծակը մի մարդ չքացնէր.»

Ր՚ին. — «Ճշմարիտը պիտոյ է ասել, չեմ տեսած. թէպէտ և այդ կինը շատ անգամ վառումէր եկեղեցում մի այդպիսի մոմ....»

Ահա անկրթութեան և թեթևամտութեան պտուղը. Աստուած իմ, ինչ ողբալի մարդիկ կան աշխարհիս երեսին.

ԱՍՏԵՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ

—

Բնութեան ամենագեղեցիկ տեսարաններից մինը է անտարակոյս աստեղազարդ երկինքը. բայց այս գեղեցիկ տեսարանի մասին մի շատ թերի ըմբռնողութիւն ունի նա, որ աստեղազարդ երկնակամարի վերայ ոչինչ բան չէ տեսանում, եթէ ոչ մի սեաւ կերպասի վերայ շարած ամենապայծառ գոհարներ։ Եթէ այս միայն լինէր, ապա մշտնջենաւոր միակերպութիւնը շուտով ձանձրացնելու էր մեր սիրտը ինչպէս մի թաղման հանդէսի փառահեղութիւն որ վերջ չունէր։ Ինչ որ երեւումէ մեր աչքին, չէ մի դադարի սեաւ ծածկոց, այլ այն խաւար, թէեւ անհամար մշտավառ ճրագներով, բայց նուազ լուսաւորված նախագաւիթը այն Անեզրականի տաճարի որի սրբարանի մէջ չէ կարող միջամուխ լինել ոչինչ մահկանացու աչք. այս տեղ շրջապատում է մեզ գերեզմանի մեղմ հանդարտութիւնը, բայց չէ զարհուրեցուցիչ մեզ մահուսան հանգիստը։ — Այս երկու հայեցուածների մէջ դրած է պատասխանին այն հարցողութեան թէ արդեօք ինչ էր այն մեծ վայելչութիւնը, որ աստեղալից երկնքի տեսութիւնը հասուցանում է ամենայն զգացող մարդու. ինչ է պատճառը, որ մի շատ գեղեցիկ ճարտարապետական գործի նկատութիւն շուտով ձանձրացնում է մեզ, որ նոյն իսկ բնութեան շատ հոյակապ տեսարանները վերջապէս պիտոյ է յառաջացնէին մեր մէջ յագելութիւն, եթէ չէին նոքա շնչական էակներով կենդանացած, եթէ նոքա չը յեղափոխվէին տարու եղանակների բազմօրինակութեամբը։ Բայց սորա հակառակ, աստեղազարդ երկինքը երբէք չէ կորուսանում իւր նորութեան քաղցրութիւնը, և սկսեալ հազարաւոր տարիներից լինելով բոլոր ազգերի համար զարմանքի առարկայ, այժ և մի պաշտելի սրբութիւն, տուել է կրթեալ մարդերին մի անսպառ նիւթ մտածութեան և քննութեան։ Սորա պատճառը այն է, որ այս տեսարանը տալիս է մեզ մի զգալի ըմբռնողութիւն, գոնեայ մի թեթեւ գուշակութիւն Անեզրականութեան մասին և ցուցանում է մի այնպիսի զուգապատշաճ անընդհատ շարժողութիւն, որից կարող ենք մեք իմաստասիրել ամենակատարեալ մեքենայի ճարտարապետը։ Ամեն

մի աստեղապայծառ գիշեր բացումէ մեր առաջև նոր և դեռ ևս չտեսած հանդէսներ. աստղների նոյն իսկ բազմութիւնը շատանումէ ամեն անգամ, երբ որ կրթեալ աչքը նոր ի նորոյ դարձուցանումէ հայեացքը դէպ ի երկինք. այդ բազմութիւնը լինումէ անվերջանալի, երբ որ աչքդ մօտեցնումես հեռացոյցին։ Ամեն մի նոր կատարելութիւն որ ստանումեն հեռացոյցքը, այն անչափելի տարածութեան խորքից որի սահմանին կարծումէին թէ հասած են, հանդիսացնումէ նորանոր առաւել փոքրիկ և աղօտալոյս կէտեր որոնց հեռաւորութիւնը փախչումէ երևակայութեան զօրութենից։ Այս մեծ գեղեցիկ տեսարանը կենդանանումէ շ ա ր ժ ո ղ ո ւ թ ե ա մ բ, բայց ոչ այն րոպէական շարժողութեններով որ տեսանվումեն շնչական արարածների մէջ, կամ թէ այն խռովայոյզ և արագ և կործանողական փոփոխութեններով որ տեսանվումեն մեր ծովերի և օդեղէն շրջապատի մէջ, այլ մի ծանր, անխռով, օրհնութիւն միայն բաշխող և ամենևին զուգապատշաճ շարժողութեամբ, որ սկսեալ հարիւրաւոր տարիներից տևումէ անհատապէս և կրումէ իւր մէջ մշտնջենաւորութեան սերմը։ Թէպէտ երկինքը ևս ունի իւր տ ա ր ո ւ ե ղ ա ն ա կ ն ե ր ը, բայց դոքա նկատելի են աստղաբաշխին միայն և որոնց տևողութիւնը չափելի են հազարաւոր տարիներով միայն։ Սորանից կարելի է իմաստասիրել, թէ այն երանական խաղաղութիւնը որ տալիս է աստեղազարդ երկինքը, ստացվումէ ոչ թէ լոկ տեսութեամբ, այլ շարունակ նկատողութեններով և պահանջումէ գոնեայ մի փոքր տեղեկութիւն տիեզերքի կազմութեան մասին. և այսբանի մէջ կարելի է տեսանել, որ վարդ. քաղելը անց չէ կենում առանց խայթվելու փշերից։ Հիւսիսափայլի Հրատարակողը ուրախանալու է, եթէ յաջողէր նորան այս համառօտ նկարագրութեամբը տիեզերական կարգի, որ ապագայումը կը շարունակէ նա իւր ընթերցողների հետ, փշերից փոքր ի շատէ հեռացնել նոցա խայթոցը, առանց վնասելու վարդին։

ՕՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՐԻ։

24 ժամի մէջ թաւալումէ բոլոր երկինքը այն բոլոր անհամար աստղների հետ միասին որ նորա մակերևութի վերայ ցրուած են. բայց այս տիեզերական մարմինքը այդ շարժողութենից փոփոխում չեն իւրեանց կայքը նայելով միմեանց։ Այս թաւալումը լինումէ արևելքից դէպ ի արևմուտք կամ թէ մանաւանդ. ձախ ձեռքից դէպ ի աջը և միանգամ երկրի չորս կողմով։ Այս օրական, բոլոր երկնային մարմինների հասարակաց շարժողութիւնը ունի շատ առանձնութիւնք և է բո-

լոր աստեղագիտութեան հիմքը։ Մեծափառ հանդարտութեամբ ահագին երկնակամարը յառաջ է խաղում այնպէս ծանր, որ մեք այդ շարժողութիւնը չենք տեսանում, բայց ի վերայ այդր ամենայնի այնքան արագ, որ կարող էր մի գիշերի մէջ յառաջացնել տեսակ տեսակ փառաւոր կերպարանագործութիւնք այդ տեսարանի մէջ. այնպէս որ, օրինակի աղագաւ, երբ որ երկինքը մեր հորիզոնի շատ մօտից յառաջ էր սողացել, մի քանի ժամ յետոյ թողումէ մեծ արջին վեր բարձրանալ դէպ ի գագաթնագէտը։ Այս տեսարանի վայելչութիւնը, մանաւանդ թէ այս սրընթաց շարժողութիւնը որ բոլորվումէ մի օրի մէջ, առաջինն էր, որ մարդերի ուշադրութիւնը գրաւեց. և այս բանի մի փոքր քննութիւնը է այն առաջին քայլափոխը, որով ազգերը իւրեանց բարբարոսութենից հազիւ թէ դուրս եկած, ոտք կոխեցին աստեղագիտութեան սահմանի վերայ։ Առաջին խրողութիւնը որ նկատեցին այս շարժողութեան մէջ, է նորա կատարեալ հաւասարաձևութիւնը։ Այժմ ամենաճիշտ հետաքննութեններով անտարակոյս է կայուցած, որ այս յեղափոխութիւնը երկնքի ոչ թէ սկսեալ հազարաւոր տարիներից կատարվումէ անփոփոխ արագութեամբ, այլ թէ այս տեսակ շարժողութիւնը գուցէ մի հատիկն էր բոլոր բնութեան մէջ, որ լինումէ ամենևին հաւասարակերպ. այդ պատճառով է դա ճշմարիտ ժամանակաչափ և ընդհանուր կանոնաւորիչը բոլոր ժամացոյցերի. դա ինքն է առաւել ճիշդ ժամացոյցը, որ աստղաբաշխներին, արուեստական ժամացոյցների գիւտից յառաջ ձեռնտու էր սահմանելու ժամանակը, որ և չինական մարդը, երբ որ չիջել էր մեծ տուընջեան ժամացոյցը, և այժմ գիտէ գործ դնել շատ պատշաճապէս։ Այս շարժողութեան երկրորդ յատկութիւնը այն է, որ բոլոր աստղները երկնքի գնդաձև մակերևութի վերայ, ձախ կողմից դէպ ի աջը կատարումեն շրջաններ որ զուգահեռական են միմեանց. թէ այս շրջանքը, որ այլապէս անկարելի էր մի գնդաձև մակերևութի վերայ, ունին զանազան մեծութիւն, բայց դոքա ամենեքեան մի և նոյն 24 ժամի մէջ կատարվումեն. թէ երկնքի մի տեղումը գտանվումէ մի շրջան, որ գերազանց էր բոլոր միւսերից, և այդ պատճառով ասվումէ ամենամեծ զուգահեռական, և մի այլ հիմքով Հաւասարակած (Էկվատոր). թէ միւս զուգահեռական շրջանները Էկվատորի երկու կողմից, ինչքան հեռանումեն միմեանցից, այնքան ևս փոքրանումեն, մինչև վերջումը միախառնվումեն մի կէտի մէջ, որ ասվումէ Բևեռ (Պօլուս)։ Թէպէտև մեք, ըստ որում տեսութեամբ ըմբռնումենք երկնքի կէսը միայն, կարող ենք տեսանել մի բևեռը միայն, որ մեզանում ասվումէ Հիւսիսային բևեռ. բայց բնականապէս հետևումէ, որ Էկվատորի միւս կողմումը պիտոյ է լինի մի նմանապիսի կէտ որ և

ասվումէ Հարաւային բեւեռ, և վաղուց արդէն նկատված է ճանապարհորդներից որ շրջած էին երկրի չորս կողմով։ Այս երկու բեւեռքը են միայնակ անշարժ կէտքը երկնքի, և եթէ նոցա մէջ տեղումը մտածենք մի ուղիղ գիծ որ պիտոյ է անցանէր երկրի միջնակէտից, որովհետև երկիրը դրած էր բոլոր երկնագնտի մէջ տեղումը, ապա օրական շարժողութիւնը կատարվումէ ամենեւին այնպէս, որպէս թէ բոլոր գունդը, որի ներքին մակերեւութի վերայ երեւումեն աստղները, ձախ կողմից դէպ ի աջը պտոյտվումէր 24 ժամի մէջ այս գծի չորս կողմով, որ այս պատճառով ասվումէ Տիեզերքի առանցք։ Այս առանցքը և Էկվատօրը որի վերայ ուղղահայեաց դրած է նա, նորա հետ զուգահեռական աւելի փոքրիկ նշաններովը միասին, ոչ թէ միայն ձեռնտու են աստղաբաշխին աստղների կայքը սահմանելու համար, այլև աշխարհագիրներին, երկրի վերայ եղած տեղերի կայքը որոշելու։ Այս խորհրդով երկու բեւեռների միջից ձգումեն նոր շրջաններ, որ ուղղահայեաց կտրատումեն Հասարակածը և ասվումեն Մերիդիանք (միջօրէական շրջանակք), և այնուհետև որոշումեն, թէ ո՛ր Մերիդիանի մէջ արեւմուտքից դէպ ի արեւելք դրած է մի աստղ, և թէ ի՛նչքան հեռի էր նա Բեւեռից կամ թէ Հասարակածից։ Եթէ այս բոլոր շրջանակքը մտածենք մի և նոյն դրութեան մէջ, միայն թէ աւելի փոքր, երկրի մակերեւութի վերայ, ուր հասարակածը ասվումէ Գիծ, ապա հեշտ էր իմաստասիրել թէ նոյն կերպով կարելի է ամենայն տեղի հեռաւորութիւն Էկվատօրից, այսինքն նորա լայնութիւնը, և Մերիդիանը որի մէջ դրած էր նա, այսինքն նորա երկայնութիւնը որոշել։ Բայց այս բանը ենթադրումէ թէ երկիրը մի գունդ էր. մի իրողութիւն որ թէև վաղուց այնքան ծանօթ է ընդհանրապէս, որ նա մտել է ամենայն լեզուի մէջ, որպէս Հայումս ասումենք «Երկրագունդ» որ մեր մօլորակի սովորական անունն է. բայց այդ բանի մէջ ժողովրդի մեծ մասը հաւատումէ միայն աստղաբաշխների խօսքին, առանց ինքնին վերահասու լինելու։ Այս պատճառով աւելորդ չէր այս տեղ, համառօտ ասել, թէ ի՛նչ հիման վերայ հաստատած էր այդ ճշմարտութիւնը։

Մինչև նոր ժամանակներումս ֆիզիքական հիմքերի վերայ ապացուցած էին թէ ամենայն տիեզերական մարմին իւր գոյութեան առաջին րոպէումը, ծանրականութեան (gravitation) կամ թէ իւր մասների փոխադարձ առքաշողութեան պատճառով պիտոյ է որպէս մի կաթիլ ջուր ինքն ըստ ինքեան ստանար գնդաձև կերպարանք. միայն թէ Աստուծոյ ամենակարողութիւնը առանց մի պատճառի և հաւասարակշռութեան բոլոր օրէնքների ընդդէմ կամեցած չը լինէր տալ նորան մի անկիւնաւոր ձև և սորան իսկոյն կարծրացուցած չը լինէր. ապա թէ ոչ,

տիեզերքի մարմինը իսկոյն պիտոյ է ինքն ըստ ինքեան ձեւաւորվէր որպէս մի բոլորակ. բայց մինչեւ փիլիքան (բնագիտութիւնը) այդպիսի ապացոյցների համար արել էր հարկաւոր յառաջադիմութիւնքը, պիտոյ էր հին աստղաբաշխներին բաւականանալ այսպիսի պատճառներով որ նոր ժամանակների ուղեւորութիւնքը աշխարհի չորս կողմով ստուգելով անտարակոյս են կացուցել: Ուղղելով մեր հայեացքը դէպ ի երկինք, իսկոյն պիտոյ է վկայէ մեր սիրտը, որ գունդը է բնութեան սիրելի ձեւը, թէեւ կարող չէինք մեք այդ բանի փիլիքական պատճառը բացայայտել: Արեգակը, Լուսինը, բոլոր մոլորակները ունէին այդպիսի կերպարանք. ինչու համար պիտոյ էր այն տիեզերական մարմնին որ մեր բնակարանն է, խոտորվիլ այդ ձեւից: Երկրի ստուերը, ինչպէս յայտնի ցուցանումէն մեզ Լուսնի խաւարմունքը, է ամենեւին բոլորակ, ինչպէս ևս լինէր երկրի դրութիւնը. ուրեմն երկիրը է մի գունդ: Երբ որ ճանապարհորդումենք դէպ ի հիւսիս, ապա տեսանումենք որ բեւեռական աստղը և այլ հիւսիսային աստղներ հետ զհետէ աւելի բարձրանումեն հորիզոնի (երկնակամարի) վերայ, բայց հարաւայինքը աւելի ցած են գլորվում. մի ապացոյց թէ երկիրը կորաձեւ է, ինչպէս ցուցանումեն ճիշդ նկատողութիւնքը, հաւասարապէս կորացած է որպէս մի գունդ. պատճառ, այն ճանապարհը որ մեք կատարած էինք, միշտ համեմատվումէ այն աղեղին որ աստղները երկնակամարի վերայ երեւումէին թէ բոլորելով անցանումեն: Ամեն մի դաշտավայրի մէջ որպէս և ծովի վերայ, ինչքան հեռի հասանումէր մեր տեսութիւնը, երեւումէ երկրի երեսը որպէս մի կատարեալ տափարակ առանց անկիւնների և խորշերի. բայց այս տափարակը, ինչպէս ցուցանումեն այլ երեւոյթներ, մեր տեսութեան սահմանից դուրս առ փոքր փոքր կորացած է: Զոր օրինակ մի նաւ որ այս տարածութեան վերայ յառաջ էր խաղում, կարող էր, եթէ դա լինէր ստուգապէս տափարակ, միշտ տեսանելի մնալ մեր աչքի համար, մինչեւ անչափ շատ հեռանալով մեզանից կը դառնար մի աննկատելի առարկայ. բայց փորձը ցուցանումէ որ նաւի շատ առաւել մեծ մասը անհետանումէ շուտով. բայց դորա հակառակ կայմերը և նոցա ծայրերը դեռ ևս երկար ժամանակ տեսանելի էին մեզ, ըստ որում նաւի ստորին մասը այն աղեղովը որ ձեւացնումէ երկրի կորացութիւնը, ծածկվումէ, երբ որ նորա վերին մասունքը վերեւից դուրս էին երեւում: Նոր ժամանակի նաւարկուքը այնքան յաճախ շրջել են երկրի չորս կողմով արեւելքից դէպ ի արեւմուտք, և միշտ մի և նոյն ուղղութեամբ յառաջ գնալով դարձեալ հասել են այն տեղ, ուր սկսել էին իւրեանց ճանապարհորդութիւնը. կամ թէ երկու նաւ մի և նոյն տեղից դուրս վազելով մինը դէպ ի արեւելք, միւսը դէպ ի արեւմուտք, փոխանակ մի-

մեանցից հեռանալու, ինչպէս պիտոյ է պատահէր տափարակ դաշտի վերայ, հանդիպել են միմեանց. և ոչ մի ժամանակ այս նաւարկուքը չեն պատահած մի անկիւնի կամ անդունդքի, այլ կարծումէին թէ նաւարկումեն մի տափարակի վերայ։ Այս բանը չէ կարելի այլապէս բացայայտել, եթէ ոչ երկրի հաւասարապէս կորացութեամբը կամ գընդաձև կերպարանքովը։

Թող պատկերացնենք մեզ երկրագնդից ու երկնագնդից բաղկացած ամբողջութիւնը այնպէս, որպէս թէ անչափելի գնդակամարի մէջ տեղումը կար մի փոքրիկ գունդ, որի միջից մի ձող կամ թէ լիսեռն անցուցած, երկու կողմից ևս երկայնացրած էր մինչև այն կամարը, և որպէս թէ այդ լիսեռի վերայ պտոյտվումէր այն ահագին կամարը, բայց փոքրիկ գունդը դրած էր նորա մէջ անշարժ։ Թող պատկերացնենք մեզ այս բանը պայծառապէս և հարցանենք մեղանից, մի՞ թէ աւելի բնական չէր ընդունել, թէ մանաւանդ փոքրիկ գունդը իւր առանցքի վերայ այն մեծ սկաւառակի մէջ պտոյտվումէր, քան թէ այս լիսեռը երկայնացնել մինչև այն սկաւառակը և բոլոր երկինքը շարժեցուցանել այս միայն երևակայական գծի վերայ։ Բացայայտ է, որ օրական շարժողութեան երևոյթները կարելի է մեկնել թէ մի և թէ միւս կերպով. բայց ի՛նչպէս անհաւանական էր առաջին կերպովը։ Միլիոնաւոր տիեզերական մարմիններ որոնց մեծութեան առաջև չքանումէ մեր երկրագունդը, պիտո՞յ է ահագին ճանապարհներով պտոյտվէին այս ամենաչնչին կէտի չորս կողմ և այնպիսի արագութեամբ, որի մասին կարող չենք մեք ոչինչ ըմբռնողութիւն ծնուցանել մեր մէջ, որ և պիտոյ է լուսի արագութենից տասն հազար անգամ աւելի գերազանց լինէր, և այս բոլորը մի և նոյն 24 ժամի մէջ, թէպէտ այդ տիեզերական մարմինների հեռաւորութիւնքը մեր երկրից զանազան էին։ Մի՞ թէ առաւել հեռաւորքը պիտոյ է մեքենականութեան բոլոր օրէնքներին ընդդէմ ունենային առաւել արագութիւն քան թէ նուազ հեռաւորքը, որ կարողանային մի և նոյն միջոցին պտոյտվելով անցանել իւրեանց աւելի երկար ճանապարհը։ Այն ահագին զօրութիւնը որ հարկաւոր էր այդ բոլոր մարմինները շրջանաշարժ յառաջ վարելու, մի՛ թէ պիտոյ է ունենար իւր օթեւանը շարժողութեան կենտրոնի մէջ, այն ամենաչնչին կէտի մէջ ուր բնակումենք մեք. բայց և սորանով չէր կարող բացայայտվիլ օրական շարժողութիւնը, որովհետև դա լինելու էր ոչ թէ երկրի չորս կողմով իսկապէս, այլ զուգահեռական շրջաններով այն երևակայական գծի, այսինքն մինչև տիեզերքի տարածութեան սահմանքը երկայնացրած առանցքի վերայ։ Ամեն մի առանձին աստղի ընթացքի միջակէտը չէր լինելու մի ընդհանուր կենտրոնական մարմին, այլ մի որ և իցէ կէտ այդ

առանցքի մէջ, մի ոչինչ բան։ Այս պատճառով հին աստեղաբաշխերը կամենալով այս շարժողութիւնը փոքր ի շատէ բացայայտել, ստիպված գտանվեցան ընդունել, թէ բոլոր երկինքը մի ամուր բիւրեղային գնդաձև սկաւառակ է, որ իւր վերայ ամրացած աստղներով պտոյտվումէ ամենայն օր. բայց որովհետև այդպէս ենթադրվումէ, թէ բոլոր աստղները հաւասարապէս հեռի էին երկրից, ուրեմն յառաջանումէ ևս աւելի մեծ անհաւանականութիւն։ Բայց այս բոլոր անհասկանալի իրողութիւնքը կը վերջանային, եթէ աստղներին դադար տայինք և երկրին ընծայէինք մի շրջանակութին դէպ ի հակառակ կողմը, այսինքն արևմուտքից դէպ ի արևելք, կամ թէ աջ կողմից դէպ ի ձախը։ Սորա համար պիտոյ է միայն ընդունել թէ երկիրը իւր լինելութեան սկզբումը ստացել է մի զարկ դէպ ի այս կողմը որ և պէտք է տար նորան իւր տարեկան շարժողութիւնը արեգակի չորս կողմով։ Մեքենականութեան օրէնքներին հետևելով, երկիրը յաւիտեանս յաւիտենից շարունակելու է իւր երկոքին շարժողութիւնքը։ Օրական շարժողութիւնը երկրի էր այնուհետև փոքր ինչ միայն արագ քան թէ շառաչիւնի շարժողութիւնը, և գրեթէ 60 անգամ աւելի ծանր քան թէ երկրի տարեկան շարժողութիւնը արեգակի չորս կողմով. բայց եթէ սորա հակառակ կամենայինք միտ դնել միւս մեկնութեանը, ապա պիտոյ էր ընդունել թէ միլիոնաւոր անչափ աւելի մեծ տիեզերական մարմիններ պտոյտվումեն այնպիսի արագութեամբ, որ մի երկվայրկեան մէջ — ով կարող է ըմբռնել այդ մտածութիւնը — անցանումէին քանի քանի հարիւր միլիոն մղոններ.

Սկսեալ այն ժամանակից, երբ որ հեռացոյցներով յայտնագործած էին, թէ արեգակը, լուսինը և մոլորակները նոյն իսկ ուղղութեամբ և գրեթէ նոյն իսկ արագութեամբ պտոյտվումեն իւրեանց առանցքի վերայ, — սկսեալ այն ժամանակից չը կար այլևս տեղի տարակուսի, թէ երկրի շրջանակութիւնը ստուգապէս բացայայտումէր նորա օրական շարժողութեան գաղտնիքը, որ այլապէս անլուծանելի է։ Բայց կան և ֆիզիքական ապացուցութիւնք, թէ այս շրջանակութիւնը երկրի լինումէ հաւաստեաւ։

Երբ որ մի մարմին շրջանակաբար պտոյտվումէ, դորանից յառաջանումէ այն կենտրոնախոյս ասած զօրութիւնը որ այդ մարմինը և նորա ամեն մի մասը հալածումէ միջակէտից այն շրջանակի որ կատարումէր մարմինը, և այնքան աւելի սաստիկ ներգործումէ, ինչքան արագ էր շարժողութիւնը։ Այս զօրութիւնն է ահա, որ քարը, չը նայելով նորա ծանրութեանը, յետ էր պահում պարսատկի մէջ և թոյլ չէր

տալիս, որ մի արագապէս պտոյտքած ջրալից ամանի միջից դուրս թափէր մի կաթիլ ջուր ևս։ Մի ձգական օղ հագցրած մի բևեռի վերայ պտոյտքելով այնպէս, որպէս թէ դա նորա լիսեռն էր, կը տեսանես, որ օղը ընդունումէ մի երկայնաձև կերպարանք. երկուքին կէտքը որոնց միջից գնումէ լիսեռը, այնքան աւելի մօտենումեն իրեար, ինչքան արագ պտոյտվումէր օղը և դորա միջում դրած մասունքը օղի (շրջանակութեան էկվատորը) հեռանումէին միմեանցից և լիսեռից. այլ բառերով ասենք. օղը ստանումէ բևեռների մօտ մի տափակացած ձև, և էկվատորի մօտ, բարձրացած կերպարանք։ Այս ընդհանրապէս յայտնի փորձերը պիտոյ է դուշակել տային մեզ որ երկիրը, եթէ նա ստուգապէս շարժվումէր այդպէս արագ իւր առանցքի վերայ, պիտոյ է այս շարժողութեան բուն սկզբից, յառաջ քան թէ երկրի մասները ստացած էին պատշաճաւոր ամրութիւն, ստացած լինի նոյն ձևը։ Այս խորհրդաւոր իրողութիւնը լուսափայլ կացուցանելու համար, երկիրը նորա բոլոր մասներով, սկսեալ գծից (էկվատորից) մինչև բևեռական շրջանակքը չափած են ամենայն ճշդութեամբ, և բոլոր չափողութիւնքը տուել են միօրինակ վկայութիւն, թէ երկիրը արդարև շեղվել է իւր գնդաձևութենից և ստացել է բևեռների մօտ մի կզալի տափակութիւն, բայց էկվատորի տակ մի բարձրացած ձև, ինչպէս որ համաձայն էր մի շրջանակութեան 24 ժամի մէջ։ Նոյն իսկ սարերը որ սկսեալ բևեռից մինչև գիծը, հետ զհետէ աւելի բարձրանումեն և իբրև թէ յառաջ էին դիմում դէպ ի էկվատորը որպէս կենտրոնախոյս զօրութենից բաց նետած նիւթեր, հաստատումեն երկրի ձևը և նորա շրջանակութիւնը։ Երկրի տափականալը իւր բևեռների կողմից, պատճառ է, որ նորա առանցքը 40 վերստ փոքր է քան թէ էկվատորի միջաչափը. այն սարերը որոնց ամենամեծ բարձրութիւնը հասանումէր 7 վերստի, ևս առաւել մեծացնումեն այս զանազանութիւնը։

Մի նմանապիսի ֆիզիքական ապացոյց տալիս է մեր ժամացուցի ճօճանակի (պենդուլայի) երկայնութիւնը։ Այն ճօճանքը (տարուբերական շարժողութիւնքը) որ գործումէ պենդուլան, յառաջանումեն ծանրահակութենից կամ թէ քարշողութենից դէպ ի երկրի միջակէտը։ Եթէ բարձրացնենք ճօճանակը դէպ ի մի կողմ, ապա մնալու էր նա այս դրութեան մէջ, եթէ ծանրութիւնը չը ստիպէր նորան դէպ ի վայր գլորվել։ Բայց երբ որ նա հասանումէր ամենացած տեղին, կարող չէր դադարել, այլ հետևելով իւր ուժգին շարժողութեան ընթացքին դէպ ի մի այլ կողմ, պիտոյ է դարձեալ բարձրանար, մինչև հասանելով իւր ամենաբարձր կէտին, կրկին անգամ հետևէր ծանրութեան օրէնքներին։ Այսպէս ճօճանակը շարունակելու էր իւր շարժողութիւնը անվերջա-

նալի, եթէ օդի ընդդիմութիւնը կամ այլ խափանարար պատճառք չը դադարեցնէին նորան։ Տարուբերական շարժողութիւնքը որ ճօճանակը այս կերպով կատարում է դէպ ի այս և այն կողմ, լինում են այնքան արագ, ինչքան որ մեծ էր դրդողական զօրութիւնը, ծանրութիւնը, և ինչքան կարճ էր ճօճանակը։ Ուրեմն, միտ դնելով ծանրութեանը, կարելի է գտանել մի ճօճանակի երկայնութիւն որ մի սեկունդի մէջ պիտոյ է կատարէր մի հատ տարուբերութիւն, որպէս դարձեալ ճօճանակի երկայնութենից գտանել ծանրութիւնը։ Երկրի օրական շրջաբերութենից յառաջացած կենտրոնախոյս զօրութիւնը, որ Էկվատորի տակ ներգործում է առաւել սաստիկ, հալածում էր մարմինքը միջնակէտի մօտից, ուրեմն ուղղակի հակառակ էր ծանրութեանը, ուրեմն և բարձրացնում է ոչ թէ միայն Էկվատորը, այլև փոքրացնում այն տեղ ծանրութիւնը։ Բոլոր մարմինները Էկվատորի տակ աւելի թեթև են, և ծանրանում են նոյնքան աւելի, ինչքան որ մօտենում են բևեռներին։ Մի և նոյն ճօճանակը որ Պետերբուրգի մէջ զարկում էր սեկունդներ, Էկվատորի տակ առաւել նուաղ ծանրութեան պատճառով, անելու է աւելի դանդաղ շարժողութիւնք, ուրեմն պիտոյ է, և այն տեղ մի սեկունդի մէջ մի ճօճանք անելու համար, կարճացնվէր, ինչպէս դարձեալ, հարկաւոր էր երկարացնել ճօճանակը, երբ որ նա մօտենում է բևեռին։ Աստեղաբաշխերը սկսեալ Էկվատորից մինչև բևեռական շրջանակը կատարել են այս բանի մասին շատ ճիշդ փորձեր և ստուգել են բոլորը այնպէս, ինչպէս որ երկրի շրջաբերութենից հետևում էր, միտ դնելով ծանրութեան օրէնքներին։

Օրական շարժողութիւնը երկրի, այս առաջին մասը Կոպերնիկեան համակարգութեան հաստատված է ուրեմն նոյն իսկ փորձով։ Թէպէտև մեք չենք զգում այս շարժողութիւնը, այլև կարող չենք զգալ, որովհետև դա չէր լինում միջոցներով, այլ ամենևին միակերպ, և որովհետև մեք ինքեանքս, այլև յատակը որի վերայ կանգնած ենք մեք և օդը որ շնչումենք, որովհետև բոլորը միասին շարժվում է. բայց այդ շարժողութիւնը տեսանումենք այն բանի վերայ, որի վերայ կարող են տեսանվիլ շարժողութիւնք, այսինքն մեր շրջակայ առարկաների տեղափոխութեան վերայ (երկնքի յեղափոխութեան վերայ) և նոցա ֆիզիքական ներգործութենների վերայ, երկրի տափակաձևութեան և նորա մակերևութի վերայ եղած զանազան ծանրութեանը միտ դնելով։

Երբ որ Կոպերնիկոսը առաջին անգամ քարոզեց այս ճշմարտութիւնը, ամենասաստիկ ընդդիմախօսութիւնը որ արեցին նորան, էր այս. «Եթէ երկրագունդը, ասումէին, պտոյտվում է արևմուտքից դէպ ի արև-

ելք, ուրեմն մի քար, որ մի աշտարակի ծայրից ուղղահայեաց ցած էր թողած, ոչ թէ նորա ոտքումը վայր էր ընկնելու, այլ զգալի հեռաւորութեամբ դէպ ի արեւմուտք, ըստ որում աշտարակը բոլոր երկրի հետ միասին, քարի վայրանկութեան միջոցումը, շրջվել էր դէպ ի արեւելք։» Չէին մտաբերել որ բոլոր մարմինները որ պատկանումէին երկրին, օդը որ շրջապատումէ նորան և այն քարը որ ես ձեռքիցս թողումէի ցած, մասնակից էր երկրի շրջաբերութեանը. ուրեմն քարը իւր վայրանկութեան միջոցին ունի նոյն շարժողութիւնը դէպ ի արեւելք, ինչպէս աշտարակի ծայրը։ Չէին մտաբերել այն շատ հասարակ փորձը, որ մի քար ներքև թողած մի արագընթաց նաւակայմի վերևից, ցած է ընկնում ճշգապէս նորա ոտքումը, թէպէտ նաւը նորա անկման միջոցին նորա տակից յառաջ էր վազում, և թէ գնդակի ու կոնոնի խաղերը և այլ նմանապիսի մեքենական զբօսանքներ նաւի շարժողութեամբ չեն խափանվում։ Այս ընդդիմախօսութիւնը երևեցաւ ուրեմն ոչ թէ անհիմն, այլև յետոյ մի նոր ապացոյց դարձաւ երկրի շրջաբերութեան մասին։ Նոյն Բրիտանական փիլիսոփայ Նիւտօնը, որ երկրի տափակացած ձևը հաշուել էր քննելով նորա շրջաբերութիւնը, նկատեց նմանապէս թէ մի քար ցած իջանելով մի աշտարակի ծայրից, ոչ թէ դէպ ի արևմուտք, այլ դէպ ի արևելք պիտոյ է շեղվի, եթէ երկիրը պտոյտվումէ դէպ ի այս կողմ։ Այն րոպէումը, երբ որ քարը ընկնումէ ձեռքից, նա ունի նոյն շարժողութիւնը դէպ ի արևելք, ինչ շարժողութիւն ունի ոչ թէ աշտարակի ոտքը, այլ ծայրը, ուստի ներքև է ընկնում քարը. բայց աշտարակի ծայրը ունի մի աւելի արագ շարժողութիւն, քան թէ նորա ստորին մասը, ըստ որում աւելի հեռի լինելով միջնակէտից, կատարումէ և աւելի մեծ շրջան։ Այս աւելի արագ շարժողութիւնը դէպ ի արևելք պահպանումէ քարը իւր անկման միջոցին. ուրեմն նա, մինչև կը հասանէր երկրին, կատարումէ մի աւելի մեծ ճանապարհ դէպ ի արևելք, քան թէ աշտարակի ոտքը, ուրեմն և ցած է ընկնելու նորա արևելեան կողմումը։ Եւ այս բանի մասին վաղուց արած են շատ զգուշաւոր հետաքննութիւնք և ստուգած են նորա ճշմարտութիւնը։

Ով որ կամենումէ աշխատութիւն յանձն առնել այս բոլոր պատճառները մի փոքր ուշադրութեամբ կշռելու, նա փոխանակ երկմտելու երկրի օրական շարժողութեան վերայ, պիտոյ է մանաւանդ թէ զարմանար, թէ հարկաւոր էին հարիւրաւոր տարիներ այս ճշմարտութիւնը ընդհանրապէս ընդունելի կացուցանելու համար։ Բայց պիտոյ է ասել, որ նախնիքը արժանի են մեր ներողամտութեանը, ըստ որում ամենևին անյայտ էին նոցա ֆիզիքական ապացոյցքը այս շարժողութեան մասին, որ նոր Եւրոպացոց հանճարի գիւտն են։ Բայց թէ այս յայտնագործութենից

յետոյ և ս գտնուած են ընագէտք ու աստեղաբաշխք որ չէր կարելի խելամուտ կացուցանել ճշմարտութեանը, այդ բանը կարելի է միայն մեկնել մարդերի կամակորութեամբը իւրեանց հնացած ու ծերացած կարծիքների վերայ, այն կամակորութեամբ, որ ցաւելի է ասել, աւելի զօրաւոր օրինակներով երևում մեզ աշխարհի պատմութեան մէջ։ Արդարև, չէին կարող մարդիկ յանձն առնուլ և խոստովանել թէ այն մոլորակը որի վերայ բնակումենք մեք, որ և մեք, թէև նա մի շատ փոքրիկ ու աննշան մարմին է, կը ցանկանայինք լինել տիեզերքի միջնավայրը, ոչինչ այլ բան չէ, եթէ ոչ, մի հիւլէ, Ամենակարողի ձեռքից դուրս գլորված, որ բաց ի իւր յատուկ բնակիչներից, սակաւներին միայն նկատելի պտոյտվում շրջանակի պէս և այժմ երևակայում իւրեան, թէ բոլոր գունդերը տիեզերքի մէջ պար են գալիս նորա չորս կողմով։ Եւ մարդուս բնաւորութիւնը այսպէս է. իւր խաղաղութիւնը չը վրդովելու համար, նա ձգում բոլոր տիեզերքը շարժողութեան մէջ, և այն բաղդաւորը որ կարող էր այդպէս առնել, արժանի չէ ցաւակցութեան, այլ նախանձելի է այն մարդու պէս որ իւր փափուկ բարձի վերայ նըստած, հանգիստ աչքով նայումէր աշխարհի գործերի վերայ և երևակայումէր իւրեան, թէ պատերազմի բոլոր ահարկու տեսարանները որ դառնացնումէն մարդկութեան բարեկամի սիրտը, թէ այն հեղեղքը մարդկային արիւնի, այն այրած ու մոխրացած քաղաքները, ոտնակոխ արած հունձերը, կործանած արքայական աթոռները և սորան ու նորան բաշխած թագերը ոչինչ էին, եթէ ոչ մի խաղալիք որ տուած էր նորան իւր ժամանակը քաղցրութեամբ անցուցանելու։

Երկրի օրական շրջաբերութենից յառաջացած կենտրոնախոյս զօրութիւնը պիտոյ է բոլոր մարմինները թափ տար երկրի երեսից և ճեղքէր նոյն իսկ երկրայատակը, եթէ ծանրութեան ամենակարող կապը չը պահէր այդ մարմինները ժողով ու միասին։ Ծանրութիւնը որ սովորաբար համարումեն վայր ընկնող մարմինների յատկութիւն, մի այլ բան չէ, եթէ ոչ, մի զօրութիւն որ ուղղած էր դէպ ի երկրի կենտրոնը, որ և շատ գերազանց էր կենտրոնախոյս զօրութենից։ Այս ուժգին ձգտողութիւնը դէպ ի երկրի միջնավայրը, պատճառ է, որ ամենայն մարմին, եթէ չէր պիտոյ նորան գլորվիլ իւր տեղից, պիտոյ է ունենար ուղղահայեաց կայք, այսինքն մի այնպիսի կայք որ երկայնվելով պիտոյ է անցանէր երկրի կենտրոնի միջից. պատկերացուցէ՛ք ձեզ երկիրը որպէս մի փոքրիկ գունդ որի բոլոր մակերևութի վերայ խրած էին գնդասեղներ (քորոցներ) որոնց սուր ծայրերը ուղղած էին դէպ ի գունդի միջնավայրը. յետոյ ըմբռնեցէ՛ք այդ գունդը երկու հանդիպակաց ասեղներից, որ պատկերացնումէին բևեռները, պտոյտքեցէ՛ք նորան իւր առանցքի

վերայ աջ կողմից դէպ ի ձախը, և նկարագրեցէ՛ք մտքով, որպէս թէ այդ գունդը գտանվումէր մի անհամեմատ աւելի մեծ, դատարկ գնդի մէջ, որի մակերևութի վերայ աստղները իւրեանց պատշաճաւոր կացութեամբ միմեանց մօտ նշանակած էին. այնուհետև ունէիք դուք մի լիակատար պատկեր օրական շարժողութեան: Այն երկու ասեղները որոնց վերայ գունդը ամրանումէ, են միայն, որ անշարժ էին. բոլոր միւսերը պտոյտվումեն դէպ ի ձախ կողմը, ուրեմն մօտենումեն այն աստղներին որ կան նոցա ձախ կողմումը, յետոյ թողումեն նորանց իւրեանց աջ կողմումը և հեռանումեն դէպ ի ձախ. կամ ուրիշ բառերով ասենք. աստղները երևումեն թէ շարժվումէին ձախակողմից դէպ ի աջակողմ: Այն կէտը որ կայ առաւել մեծ երկնային գունդի վերայ, որ ուղղակի կանգուն է միւս ասեղի գլխի վերայ, ասվումէ Զենիտը (գագաթնակէտը) այն երկրատեղի որ պատկերացնումէ այս ասեղը. երկնքի հակադիր կէտը ասվումէ նորա Նադիրը (սուզակէտ): Երկու ասեղներ, որոնց ծայրերը կամ ոտերը հակադարձ են միմեանց, պատկերացնումեն Հակոտնեայք (Անտիպոդք): Եթէ մտածէինք այլեւս մի քանի փայլուն միջատներ, որ մեծ դատարկ գունդի մակերևութի վերայ, պայծառ կէտերի մէջ որ պատկերացնումեն աստղները, սողումեն ծանրապէս, ապա նայեցողի աչքը որ բռնումէր այս ասեղներից մինի տեղը, պիտոյ է կարծէր թէ տեսանումէ այս միջատները բոլոր երկնքի հետ միասին շրջաբերվելով, և նոյն միջոցին նկատելու էր որ նոքա իւրեանց կացութիւնը աստղների մէջ կամ թէ երկնակամարի վերայ փոփոխումէին. Նա նկատելու էր նոցա ընդհանուր օրական, բայց և սեփական շարժողութիւնը: Այս բանը առաջնորդումէ դէպ ի արեգակի և մոլորակների շարժողութիւնը:

(Շարունակութիւնը յետագայ տետրակում:)

ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ

ԵՒ

ՄԽԻԹԱՐԵԱՆՔ։

ՅՕԴՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՄԽԻԹԱՐԸ։

—

Տասներեքերորդ դարու ելքումը Հայաստանի վերջին արքայական տունը — Ռուբէննեանց իշխանութիւնը շիջանելով, կորուսին Հայերը իւրեանց ազատութեան վերջին մնացորդը։ Ազգի մի մասը, մնալով իւր հայրենական աշխարհի մէջ, մեռանումէ իւր տների փլատակների և թըշնամու սրի տակ. միւս մասը, յօժարակամ տարագիր գնալով իւր աշխարհից, ցան ու ցիր է լինում դէպ ի երկրի չորս հողմերը, որոնելով աշխարհի վերայ մի տեղ ուր կարող էր դնել իւր գլուխը, ուր կարող էր որ և իցէ ճանապարհով վաստակել իւր օրական ապրուստը։ Այս թշուառ իրողութիւնների մէջ շիջաւ Հայաստանում լուսաւորութեան ճրագը, այս տեղ ու այն տեղ շատ աղօտափայլ պահպանվելով միայն Հայաստանի վանքերի մէջ։ Բայց ի՞նչ էր այդ պահպանութիւնը համեմատելով այն կարօտութեան հետ, որ զգումէր ազգը։ Մարդկութեան առաջև բացվումէր նոր անցքերի տեսարանը, մարդկային իմացականութիւնը միջին դարերի վերջումը խմորվելով դուրս էր թափվում հեղեղաբար, ազգերի դրութիւնը բարւոքելու, տգիտութեան խաւարը փարատելու և նոր ասպարէզներ բանալու մարդկային գործականութեան համար։ Այն տեղ Կոլումբոսը իւր առաջարկութիւնքը ձեռքին ծեծումէր թագաւորների դուռերը և ստանալով մի փոքր պաշտպանութիւն մտանումէր խորհրդական ծովերի մէջ մարդկութեան համար նոր աշխարհ բանալու. միւս տեղ Գուտտենբերգը իւր սրածայր գործիքին ենթարկելով ձայն նշանակող տառերը հնարաւորումէր տպագրութեան գիւտը, որով պիտոյ է ազատվէր մարդկային միտք ու բանականութիւնը մագաղաթների բանդից և թև ու թռիչք ստանալով պիտոյ է

տարածվէր ամենայն տեղ, մի հատ մարդու սեփականութիւնը հասարակաց մարդկութեան սեփականութիւն չինելով. մի այլ տեղ մարդկութիւնը հոգևոր անարժան ստրկութեան մէջ, եկեղեցական իշխանութեան չարաչար գործադրութեամբը, հանդէս էր հանում Աւետարանի ճշմարտութիւնը ընդդէմ կոյր հաւատի և անպտուղ ծխակատարութեան, և քաջութեամբ պատերազմելով խաւարի և մոլորութեան հակառակ, հիմնումէր իւր քաղաքական կեանքի կարգերը ճշմարտութեան վերայ էապէս: Ահա այսպիսի ընդհանուր գործողութեան մէջ էր մարդկութիւնը Եւրոպայում, մինչ Հայոց ազգը ծառայ և ստրուկ դարձած օտարի, վիզը դնումէր ամենայն հնարաւոր լուծի տակ մի կտոր հացի համար, մինչ Հայոց ազգի աբեղայքը փակված իւրեանց վանական խցերում, անգիր էին ուսանում Արիստոտէլի Պորփիւրոսը, և Դաւիթ անյաղթ փիլիսոփայի սահմանքը: Տխուր տեսարան, ողբալի դրութիւն որի մէջ մեր սիրական Հայոց ազգի կեանքը օր ըստ օրէ վայրենացաւ, Նախնի ժամանակների յստակ հայախօսութիւնը աղաւաղվեցաւ և մի անմխիթար, աղջամուղջ գիշեր տարածեց առ հասարակ Հայաստանի հորիզոնի վերայ իւր խաւար վարագոյրը:

Թէպէտև Ռուբինեանց թագաւորութեան ժամանակ ես չենք տեսանում Հայաստանումը սէր և պաշտպանութիւն լուսաւորութեան, թէպէտև շատ անմխիթար յիշատակարանք, այո, և թագաւորների հրովարտակքը և կաթուղիկոսների կոնդակները ցոյց են տալիս մեզ իւրեանց մէջ և իւրեանց կերպարանքով ազգի տգիտութիւնը և լեզուի օրէ օր աղաւաղվիլը, թէպէտև դոյն այդ ժամանակում լսումենք Լամբրոնացու գանգատները այնպիսի բաների վերայ, որ անմիջապէս յառաջանումէին մեր ազգի հոգևորների և մարմնաւորների անդաստիարակութենից, բայց Ռուբինեանց թագաւորութեան կործանվելուց յետոյ օրէ օր ևս առաւել սաստկանումէ տգիտութիւնը, ևս առաւել թանձրանումէ խաւարը և ազգը համօրէն ընկնումէ մի մահանման քնի մէջ: Հայոց ազգը առանց աչք բանալու քնումէ միալար չորս հարիւր տարի — մինչև տասնևութերորդ դարու սկիզբը:

Այս դարը պիտոյ է աւելի բաղդաւոր ժամանակներ պատրաստէր Հայկական դպրութեան համար. սորա միջոցին վերստին զարթնումէ ոչ թէ միայն հին Հայկական դպրութեան ուսումնասիրութիւնը, այլև ականաւոր մարդիկ շատ, աշխատումէն, ուսումնարաններ չինելով և Եւրոպական նոր լեզուներից գրեանք թարգմանելով, վեր բարձրացնել այնքան խոր տգիտութեան մէջ թաղված ազգը, և ներս բերել նորան Եւրոպական քաղաքաշինութեան շրջանակի մէջ: Բայց ցաւելի է ասել,

որ Հայաստանի հողը, որի վերայ մի ժամանակ այնքան հոյակապ մարդիկ կարողացել էին սերմեր տնկել և պտուղներ յառաջացնել, չունէր այլ ևս այն բարոյական ընդունարանը, որ հարկաւոր էր իւրաքանչիւր հոգևոր սերմանացանութեան համար։ Հայոց ազգի փոքր ի շատէ իմացական նորոգութիւնը պիտոյ է կատարվէր ոչ թէ բուն Հայաստանի հողի վերայ, այլ, Հայաստանից դուրս, օտար աշխարհում։ Հայկական դըպրութեանը պիտոյ էր հիւր գնալ Իտալիա և օտարի հացով սնանել, որովհետև ինքը ազգը, ինչպէս մեր ժամանակներում ևս, իւր հայրենասէր որդիների համար ո՛չ հաց ունէր և ո՛չ պատիւ. ամենայն մարդ մտածումէր առանձնապէս իւր օգտի վերայ, որպէս թէ մասնաւոր օգուտը կարելի բան էր առանց ընդհանուրին։

Տասն և ութերորդ դարու գործակատարութիւնը, Հայկական դըպրութիւնը վերակենդանացնելու համար, կատարվեցաւ Մխիթար Սեբաստացու ձեռքով։ Այս ականաւոր մարդը, Վենետիկի Մխիթարեան ընկերութեան հիմնադիրը, զանազան չափով ու կշռով մեծարվումէ այս և միւս կողմից։ Ոմանք համարումեն նորան մի մեծ արդիւնաւոր, համաշխարհական պատմութեան պատկանաւոր մարդ, որ իւր ազգի գրաւոր յիշատակարանքը դուրս է փորել հնութեան աւերակների տակից և իւր աշակերտների ձեռքով բացել է Հայերի համար նոցա մայրենի լեզուի և դպրութեան ժանդատած դուռը. ոմանք համարումեն նորան մի անհաւատարիմ, վատթար որդի, որ, բաժանվելով իւր մայրենական եկեղեցուց, միացել է օտար ազգի ու կրօնի հետ և այդպէս եղել է իւր ազգին ոչ թէ արդիւնաբեր, այլ վնասաբեր ևս, այլև չար և թունաւոր պտուղների պատճառ ապագայումը։ Այս երևելի Մխիթարը արժանի է մեր առանձին ուշադրութեանը և նորա վաստակքը իրաւունք ունին պահանջելու մեզանից մի անկողմնապահ սառն քննութիւն և արդարակշիռ հատուցումն։

Մխիթարը, իւրանուն միաբանութեան հիմնադիրը, ծնեցաւ Սիբաս կամ Սեբաստիա քաղաքումը փոքր Հայաստանի, երկու օրաճանապարհ դէպ ի հարաւ հեռի Թոխաթից 1676 թ. փետրվարի 7-ին։ Մխիթարի հօր անունը էր Պետրոս Մանուկեան, իսկ մօր անունը Շահրիստան։ Իւր առաջին դաստիարակութիւնը ստացաւ նա, երկու բարեպաշտ կրօնաւոր կանանցից, որ միշտ սովոր էր նա սիրով յիշել իւր ծերութեան օրերումը, ընծայելով նոցա իւր կեանքի բոլոր ուղղութիւնը։ Մխիթարը, տասն և չորս տարեկան հասակում ձեռնադրվեցաւ սարկաւագ և ապա ճանապարհորդեց դէպ ի Հայաստանի հռչակաւոր վանքերը. եկաւ և Էջմիածին։ Նա քսան տարեկան հասակում ձեռնադրվեցաւ

քահանայ, և մի փոքր յետոյ ստացաւ Կարին քաղաքում Մարգար վարդապետից (որ և արքեպիսկոպոս) վարդապետական գաւազան։

Վաղուց արդէն հասկացել էր Մխիթարը, թէ որպիսի ցած դրութեան մէջ էր իւր ազգը իմացական մասին, «Թող Աստուած տայ», գրում է նա իւր նամակների մինի մէջ, «որ ես կարողանայի մի միաբանութիւն հաստատել, որ դնէր իւր առաջև, որպէս գլխաւոր նպատակի, տարածել ազգի մէջ բոլոր հարկաւոր և օգտակար տեղեկութիւնքը, մի ընկերութիւն, որի խորհուրդը լինէր հոգալ ազգի բոլոր թէ հոգևոր և թէ իմացական պիտոյքը։» Մխիթարը իւր ձեռնարկութեան մէջ ունէր յաղթել շատ դժուարութենների. բայց նա չը վախեցաւ։ Սորա հակառակ, նա այն մարդերից էր, որ հանդիպելով մի ընդդիմութեան, սովոր են միայն լարել իւրեանց հոգու կարողութիւնքը և ամրանալով ևս առաւել, գրաւել յաղթութեան արմաւենին։ Մխիթարը իւր դիտաւորութիւնը յայտնեց մի քանի վարդապետների, որ իւր ժամանակումը հռչակաւոր էին Հայաստանումը. բայց սոցանից ստացաւ մի մերժողական կամ հրաժարական պատասխանի։ Այնուհետև ճանապարհ ընկաւ նա դէպ ի Կոստանդնուպօլիս, ուր բնակվում էր Կարնեցի Խաչատուր վարդապետը, որ աշակերտված էր պապական ուսումն տարածելու դպրոցին, (Propaganda). Մխիթարը դիմեց այդ դաժան հոգու տէր մարդու մօտ և յայտնելով իւր խորհուրդը խնդրեց նորա օգնականութիւնը։ Կամենալով դեռ ևս խուն ծխել Խաչատուրի պատուասիրութեանը, առաջարկեց, որ ինքը Խաչատուրը գլուխ լինի այդ միաբանութեանը, իսկ ինքը Մխիթարը լոկ գործակատար։

Խաչատուր, վարդապետ ասացեալ պապական աբեղան, ժամանակ չունէր մտածելու իւր ազգի վերայ, Պապականութիւնը վաղուց աչա արմատացած լինելով նորա մէջ Հայութեան փոխանակ. նա աշակերտ լինելով մոլեկրոն պապական դպրոցի, այն ջանքի վերայ էր, որ կարողացածի չափ տարածէր Հայոց ազգի մէջ Պապականութիւնը։ Այս մարդու անճոռնի քարոզագիրքը տպվեցաւ Հայերէն, որի մէջ իւր բոլոր մեծ վայելչութեամբ երևում է սոփեստական և սխօլաստիկական կրթութիւնը և որի իւրաքանչիւր թերթերից կաթում է Պապականութեան թոյնը։ Այսպիսի հոգու տէր մարդու համար ինչ էր Մխիթարի առաջարկութիւնը, այս պատճառով ևս, շատ դժուարութիւնք, այլև, մեծ արծաթադլխի կարօտութիւն մէջ բերելով, հրաժարվեցաւ Մխիթարի գործակցութենից։ Մխիթարը դատարկ դուրս գալով իւր յոյսից, որ ունէր Խաչատուրի վերայ, գնաց դարձեալ Հայաստան և յայտնելով իւր խորհուրդը Մարգար վարդապետին խնդրեց նորա ձեռնտուութիւնը.

բայց և այս եպիսկոպոսը չէր կամենում կամ չէր կարող օգնել Մխիթարին, այս պատճառով և զանազան արգելառիթք մէջ բերելով հրաժարվեցաւ նպաստ լինել նորան։

Կտրած էր այնուհետև Մխիթարի յոյսը մարդերից։ Աստուծոյ անքննելի տնտեսութեանը յանձնելով իւր անձը և իւր բարի խորհուրդը, 1700 թուականին վերստին գնաց Կոստանդնուպոլիս։ Այս տեղ քանի անգամ քարոզ տուեց նա Ղալաթիայի Սուրբ Լուսաւորիչ եկեղեցումը, ուր օրէ օր բազմացան նորա լսողքը։ Արդէն իւր առաջին տարու կեցութեան միջոցին Կոստանդնուպոլսումը սկսեց նա ճարել իւր համար աշակերտք ու բարեկամք, որոնց թիւը շուտով հասաւ իննի։ Նոքա բնակվումէին մի տան մէջ, որ Մխիթարը վարձել էր Պերա (Բէյօղլու) ասացեալ տեղում, որ տեղից կիւրակէ օրերը գնումէր Ղալաթիա քարոզութեան համար։ Այս միջոցին տպագրել տուեց նա Թովմաս Կեմպացի անունով գիրքը, յետոյ, «Գիրք մտածութեանց», Յովհաննու յայտնութեան մեկնութիւնը, որ Մծխէթացի Յովհաննէս վարդապետը թարգմանել էր և Սաղոմոնի երգոց երգոյն մեկնութիւնը, որ թարգմանել էր Կարնեցի Խաչատուր վարդապետը։ Այս տեղ իւր աշակերտներից մի քանիքը ձեռնադրել տուեց քահանայ, որոնց և ուղարկեց քարոզութեան համար։

Մխիթարը, որ ինչպէս երևումէ, դաւանող էր իւր Հայկական ազգային եկեղեցուն, իւր, Լատինական հոգևորների հետ ունեցած կենակցութեան այլև այն նախապատիւ սիրու պատճառով, որ ունէր դոցա հետ, կասկածանք տուեց Կոստանդնուպոլսի Աւետիք վարդապետին։ Չկամինք այս տեղ երկարաբանել Աւետիքի հալածասէր և բարբարոս ընթացքի վերայ, չկամինք յիշել, որ նա խաբերայութեամբ կամենումէր ձեռք ձգել Մխիթարը, բարեկամանալով Կապուցինեան աբեղաների Ցակինթոս վանահօր հետ, որի հովանաւորութեան տակ դիմել էր Մխիթարը Յիսուսեան աբեղաների խորհրդով, այլ այս միայն յիշենք, որ Մխիթարը 1701 թուականի սեպտեմբերի 8-ին հաստատեց մի հոգևոր կարգ իւր ինն աշակերտներով, որոնց վերայ իսկոյն յաւելացան այլ ևս եօթն, որոնցով բոլորի թիւը դարձաւ տասն և վեց։ Աւետիքի հալածանքը սաստկանումէր, և ահ կար Մխիթարին Օսմանեան անքրիստոնեայ կառավարութեան երեսից, որի գործակատարքը կաշառվելով, շատ հեշտ կորուսանումէին մի մարդ մանաւանդ այն ժամանակներում։

Այս պատճառով հարկադրված էր Մխիթարը ծածուկ փախչել Տաճկաստանից։ Աշակերտներից երկու երկու ուղարկեց նա Մորէա, որ

գտանվումէր Վենետիկեան հասարակապետութեան ձեռքում և ինքը երեք աշակերտով վաճառականի զգեստով նաւ նստեց և գնաց Զմիւռնիա, ուր գտանելով մի Վենետիկեան նաւ, որ գնալու էր Մօրէա, մտաւ նորա մէջ և անցաւ շուտով դէպ ի Մօրէա։ Մի քանի ժամանակ մնաց նա Ցանթէ կղզում, ուր կամք ունէր սկզբում բոլորովին մնալ իւր ընկերութեան հետ միասին։ Բայց այն յաջող լուրերը, որ նորա բարեկամները տուած էին նորան Մօրէայից, պատճառ տուեցին նորան գնալ այն տեղ. որովհետև գրումէին նորա աշակերտքը, թէ այն տեղի իշխանքը պատրաստ էին տալու բնակութեան տեղ ու ապրուստի հնար։ Այս հիմքի վերայ դուրս եկաւ Մխիթարը Ցանթէ կղզուց և 1703 թ. հասաւ Մօդօն կամ Մօթօնէ, և Վենետիկեան կառավարութենից, որ, ինչպէս յայտնի է, այն միջոցին իշխումէր բոլոր Մօրէայի վերայ, պարգև ստացաւ մի կտոր հող, նորա վերայ վանք ու եկեղեցի շինելու համար։ Այս ժամանակիս, կամ թէ մի փոքր յառաջ, պիտոյ է պատահած լինի և նորա յանկարծ փոխանցութիւնը դէպ ի պապական եկեղեցու հետ միաւորված Հայերի կողմը։

Վենետիկեան Ծերակոյտը (սենատը) դեռ ևս հարիւր տարի յառաջ, այսինքն տասն և եօթներրորդ դարու սկզբում վճիռ էր կապել, որի զօրութեամբ արգելվումէր նոր ի նորոյ հող և տեղ տալ հոգևորների և վանքերի օգտի համար, որ ծանրութիւն էին հասարակապետութեանը իւրեանց հարստութեամբ և ամենայն հարկատուութենից ազատութեամբ։ Կտրիճ Ծերակոյտը այս իւր ընթացքով բորբոքել էր Հռովմի որոտալից փայլակները։ Պաւլոս հինգերորդ պապը 1605 թ. յաջորդելով Կլեմենտ ութերորդին, դուրս էր ձգել եկեղեցուց Ծերակոյտը և Նախագահը և բանադրել էր բոլոր հասարակապետութիւնը։

Այս անճոռնի և Աւետարանի վարդապետութեան հակառակ կոնդակը, որ Պաւլոս Պապը յուսալով իւր անմեղանչականութեան և Աստուծոյ երեսփոխան լինելու վերայ արձակել էր, ընդունելի էր եղած Կապուցինեան և Յիսուսեան աբեղաներին միայն։ Ծերակոյտը տեսանելով այս բանը, արդէն վճռական պատճառ էր ստացել հալածել Յիսուսեանքը իւր տէրութենից 1606 թուականին, որպէս առաւել կասկածաւոր և վնասակար տէրութեանը քան թէ միւս աբեղայական կարգերը։ Այսպէս էր Վենետիկեան հայեացքը աբեղայական կարգերի և վանքերի վերայ. հերիք չէր այս. մինչ Պաւլոսը տեսանելով, որ Ծերակոյտը և բովանդակ հասարակապետութիւնը բանի տեղ չդրեց իւր կոնդակը, հարկադրված էր զօրացնել իւր նզովքը զէնքի ուժով, Վենետիկեցիք նոյնպէս պատրաստվեցան զէնքը ձեռքերին պաշտպանել

իւրեանց իրաւունքը և անկախութիւնը, մինչև որ Ֆրանսիայի թագաւոր Հենրիկոս չորրորդը միջնորդ լինելով երկու հակառակ կողմերի մէջ հաշտեցուց նորանց։

Եթէ Վենետիկեան հասարակապետութիւնը չէր յօժարում տեղ ու հող տալ պապական հոգևորների և վանքերի համար, ինչպէս տեղ կը տար մի օտարազգեան միաբանութեան։ Մեք այլապէս չենք կարող մեկնել Վենետիկեան կառավարութեան այդպիսի առատասիրտ գործակատարութիւնը, քան թէ այն խորհրդով, որ կառավարութիւնը տեսանելով մի օտար ազգից հատուածեալ միաբանութիւն, որ պատրաստ էր նուիրել իւր կրօնը, կեանքը, գոյքը և զօրութիւնը պապական ծառայութեան· այդպիսի փաղաքշանքով ներս ընդունեց նորանց, ապացուցանելու համար իւր նախանձաւորութիւնը Պապականութեան օգտին, որի մասին քանի անգամ բամբասված էր որպէս անտես առնող։

Մի քանի Կոլլեգիացի պապական աբեղաների ձեռքով Մխիթարեանց մասին գրուած տեղեկութեան մէջ խօսք է լինում, թէ Վենետկի կառավարութիւնը այն խորհրդով շնորհել է Մխիթարին և նորա միաբանութեանը հող, բնակութիւն և պաշտպանութիւն, որ ծաղկեցնէ Մօրէան զանազան տեսակ բնակիչներով։ Բայց մեք ընդունել մի այդպիսի անհիմն խորհուրդ չենք կարող· մի մասնաւոր մարդ կարող է միայն իւր հաճոյքի և զուարճութեան համար կարգադրել իւր ստացուածքը, բայց մի տէրութիւն, և այն Վենետիկեան հասարակապետութիւնը, չէր կարող այլապէս ներգործել այսպիսի դիպուածների մէջ քան թէ քաղաքական կամ կրօնական խորհրդով։ Այս ևս հաւաստի է, որ հասարակապետութիւնը հաւատացած էր, թէ մի աբեղայական կարգ, և այն չքաւոր, խեղճ ողորմելի վիճակում, և կտրած բաժանած իւր ազգից, ոչինչ քաղաքական հանդէս չէր կարող ունենալ պատմութեան մէջ· ուրեմն մնում է մեզ անտարակոյս մտածել, որ այդ իրողութիւնը պատահել է կրօնական մտքով, ապա ուրեմն Մխիթարը և նորա դեռահաս միաբանութիւնը ընդունած էին արդէն այդ միջոցին Պապականութիւնը։

Ինչպէս և եղած լինէր այդ բանի շարժառիթը, այսքանս ստոյգ յայտնի է, որ 1712 թուականին Կլեմենտ տասն և մի երրորդ Պապը հաստատեց Մխիթարեան միաբանութիւնը, որ այնուհետև ստացաւ Բենեդիկտեան կարգի կանոնադրութիւնը Անտօն աբբայի անունով և այդ պատճառով ևս ինքը Մխիթարը անուանվեցաւ Աբբա։

Մխիթարը վանք ու եկեղեցի շինելով Մօթօնէումը, երկար չը կարողացաւ մնալ այդ տեղ. քաղաքական խռովութիւնք հարկադրեցին նորան տեղափոխ լինել շուտով: Արդարև, Վենետկեցոց անյաջող պատերազմը Տաճիկների հետ, արդարացի կասկածանք տուեցին Մխիթարին, մի գուցէ Մօթօնէն անցանէր Տաճիկների ձեռք և ինքը Մխիթարը իւր միաբանութեան հետ միասին, արդէն որպէս յայտնի Պապական, որպէս վկայեալ կրօնադրուժ, մատնվէր բուն Հայոց հոգևորականութեան ձեռքը Կոստանդնուպօլսի մէջ: Այս պատճառով Մխիթարը 11 աշակերտով 1715 թուականին նաւ նստեց ու գնաց Վենետիկ, միւս աշակերտքը թողնելով Մօթօնէ քաղաքում, որպէս պահապան վանքին և եկեղեցուն: Երբ որ Մօթօնէում լսած էին, թէ Մխիթարեանց վանքն ու եկեղեցին քարուքանդ են եղած Տաճիկների ձեռքով (1717-ին), Վենետիկեան Ծերակոյտը մշտնջենաւոր ժամանակով պարգևեց միաբանութեանը Սուրբ Ղազարոսի վանքը, մօտ մի ժամ հեռաւորութեամբ Մարկոսեան հրապարակից, դէպ ի Լիդօ: Մխիթարը և նորա աշակերտքը տեղափոխվեցան դէպ ի այդ կղզին, ուր եղած էր յառաջուց մի հիւանդանոց, ուստի յառաջացած է և անունս Սուրբ Ղազարոս—Մխիթարեան հոգևոր կարգի հիմնարկութեան օրին, այսինքն 1717 թուակ. սեպտեմբերի 8-ին: Այս տեղ Մխիթարը հիմնարկեց մի նոր եկեղեցի և մի նոր վանք, որ կայ և մինչև այսօր: Պատմու-մն, թէ Մխիթարը մի գեղեցիկ կերպարանքով մարդ էր, հեզ և խաղաղ հոգով. բայց այս նորա հեզութիւնը և խաղաղասիրութիւնը, առիթ է եղել, որ Հայաստանի աբեղայքը մականուանել են նորան «լաւ չէ». պատճառ, Մխիթարը տեսանելով մի անպատեհ բան, սովոր էր ստէպ կրկնել «լաւ չէ,—լաւ չէ»:

Մխիթարի գեղեցիկ յատկութիւններից մինն էր նորա համբերութիւնը այլև հաստատութիւնը իւր կամքի վերայ. արդարև այնպիսի յատկութիւնք, որ հեշտ ճարեցին նորա համար բոլոր բարեացակամների սէրը և յարգութիւնը: Եւ այսպէս թափվեցան նորա մօտ ամենայն կողմից առատաձեռն պարգևներ, և Վենետկեան Ծերակոյտը շնորհեց միաբանութեանը ամենայն կարելի թեթևութիւնք: Այսպէս միայն հնարաւոր եղաւ Մխիթարին վաստակել այն անսովոր մեծ վաստակը, որ արդարև վաստակել է նա. բայց մեր խոհական և մտածող Հայ սրտի համար որքան պիտոյ է ծանրանայ այս պատմութեան տրտում խորհուրդը, այդ անցքի իմաստասիրական եզրակացութիւնը մեր ներկայի համար: Մխիթարը և Հայկական ուսումը չը գտանելով ոտքի ու կայքի տեղ իւր հայրենական հողի վերայ և ազգի մէջ, պիտոյ է մուրացկանի պէս օտար աշխարհ գնային, օտարի հողի վերայ, օտարի հացով ու

ողորմութեամբ լուսաւորութեան ճանապարհ բանայիս Հայոց ազգի համար։

Այսպէս ահա կատարվեցաւ Մխիթարեան միաբանութեան հիմնարկութիւնը։ Այդ միաբանութիւնը սկզբումն ունէր ստուգապէս այն խորհուրդը, որ վերակենդանացնէ Հայկական դպրութիւնը․ բայց այս առաջարկութենով Մխիթարը չէր կարող բաղխել Վենետկեան կառավարութեան և Պապի մարդասիրութեան դուռները։ Այս տեղերում ցոյց է տալիս նա որպէս միակ խորհուրդ իւր միաբանութեանը, մշակել Հայոց լեզուն և այս մշակագործութեամբ տարածել Հայոց ազգի մէջ պապական ուղղափառութիւնը․ և Պապը և Վենետկեան կառավարութիւնը նայումէն այս միաբանութեան վերայ, որպէս մի Պապականութեան գործիքի վերայ։

Եւ այս էր պատճառը, որ Վատիկանը արթնապէս հսկումէ և աչք է պահում այս միաբանութեան վերայ, և մի քանի բամբասողների խօսքը հերիք պատճառ է լինում Պապին, կասկած տանելով Մխիթարի պապականութեան վերայ, Հռովմ դանչել նորան արդարանալու համար։ Եւ այն Կարնեցի Խաչատուր վարդապետը, որ յառաջ հրաժարվել էր Մխիթարից, որպէս բուն հայկական վարդապետից, այժմ պաշտպանողական և բարեխօսական նամակներ է հասուցանում Հռովմ Մխիթարի օգտի համար։ Մխիթարը, — ցաւելի Մխիթարը, — ամենայն կարեկցութեան արժանի Մխիթարը, այսպիսի հանգամանքների մէջ չէր կարող այլ լուսաւորութիւն տալ Հայերին քան թէ Պապականը, որովհետև Պապականութեան ուսերի վերայ միայն կարող էր նա գործ կատարել․ և ինչպէս ծառը, այնպէս և պտուղքը։

Աշխարհի երեսին մի մարդու մտադրութիւն պատահելով տեսակ տեսակ հանգամանքների, կարող է և տեսակ տեսակ ուղղութիւնք ստանալ․ մեք չենք կարող համաձայնիլ այն մարդերի հետ, որ ասումէին թէ, Մխիթարը իւր սրտի մէջ յղանալով կազմել մի ընկերութիւն, մտածած լինէր, թէ այդ ընկերութեան խորհուրդը լինելու է Հայոց ազգին Պապականութիւն քարոզել, Հռովմէական եկեղեցուց դուրս գտանված Հայերը հերետիկոս, հերձուածող և փրկութիւն չգտանելոց ճանաչել․ չենք կարող թոյլ տալ, որ նա երազում ևս տեսած լինէր թէ պիտոյ է գայ մի օր, երբ նորա միաբանութեան գլխաւորը կամ, աւելի ուղիղ, իւր յաջորդը թղթերով ու երդումներով նզովէր իւր բուն Հայկական եկեղեցին և այդ ճանապարհով շահէր Պապի սիրտը, երբ նորա միաբանութեան անդամները աշխարհին հրատարակէին, թէ «Պապին համար գրիչը ձեռքը կացած է, Պապին համար է ապրում

և այլն և այլն» (*)։ Մեք հաւատացած ենք, որ Մխիթարի սիրտը մաքուր է եղած, որ նա ընկնելով Պապականութեան հողի վերայ, հարկադրվել է սկզբումը Պապական ձևանալ. Նորա մեղքը չէ, որ նորա միաբանութիւնը նորանից յետոյ նախապատիւ համարելով այս ձևաւորութիւնը քան թէ իւրեանց Հիմնադրի բուն խորհուրդը, դարձել են Պապականութեան մշակներ կամ լաւ ևս ասել արծաթագին ստրուկներ, իւրեանց ազգի մատնիչք և պարսաւիչք կրօնական կողմից Իտալական պարսաւագրքերով։ Բայց միտ դնելով ներգործող պատճառներին, Մխիթարեան ընկերութեան նոյն իսկ սկզբնական պայմաններին պապական հովանաւորութեան տակ, միտ դնելով այս և մարդերի անձնապահպանութեանը, երբէք զարմանում չենք, որ գործերի ծուռ ու սխալ ընթացքը հասուցել է և մի վնասակար նպատակի. բայց այդ վնասակար նպատակը, այդ տխալ պտուղները որ բերել է շատ մասներով Մխիթարեան միաբանութեան գործականութիւնը, ծածկած ու դրած էին նոյն իսկ սերմերի, նոյն իսկ հիմնարկութեան պայմանների մէջ և յառաջ ու յետոյ պիտոյ է մի օր աճէին, կերպարանք առնուին և դուրս երևէին այնպէս, ինչպէս որ տեսվեցան։ Աշխարհի կարգը այդպէս է, այսինքն բնական կարգ է. միայն պիտոյ է հասկանալ նորան. մեղաւոր չէ ոչ Մխիթարը և ոչ նորա յաջորդքը, այլ միայն արժանի մեր խորին ցաւակցութեանը. մեղաւորը և շատ մեղաւորը, եթէ կը ներեն Հայք մեր համարձակութեանը, ինքեանք են, որ չգիտեն և չկամին հասկանալ թէ Հայը օտարի թևերի տակ գործ կատարելով, օտարի հացը ուտելով, միշտ պիտի օտարին գովէ, օտարի օգուտը պաշտէ, և իւր ազգից հեռանայ ու օտարանայ, այլև վնասակար լինի նորան։ Այսպէս է մարդկութեան կարգը. կամ իւր ազգի թևերի տակ, կամ օտարի թևերի տակ և դորա բոլոր վնասակար հետևանքներով միասին. Tertium non datur.

Մխիթարեան միաբանութիւնը երբեմն բաղկացած է մօտ իբր 60 *անդամից, որոնց թիւը նուաղած է այժմ եթէ առնունք մի միայն Վենետիկեան Ս. Լազարու միաբանութիւնը, որովհետև Վիեննայումը ևս գտանվումեն Մխիթարեանք, որ կազմումեն այժմ առանձին միաբանութիւն։*

Մխիթարը աւարտեց ու կնքեց իւր բազմաշխատ կեանքը աշխարհի վերայ ապրիլի 16-*ին*, 1749 *թուակ.*, 74 *տարօք. Նորա մարմինը թաղված է Ս. Լազարու վանքի եկեղեցու մէջ։ Մխիթարը արեց*

(*) Եւրոպա լրագիր. Վիեննա, 1853, Յունվար. համար 1։

ինչ որ կարողացաւ և ինչպէս միայն հնար էր նորան. բայց նորա պարծանքը ուրանալ, որովհետև այլապէս կարողացած չէր, ոչ ով չունի իրաւունք: Նա Հայկական դպրութեանը և լուսաւորութեանը զոհեց իւր հանգստութիւնը, իւր անձը մատնեց հազարաւոր նեղութենների, բամբասանքի և հալածանքի, չը խնայեց մինչև անգամ իւր հայրենի կրօնը, որի մէջ ծնել ու մեծացել էր: Այս բոլոր զոհաբերութիւնքը յանձն է առել նա Հայկական դպրութեան համար. թող նորա բամբասողքը առաւել լաւ գործ կատարեն, թող խրատ քաղելով նորա արածների հետևանքներից, հաստատեն իւրեանց մէջ մի հարազատ լուսաւորութեան կենտրոն, թող մի անսխալ հիմքի վերայ մի առողջ գործ հիմնարկեն և յառաջ տանեն նորան միաբան զօրութեամբ, որպէս արժան էր Լուսաւորչի լուսազգեստ լինելոց որդիներին, եթէ վերջապէս հասկացած էին թէ անօգուտ, այլև վնասակար էր Մխիթարեանց պղտոր պապական լուսաւորութիւնը.

Այս տեղ պատշաճ ենք համարում հրատարակել մի նամակ— «Տեղեկութիւն ի վերայ Մխիթարեանց բնակելոց ի Վենետիկ», թէև այդ նամակը իւր լեզուի հնութեամբը չէր կարող տեղ գտանել Հիւսիսափայլի մէջ, թէև մեծ մասով կրկնութիւն էր մի քանի բաների որ մինչև այժմ ասած էինք, այնու ամենայնիւ անխորհուրդ չէր դորա հրատարակութիւնը, և թող մեր սիրելի ընթերցողքը ուշադրութեամբ կարդան և դատաստան կատարեն.

«ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՅ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ԲՆԱԿԵԼՈՑ Ի ՎԵՆԵՏԻԿ.»

«Կառուցանող միաբանութեանս եղև նա ինքն Մխիթար Աբբայ,
«որ էր Սեբաստացի, սնեալ 'ի մէջ նոյն իսկ ազգին Հայոց և կրօնաւո-
«րեալ ըստ Հայոց 'ի վանս Սուրբ Նշան կոչեցեալ, յորում բնակէին
«վանականք Հայոց: Յորում ժամանակի վիճակ կրօնին Հայոց յերիս
«բաժանէր, որպէս և յայսմ ժամանակի. այսինքն սակաւաթիւ ոմանք
«բուն ուղղափառք, թէպէտ այժմ շնորհիւ տեառն բազմաթիւ երևին.
«իսկ երկրորդ և երրորդ մասն, որ կազմէր զբաժանեալսն յուղղափա-
«ռաց, էր գրեթէ բովանդակ ազգն Հայոց, որոյ մի մասն, զոր և երկ-
«րորդ կոչեմք, որ առաւել յաշխարհականս գտանէր, էին բարեմիտք,
«չունէին ինչ հակառակութիւն ընդ ուղղափառս, բայց առաւել ընտ-
«րէին մնալ միաբան ընդ ազգին, քան բաժանիլ 'ի նմանէ. որք և ազ-
«գասիրութիւն ազնէին և անհակառակ բարս ունիլ, ուստի և հաղոր-

« դէին յԱստուածայինս ընդ բուն իսկ չարափառս, առանց ինչ բանս
« զմտաւ ածելոյ, ընդհանուր նախապաշարմամբ և կամակոր թմբու-
« թեամբ ազգին զգածեալ գոլով։

« Ահա յայս երկրորդ վիճակի եղելոց Հայոց ծնաւ Մխիթար աբ-
« բայ, և 'ի մանկութեան մնաւ առ ոտս երկուց կուսանաց, որք ունէին
« համարումն 'ի նոյն ժողովրդեան սրբակեցիկ վարուց և առաքինի ան-
« ձանց, զորոյ յիշատակն ունիմք 'ի վարս նոյն իսկ Մխիթարայ աբբայի
« տպեալ 'ի Վէնետիկ 'ի նոյն իսկ 'ի միաբանութենէ քաղեալ յընդար-
« ձակ պատմութենէ վարուց նորա, որ պահի 'ի նոյն վանս շարադրեալ
« 'ի Հ. Մատթէոս վարդապետէ Եւդոկիացւոյ ձեռնասուն յաշակերտէ
« նորա։ Սա ինքն Մխիթար աբբայ 'ի տիս մանկութեան յետ ամաց
« ինչ, որպէս ասացաք, մտեալ 'ի նոյն վանս Սուրբ Նշանի որ 'ի Սե-
« բաստիա, յառաջնորդէ տեղւոյն ձեռնադրեցաւ սարկաւագ յետ ըն-
« դունելոյ զայլ աստիճանս, և ապա քահանայ, յետոյ վարդապետ եղև
« ըստ սովորութեան Հայոց ազգին 'ի Մարգար վարդապետէ և յարքե-
« պիսկոպոսէ, որպէս պատմի 'ի նոյն վարս և այլն։ Ցորում և պատմին
« ամենայն անցք, որք անցին ընդ նմա, այսինքն թէ որպէս յառաջա-
« ցաւ յուսմունս դրոց և թէ զինչ տեղեկութիւն ընկալաւ 'ի գրոց
« վասն ճշմարիտ հաւատոյ և ուղիղ դաւանութեան, և թէ զիարդ շըր-
« ջեցաւ 'ի քարոզութիւն 'ի մէջ Հայոց, 'ի վանս և յեկեղեցիս նոցա
« հանապազորդելով իբրև զմի 'ի վարդապետաց նոցա. և յետ բազում
« դիպուածոց որպէս եկն 'ի միտս ժողովել զաշակերտս և ուսուցանել
« նոցա զուղղափառութիւն և զայլ ուսմունս, զի զնոյն յառաջ վարես-
« ցեն զկնի նորա, միայն դիտեալ զօգուտ ազգին։

« Եւ եկեալ 'ի Կոստանդնուպօլիս յետ բազում քարոզութեանց
« յեկեղեցւոջ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, որ 'ի Գալաթիա, և հա-
« լածանաց, որպէս պատմի 'ի վարս նորա, և յետ բազում ծանօթու-
« թեանց զոր ստացաւ առաջնոյ և զկնի 'ի վերայ Եւրոպեան ազգաց և
« գահին Հռովմայ և կարգաց կրօնաւորաց, 'ի միտս եկն ընդ հովանաւո-
« րութեամբ Եւրոպեան Տէրութեանց կառուցանել զկրօն, որով մօք
« և միանգամայն փախուցեալ ևս 'ի ձեռաց Պատրիարգին Հայոց հուսկ
« ուրեմն գնաց 'ի Մօռա, որ էր յայնժամ ընդ իշխանութեամբ Վենե-
« տիկեան հասարակապետութեան. և կառավար տեղւոյն, առ 'ի ծաղ-
« կեցուցանել զայն տեղի այլևայլ ազգօք և բնակչօք ետ նմա տեղի
« բնակութեան և եկեղեցի և այլն և այլն։

« Ապա Մխիթար աբբայ առաքեալ զոմանս յաշակերտաց իւրոց
« 'ի Հռովմ առ սրբազան Պապն Կղեմէս XI, ընկալաւ 'ի նմանէ բերա-

«նացի հաստատութիւն իւրում կրօնի, անուն տուեալ նմա Անտօնի
«աբբայի ընդ կանոնօք սրբոյն Բենեդիկտոսի աբբայի։ Եւ ապա անցեալ
«՚ի Վենետիկ և շինեալ զվանս Սրբոյն Ղազարու բնակեցաւ անդ, ուր
«և վախճանեցաւ իսկ։ Եւ ահա մինչև ցայսօր անդ բնակին աշակերտքն
«նորա, թող և զայլ վանատունս նոցա աստ և անդ։ Արդ, որպէս նոյն
«ինքն Մխիթար աբբայ, նոյնպէս և իւր ձեռնասուն աշակերտք, մանա-
«ւանդ առաջինքն, էին ՚ի հերձուածողաց անտի, որք ծանօթացեալք
«ճշմարտութեան, ՚ի բաց կային ՚ի Հայոց և միաբանեցան յայս գործ·
«և սակայն զոլով ՚ի նոյն զանգուածոյ և ոգի ազգասիրութեան որ էր
«բնական ՚ի նոսա, և տուրք հայրենեաց և միանգամայն ստիպող չքա-
«ւորութիւն նոցա ՚ի սկզբան անդ, առիթ եղև փօլիթիքայի նոյն իսկ
«Մխիթարայ աբբայ հօր և հետևողաց նորա· իբր զի ՚ի կառուցանել
«անդ թէ զկրօնն և թէ զվանս, զոլով ամենևին աղքատ իւրովքն հան-
«դերձ պէտս ունէր նպաստից, և առ այս ոչ ոք այնպէս կարող էր օգ-
«նել ուղղափառ եղելոց այնր ժամանակի, որպէս ազգն Հայոց որք յօ-
«ժարամիտ էին ոգւով ազգասիրութեան և իւրեանց բնական ձգմամբն
«՚ի շինութիւն վանաց և ազգային տեղւոյ որպէս և յայսմ ժամանակի
«ևս նոյն ոգի երևի ՚ի նոսա ՚ի նոյնպիսի դիպուածս, իսկ յայլ իրս ա-
«մենևին տարտամ։ Ուստի Մխիթար աբբայ յիւրոց աշակերտաց, որոց
«ոմանք էին բուն իսկ վարդապետք Հայոց, իբր նուիրակ, հանելով
«աստ և անդ, որպէս և զկնի նորա, և թղթովք օրհնութեանց առաքե-
«լով առ մեծամեծս ՚ի նոցանէ, և առաւել ևս ՚ի հեռաւոր վայրս, գու-
«ցէ յակնածութենէ ևս քօլլեճեանց, ժողովեաց ՚ի նոցանէ արդիւնս,
«որով կարող եղև յառաջ վարել զսկսեալ գործն և կատարել։ Բնա-
«ւորութիւնք Մխիթարայ աբբայ հօր, բայց յայլոց մեծամեծ ձրից, զոր
«յանձին բարձեալ բերէր, էր երևելի փօլիթիքա, որով ամենևին զգոյշ
«կայր յարտաքինս, մինչև թողեալ զտօնս և զաւուրս ազգին Հայոց և
«տօնել ընդ Եւրոպացոց զոր նոքա տօնէին· և առնել զժամ յեկեղեց-
«ւոջ ըստ կրօնի և ըստ ծիսի նոցա և ՚ի գործ ածել զժամագիրս նոցա
«թարգմանաբար և այլն։ Զնոյն ճանապարհ կալաւ և ՚ի շարադրու-
«թիւնս լեզուին Հայոց, ունելով զայն ոճ Եւրոպացի առ ՚ի շահել
«զամենեսին, զի մի ոք հայասէր գիցէ, և այս էր արդեօք կեղծաւորու-
«թիւն· և ՚ի տեսանել զոմանս յաշակերտաց իւրոց, զի զբնաւոր կիրս
«իւրեանց ցուցանէին թէ յաղագս ազգային նմանողութեանց և ծիսից
«և թէ հայկաբանութեան, ընդդէմ դնէր և ոչ թոյլ տայր ասելով,
«դեռ ևս չէ դիպող ժամ և ժամանակ· եկեսցեն աւուրք, յորս առ սա-
«կաւ սակաւ կարասջիք ընտելացուցանել զհակառակորդս և այնպէս
«մուծանել զայնոսիկ ՚ի ներքս։ Բայց ՚ի վերայ այսր ամենայնի այս

«ամենայն պզպշ փօլիթիքայք ոչինչ կարացին ծածկել 'ի յերևան գալ
«այնմ միաբանութեան, զի իբրև ձորձ ինչ պատառոտուն ընդ որով
«մերկութիւն մարմնոյն երևի, 'ի ծածկել զմին յանդամոց, միւս այլ
«ակներև յանդիմանի. վասն այսորիկ և ծագեցան անդէն և անդ այն-
«չափ կռիւ և հակառակութիւն և վէճ 'ի մէջ Մխիթարեանց և Քօլլե-
«ճեանց, որ ոչ ունէին զայս փօլիթիքա. մինչև յետ բազում բանից և
«թղթոց կոչեցաւ Մխիթար աբբայ հայր 'ի Հռովմ տալ պատասխանի,
«յորում Մխիթար աբբայ իւրով փօլիթիքական հնարիւք ծածկելով
«զիւրն փօլիթիքա, և զիւր ուղղափառ դաւանութիւնն առաջի դնելով,
«յինքն յանկոյց զՀռովմ. բայց ոչ կամեցաւ ունել տեղի 'ի Հռովմ,
«զի մի պարտաւորեսցի 'ի բաց կալ 'ի փօլիթիքայէն, զոր յինքն կրէր
«իւրովքն հանդերձ, որպէս և մինչ ցյետոյն ժամանակս նովին մտօք
«հեռի կային 'ի Հռովմայ. և հուսկ ուրեմն առ 'ի ճողոպրել զանձինս
«'ի ձեռաց Քօլլեճեանց 'ի յերևան գալ Վահան հաւատոյ գրոյ Հ. Մի-
«քայէլի Չամչեանց և այլն, որոշեցին ստանալ տեղի 'ի Հռովմ առ 'ի
«ջատագովել և պաշտպանել զմիաբանութիւն իւրեանց և ստանալ բա-
«րեկամս 'ի Հռովմ և այլն։

«Ի վախճանի Մխիթարայ աբբայ հօր յաջորդեաց նմա Ստեփա-
«նոս առաջին աբբայ յաշակերտաց նորա, որ և առաւել ջատագով
«երևէր Հայոց։ Ի ժամանակի սորա յառաջիկայից գտաւ Հ. Միքայէլ
«Չամչեան, որ և 'ի բազում ժամանակս շրջեալ 'ի քարոզութիւն 'ի
«հեռաւոր երկիրս գնաց մինչև 'ի Պաղտատ, և սա ևս օժտեալ գոլով
«փօլիթիքական ձիւք, 'ի գործ ած զայն յամենայն տեղիս և 'ի Հայոց
«ստացաւ բազում բարեկամս. և բանք նորա եղեն միշտ համաձայնք
«'ի հաճել զմին և զմիւսն և կամակից գտան նմա և երևելիք 'ի վանաց,
«և առ սակաւ սակաւ ամենեքին և զիւր ձեռնասուն աշակերտս վար-
«ժեաց 'ի նոյն եղանակ, որոց գլխաւորն և իբրև իւր երկրորդ եղև Հ.
«Մկրտիչ Աւգերեան ջատագովն նմա հանդերձ ընկերօք իւրով։ Եւ
«ահա առաւել քան զամենեսին գիրք սոյա և արձակ համարձակ ջա-
«տագովութիւն նոցա զազգէն Հայոց եղև քար գայթակղութեան նոյն
«կրօնի։ Եւ հօգի Վենետիկեան վանաց երևի յայտ յանդիման 'ի (Դե-
«սերտացիօնէ) գրոց Սեղբոսեան Յովհաննէս աղայի, և 'ի Վահան հա-
«ւատոյ գրոց և 'ի յընդարձակ Աստուածաբանութենէ Հ. Մկրտչի աբ-
«բայի եղև գժտութիւն և հակառակութիւն 'ի մէջ Մխիթարեանց Վե-
«նետիկեցւոց և Քօլլեճեանց վասն սոցին իրաց, պատճառն էր նոյն
«իսկ համաձայն փօլիթիքա նոցա, որք ոչ յայտ յանդիման ցուցանել
«կարէին յերկիւղէ նոցա և ոչ 'ի բաց վտարել զայն, ազգասիրութիւն
«առդնելով և յօգուտ ազգային։ Իբրև վախճանեցաւ առաջին Ստե-

«փանոս աբբայ, յաջորդեացն Ստեփանոս աբբայ, որ և
«ապա ձեռնադրեցաւ եպիսկոպոս. 'ի ժամանակի սորա առաւել գժտու-
«թիւն, հակառակութիւն և վիճաբանութիւն 'ի մէջ Մխիթարեան Վե-
«նետիկեցւոց և Քօլլեճեանց սաստկացաւ յոյժ յոյժ, և յերկուս ճեղ-
«քեցան ուղղափառք. մանաւանդ թէ և յերիս և 'ի չորս, մանաւանդ
«'ի ժամանակի անկելոյ Վահան հաւատոյ գրոց Հ. Միքայէլի Չամ-
«չեանց 'ի ձեռս Քօլլեճեանց. և սակայն միաբանութիւնն ջատագով
«գտաւ Հ. Միքայէլի, և շնորհիւք իմն ազատեաց զնա։ Ի նմին ժամանակի
«առաքեցաւ 'ի վանաց և «Սեղան Խնկոց» կոչեցեալ գիրք Հ. Միքայէլի
«Չամչեանց 'ի տիպ արձանացեալ, յորում և գտան և բազում բանք
«հոմաձայնք, չասացից թէ և Հայաձայնք և աղմկեցուցիչք, որ յետս
«առաքեցաւ, նշանակեալ և զտեղիս 'ի սրբագրել և այնպէս առաքել.
«և հարկիւ հաւանեալ էին այնմ մանաւորապէս Հ. Մկրտիչ Աւգե-
«րեան և Հ. Իգնատիոս Փափազեան և այլն և այլն։

«Յայսմ խռովութեան, մինչդեռ վարէին զդատ իւրեանց 'ի
«Հռովմ, և 'ի կողմանէ Մխիթարեանց Վենետիկեցւոց Հ. Մկրտիչ
«Աւգերեան տայր պատասխանի ամենայն խնդրոց, միաբանութեամբ
«Պօղոս աղայի Սեբաստեան գրէր առ Կոստանդի" (գուցէ 'ի Կոստան-
«դնուպօլիս) առ իւրայինս, շնորհել շնորս և առնուլ 'ի ձեռաց Հայոց
«եղանակ ինչ ուղիղ դաւանութեան զոր կարասցեն և 'ի տիպ արձա-
«նացուցանել, որով ազատեսցի վահան հաւատոյ և այլն։ Եւ Հ.
«Ղուկաս Ինճիճեան միաբանութեամբ Տիւզեանց գրգռեաց զՊատրիար-
«գըն Հայոց վրէժխնդիր լինել այնմ և խնդրել զոմանս յԱստուածա-
«բանից Քօլլեճեանց 'ի վիճաբանել և գտանել հնարս միաբանութեան
«առ 'ի յաղթող երևիլ Մխիթարեանց, և որպէս զի արդարասցի 'ի
«վախճանի Հ. Միքայէլ Չամչեանց, որով և բոլոր միաբանութիւնն։
«Եւ 'ի ժողովի միում ասաց Հ. Ղուկաս Ինճիճեան, «ես ունիմ 'ի գը-
«լուխ տանել զմիաբանութիւն ընդ Հայոց», և ջանաց ամենայն հնա-
«րիւք յառաջ վարել զայն ցայն աստիճան, մինչև յանձն էառ անցա-
«նել 'ի կողմն Հայոց, սատարութեամբ մեծամեծաց, միաբանիլ ընդ
«նոսա. և վասն այսորիկ գրեաց 'ի բերանոյ նոցա և 'ի վանս զի յանձն
«առցեն. և թէ նեղիցին 'ի Հռովմայ վասն այսորիկ, 'ի բաց լքցեն և
«զվանս որ 'ի Վենետիկ, և յԱնգղիա փոխադրեսցեն կամ այլուր զիւ-
«րեանց բնակութիւն, և 'ի Կոստանդնուպօլսոյ վճարեսցուք ամենայն
«ծախք։

«Այլ 'ի սաստկանալ վիճի և դատի 'ի մէջ Մխիթարեանց Վե-
«նետիկեցւոց և Քօլլեճեանց 'ի Հռովմ և 'ի Կոստանդնուպօլիս վասն

«այսօրիկ իրաց, Մխիթարեանք գտին հնարս, վասն որոյ և թեթևա-
«ցան ոչ սակաւ, որով և յայլ կերպարան շրջեցան իրք։ Սակայն գի-
«տել արժան է, թէ յայս ամենայն գործս գլխաւորքն 'ի բանս և 'ի
«խորհուրդս էին նախ Հ. Ղուկաս Ինճիճեան որ էր յայնժամ մեծա-
«ւոր և խոստովանահայր տանն Տիւզեանց և երևելի մեծամեծաց ար-
«քայեան ժողովրդոց, և ապա Հ. Եղիա և Հ. Փիլիպպոս և այլքն. և
«ոչ թէ այն անձինք, որ յետոյ առ հարկի ստիպեալ 'ի բնութենէ
«տէրութեան և պատրիարգին, որ յառաջադոյն գիտակն էր այն ամե-
«նայն վերոյասացեալ Ինճիճեան խորհրդոց, չոքան 'ի Ենի-խափու,
«խաբեալ 'ի բանից Յովհաննէս աղայի Երեմեան, թէ Մօնսինեօր հրա-
«ման ետ երթալոյ, երբ նա ինքն առաքեցաւ 'ի նոյանէ առ Մօնսինեօր
«Քօրեսսի հարցանել զնա վասն այսօրիկ։ Եւ յերկրորդում նուագի
«չոքան պարտաւորեալք 'ի բանից Մաթոս աղայի Ալլահվէրտեան, որ
«յայնմ ժամանակի գլխաւոր ծանօթն էր տէրութեան և խորհրդոց
«նորա, այսու ճանապարհաւ կամեցաւ զերծուցանել զուղղափառս 'ի
«վտանգէ մահու։ Այլ այս յետին դիպուած, որ եղև ընդ Հայս, գրեաց
«երկրորդ Ստեփանոս արբայ Գիւվեր Ագոնց և եպիսկոպոս առ իւր
«կրօնակիցս, թէ բարւոք է արարք ձեր. բայց յանցանք ձեր է սակա-
«ւաթիւ լինելն ձեր, բազմացուցէք զթիւն. և ուրախ էին 'ի վանս ընդ
«այս դիպուած, որպէս և պատմի ումն նորընծայ եկեալ 'ի վանացն
«վկայեաց այսմ. և Հ. Եմմանուէլ Ջախջախեան գրէր 'ի Հռովմայ, թէ
«առաքելական է գործք ձեր, որպէս և Հ. Մատաթիա գրեաց յորդո-
«րանս 'ի Հռովմայ։ Սոյնպէս և Հ. Ղուկաս Ինճիճեան 'ի բնակիլն յՕր-
«թա-գիւղ և 'ի լսելն և 'ի տեսանելն զնոսա ամենևին հաւանեցոյց
«զանձն, թող զՀ. Միքայէլ Չամչեան, որպէս և այլք։ Բայց յերկի-
«ղէ Քօլլեճեանց զգուշանային և բովանդակքն կեղծաւորէին և այլն։

«Նովին կեղծաւորութեամբ ընդդէմ վարդապետութեանց իւր-
«եանց զկրօնակիցս իւրեանց ունիթօռս և հերետիկոսս կոչեցին առ
«'ի զերծուցանել զանձինս իւրեանց և 'ի ծածկել զկեղծ արարս իւր-
«եանց և որպէս թէ նոքին իսկ չէին գլխաւոր ջատագովք Հայոց, և 'ի
«վանս իւրեանց ոչ անդադար խօսէին և խորհէին և գործէին առ 'ի
«ճարել զարդարացուցումն Հայոց, և իբր թէ ոչ կրթէին զմանկունս
«իւրեանց նովին մտօք և նովին տոգորմամբ, որով և կրթեալքն 'ի նո-
«ցանէ զնոյն շաւիղ կալան և նովին մտօք զուսումն իւրեանց ուսեալք
«'ի նոցանէ 'ի գործ արկին պարզ մտօք և առանց փոլիթիքայի։

«Զի թէ ճշմարիտ էր վարդապետութիւն իւրեանց, պարտական
«էին ջատագովել և զընկերակիցս իւրեանց, և թէ սուտ կամ մոլար և

« կամ գայթակղական, 'ի բաց պարտ էին վտարել յուսմանէ իւրեանց
« զայնպիսի գայթ 'ի գայթ վարդապետութիւն, և չլինէին պատճառ չա-
« րեաց, և ոչ ևս պարտ էին կրթել այնուհետև զմանկունս 'ի դեռա-
« փթիթ հասակէ անտի լցուցանելով զմիտս նոցա այնու պաշարմամբ,
« և ոչ իսկ պարտ էին դրոշմել 'ի գիրս իւրեանց զեղանակաւոր ասաց-
« ուածս կուսակցութեան Հայոց, և ոչ ևս պղտոր ջուր արբուցանել
« հետևողաց իւրեանց, ուստի և պարտական էին բացարձակ 'ի բաց
« տանել զամենայն խոչ և խութ և մի' 'ի լաբիւրինթոսի շրջիլ, ոչ
« գտանելով զելս, որոյ վասն և միշտ զկեղծաւորութիւն յանձին բե-
« րէին զինաւորելով երկսայրի զինուք առ 'ի գործ ածել երբեմն յաջ
« և երբեմն յահեակ, միայն դիտելով զօգուտ անձանց իւրեանց, կեղծա-
« ւորութիւն յոր և նման վարդապետաց Հայոց, յորոց և փոխանցե-
« ցաւ 'ի նոսա 'ի սկզբանէ հետէ»:

« Ուստի՞ յառաջ գայր և զի՞նչ փոլիթիքա էր Մխիթարեանց Վե-
« նետիկեցւոց, արդեօք յԵւրոպա գոլով ոչ ուսուցանել իւրայնոց
« զլեզու Եւրոպացի առ 'ի համարձակ վարիլ ընդ որոց արժանն էր և
« պիտոյ, թէև այնչափ ինչ խնդրեցաւ 'ի վանաց 'ի գալ հարկին, և
« ո՛չ լսելի եղև բացարձակ: Էր, էր և արտաքին և բանաւոր պատճառ,
« որպէս այն թէ, զի մի հայկաբանութիւնն խանդարեսցի, զի մի լե-
« զուագիտութեամբ բարեկամս ստասցին յաշխարհականաց, և գուցէ
« թէ սանձարձակ գտանիցին և այլն: Բայց ներքին պատճառն և բուն
« վանական փոլիթիքայն 'ի սկզբանէ հետէ էր ազգասէր լինել և ջա-
« տագով Հայոց, և որպէս զի մի ունիցին գրիչ 'ի ձեռին, գրել ան-
« ձամբ առ անձին և զեկուցանել առ որ պարտն էր, այլ ամենայն ինչ
« 'ի գլխաւորս՞ նոցին ամփոփեսցի և այլն:

« Ի վախճանի բանիս յայտնի իմն է ամենեցուն քօնթրասքօլայու-
« թիւն Վենետիկեան Մխիթարեանց ընդ Քօլլեճեանս, և սակայն այս ո՛չ
« հայի առ խնդիր ինչ և կամ հետևողութիւն հեղինակի յԱստուածա-
« բանական և 'ի փիլիսոփայական վիճմունս, այլ միայն առ Հայոց ջատա-
« գովութիւն և այս այնու օրինակաւ, որ ընդդէմ ելանէ միշտ կրթու-
« թեան և դիտաւորութեան Հռովմէական սուրբ ժողովոյն տարածման
« հաւատոյ, ուստի որչափ և յայսպիսի դիպուածս եղև հետևողութիւն
« Վենետիկեան Մխիթարեանց, նա միշտ զհակառակն ուսոյց և զընդդէմն
« պարտաւորեաց ուսուցանել, որպէս և յայտնի եղև:

« Յայսմ ամենայն բանից ասացելոց զհետ գայ, թէ պարտ է
« դարման առնել այսմ, կամ անձամբ անձին բարձցեն բոլորովին և բնա-
« ջինջ արասցեն յիւրեանց զայս գայթակղական և վնասակար փօլի-

« թիքա, և ըհակառակն կալցեն ճանապարհ ընդունելի ամենեցուն, և
« կամ թէ չեն բաւական այդմ, առաջարկի 'ի ձէնջ Հռովմէական սուրբ
« ժողովոյն տարածման հաւատոյ, առ 'ի ըստ իւրումն խոհեմութեան
« գտանել և ուղղել: Ի վերայ այսր ամենայնի ոչ ուրանամ զուսումնա-
« սիրութիւն իւրեանց և մի միայն շինել նոցա զուսումնարան ազգային,
« որոյ նման ոչ ուրեք երևի յազգի մերում, և թէ բազում գիտու-
« թեամբ և գրոց տպագրութեամբ պայծառացոյց զազգն իւր 'ի բաց
« առեալ զնիւթս գայթ 'ի գայթ բանից, որ հայի 'ի ջատագովութիւն
« Հայոց:

« Արդ. այսու յայտարարութեամբ կամիմ բառնալ յուղղափառ
« հաւատացելոց զգայթակղութիւն, զոր իմով անխոհեմ նախանձա-
« յուզութեամբ օգտելոյ հոգւոց պատճառեցի, վասն որոյ և յետս կո-
« չեմ և որոշեմ զանձն իմ յայս ամենայն սկզբանց և ներքոյ արկանեմ
« զիս կրթութեան և վարդապետութեան սրբոյ Հռովմէական եկեղե-
« ցւոյ և սրբոյ ժողովոյն տարածման հաւատոյ միանալով հոգւով և
« մտօք ընդ ամենայն յարգելի Քոլլեճեան քահանայից, փափագելով
« յայտնել զայս իմ դիտաւորութիւն ամենայն հաւատացելոց:

« Մեսրովպ վարդապետ Աղաջրախեան·
« Թովմա վարդապետ Համալեան·
« Սերովբէ վարդապետ Ճեօվահիրճեան·
« Թաթէոս վարդապետ Ասկերեան:»

Մեջ բերելով այս աղաւաղ հայկաբանութեամբ գրած նամակը, նամակը, որ գրված էր Մխիթարեանց թշնամիների ձեռքով, կամէի մի մասնաւոր գաղափար տալ մեր սիրելի ազգին, թէ ինչպէս էր Մխիթարի և նորա ընկերութեան յարաբերութիւնը դէպ ի մեր ազգը կամ դէպ ի Պապական աթոռը. այս նամակը յայտնում է նոյնպէս Կոլլեգիացոց յարաբերութիւնքը, դէպ ի մեզ, դէպ ի Մխիթարեանք և դէպ ի Վատիկանը:

Համառօտապէս խօսելով այս տեղ Մխիթարի վերայ, անցանենք քննել նորա ընկերութիւնը, որ շատ յեղափոխութենների ենթարկվեցաւ մինչև մեր օրերը: Այդ սասանեցուցիչ յեղափոխութիւնքը անտարակոյս պիտոյ է ազդեցութիւն ունենային և նոցա հոգու ուղղութեան և յարաբերութեան վերայ դէպ ի մեր ազգը:

(Շարունակութիւնը յետագայ տետրակում:)

Մ. Նալբանդեանց:

ԿՐԻՏԻԿԱ

Ժողովրդական լեզուով թարգմանված և տպված Ռօբինզօնի պատմութիւնը, Գամառ-Քաթիպայի աշխատութենով։ Ս. Պետերբուրգ, 1857։

Մեր սիրտը և հոգին բաց է ամենայն ուշադրութեամբ ընդունելու մի բանականութեան վաստակ, այնպիսի զգեստով, որ յարմար էր մեր ժամանակի և մեր կեանքի պայմաններին։ Այսպիսի ուրախ հոգով ողջունեցինք այս օրերիս Ռօբինզօն Կռուզօի հայերէն թարգմանութիւնը, Գամառ-Քաթիպայի աշխատութեամբ լոյս հանած և շինած ազգային ժառանգութիւն։ Ընթերցասիրելով այդ գիրքը զուարճացանք հոգեպէս, որովհետև դորա աշխարհ յայտնվիլը եւ բարի խորհուրդ ունէր մեր ազգի համար։ Մեք տեսած ու կարդացած էինք վաղուց ահա, գուցէ քսան տարի յառաջ, մի այդպիսի գիրք Պ. Բժշկեանի թարգմանութեամբ, որ տարբերվումէր այս նոր տպածից, որպէս իւր լեզուովը նոյնպէս և բովանդակութեամբ, թէև իդէան և բանի խորհուրդը նոյն էր։ Այս պատճառով մեք աւելորդ ենք համարում, այդ նոր տպածի բովանդակութեան վերայ երկար խօսել մեր կողմից. դորա ընդհանուր արժանաւորութեան վերայ պիտոյ է այսքան ասել, որ դա շինած է երեխաների դաստիարակութեան համար, ցոյց տալով նեղութիւնները և տառապանքը յառաջացած անհնազանդութենից ծնողների կամքին։ Փորձով գիտենք, որ այդ գիրքը շատ սիրելի կը լինի մեր ազգի մտացի մանուկներին, որոնք իւրեանց ազգութիւնը չուրացող ծնողների զաւակ լինելով, ուսել էին գոնէ ինչպէս և իցէ ժողովրդական կենդանի լեզուն և գիտէին կարդալ հայերէն։

Հոգով և սրտով ցանկանումենք, որ ամենայն ծնող փոխանակ մի խաղալի բան պարգևելու իւր զաւակին, Ռօբինզօնի պատմութիւնը ընծայէր նորան, որ և զբօսեցուցիչ և օգտակար կը լինէր նորա երեխային, և որ չը նայելով մաքուր և լաւ թղթի վերայ պատկերազարդ տպագրութեանը, շատ դիւրագին է, մանաւանդ համեմատելով Պետերբուրգ քաղաքի մէջ գիրք տպելու պայմանների հետ։ Այս գրքի գինը նշանակել է թարգմանիչը 65 կոպէկ արծաթ։

Ժողովրդական լեզուի մասին, որով գրած է այդ աշխատութիւնը, կարող ենք տալ այսպիսի կարծիք։

Պ. Գամառ-Քաթիպայի աշխատութիւնքը, տետրակներով տպած մինչև այժմ, բաւական տարբեր են այս ներկայ աշխատութենից. ասված տետրակների մէջ մեք ամենայն քայլափոխում տեսանումենք, որ

Պ. Գամառ-Քաթիպան ուշադիր չէ լեզուի մաքրութեանը, այլ շատ անգամ թոյլ տալով օտարի խօսքեր կամ տեղական մասնիկներ, որոնցից կարելի է փախչել առանց լեզուի ժողովրդականութիւնը կորուսանելու, աղճատումէ լեզուի անարատութիւնը․ ճշմարիտ է և այն, որ շատ անգամ այդ աշխատութիւնքը տաղաչափութեան ստիպանքի տակ լինելով, հարկադրումեն Պ. Գամառ-Քաթիպային զոհել լեզուի մաքրութիւնը և յատկութիւնը անգամ, թէպէտ մի գովանի բան չէր դա։ Պ. Գամառ-Քաթիպայի առածը, «գրել այնպէս, ինչպէս որ խօսումեն և խօսել այնպէս, ինչպէս որ գրումեն»․ այդ առածը որ նա անդադար գործ է ածում իւր աշխատութիւնների ճակատում, մեք չենք տեսանում, որպէս ընդհանուր ուղղութիւն նորա բոլոր աշխատութիւնների մէջ. Նորա «Նոր այբբենարանը» գրած է այնպիսի լեզուով, որով չէր խօսում ժողովուրդը, ի՛նչ էր ինքնահակառակութեան պատճառը։

Եթէ Պ. Գամառ-Քաթիպայի սրտի վկայութիւնը համաձայն է նորա գործածած Կառամզինի իմաստուն խօսքին, ապա ի՛նչպէս պիտոյ է մեկնել նորա գործակատարութիւնը, որ անհամաձայն է այդ առածին, մանաւանդ այնպիսի գրքի մէջ, որ առաջին անգամ պիտի ողջունէր Հայոց մանուկը, որ չը գիտէր դեռ ևս ընթեռնուլ։

Ներկայ աշխատութեան մէջ, որ է «Ռօբինզօն Կռուզօի պատմութիւնը», եթէ սորան համեմատենք նորա տետրակների հետ, տեսանումենք, որ հեղինակը փոքր ի շատէ ուշը դարձուցել է լեզուի վերայ․ այնու ամենայնիւ պիտի խոստովանել, որ նորա լեզուի մէջ անխտիր երևումեն տարերքը երկու գլխաւոր ժողովրդական բարբառների, այսինքն, Հայաստանի և Տաճկաստանի։

Բացառականքը շինվումեն առ հասարակ էց մասնիկներով, բայց երբեմն մի անհասկանալի պատճառով, Պ. Գամառ-Քաթիպան հետեւումէ Տաճկաստանի Հայոց մէջ գործածական է վերջաւորութեանը բացառականի։

Օրինակի համար․ այս աշխատութեան 11 երեսում փոխանակ ասելու «Նոցա կամքից», ասումէ— «Նոցա կամքէն»․ 53 երես, փոխանակ, «այս վայրենի անասուններից», ասումէ — «այս վայրենի անասուններէն» և այլ այսպիսիք, որ աւելորդ ենք համարում կրկնել․ պատճառ, ուշադրութեամբ կարդացողը ինքն կը հասկանայ այս անտարբեր գործածութիւնը երկու տեսակ բացառականների։ Ինչպէս մեզ թվումէ, Պ. Գամառ-Քաթիպան, իւր բացառականի է վերջաւորութիւնը, որպէս և Տաճկաստանի Հայերը, հիմնումէ հին լեզուի բացառականի է վերջաւորութեան վերայ․ բայց թող ներվի մեզ ասել հասկանալու համար, որ հին լեզուի բացառականքը ամենայն տեղ է վեր-

ջաւորութիւն չունին. և եթէ մի քանի հոլովմունքի մէջ, անունների բացառականքը, եզականումը ունին է, այդ ընդհանուր կանոն չէ. մեք գիտենք, որ այլ հոլովմունքի տակ եղած անունները, զոր օրինակ, «գետ, եկեղեցի, Տրդատ, Եսայի», իւրեանց բացառականքը կազմումեն սեռականից, նախդիր յաւելացնելով վերան, և չունին առանձին բացառական վերջաւորութիւն. այսպէս և բոլոր հոլովմունքի մէջ յոգնակի բացառականքը։ Ուրեմն բացառականի կազմութեան ընդհանուր կանոնը է, սեռականից. և եթէ միայն եզակի բացառականը տեղ տեղ ունի սեփական վերջաւորութիւն, այդ արտաւղութիւն կամ բացառութիւն կարող է համարվել համեմատութեամբ ընդհանուրի հետ։

Փիլիսոփայական, համեմատական քերականութեան կանոնը ևս արդարացնումէ մեր կարծիքը. մեր և օտար լեզուների մէջ տեսանումենք որ բացառականի ուժը և զօրութիւնը հասկացվումէ նախադրութեամբ, թէև Տաճիկների նախդիրը յետադիր կամ վերջադիր էր։

Այս աշխատութեան մէջ յոգնակի սեռականները հին լեզուի ընաւորութիւն և վերջաւորութիւն ունին, զոր օրինակ, «մանկանց» և այլն և այլն, բայց տեսանումենք նոյնպէս, որ նորը ևս պահված է շատ տեղ, այս պատճառով կարծումենք, որ այդ ակամայ սխալ լինի, ինչպէս նաև մեզ պատահել է մեր «Թափառական Հրէայ» անունով Հայերէն թարգմանած գրքի մէջ։

Պ. Գամառ-Քաթիպան հետաքրքիր է ասում Ռօբինզօնի վարքը. այդ հետաքրքիր բառը իբրև ածական գործածված անշունչ իրի համար, սխալ է, որովհետև հետաքրքիր կարող է լինել միներգործական էակ, մարդը, որ կամք ունի և քննումէ կամ քրքրումէ մի բան, իսկ մի կրաւորական — անշունչ իր, որ ոչինչ կերպով չէ կարող ցոյց տալ իւր մէջ միներգործականութիւն, չէ կարող քննել ուստի և ոչ քրքրել. այլ միայն արժանի լինել, որ դորան ուրիշները քրքրէին և քննէին, այդ կարող է, վասն որոյ և մեր լեզուի մէջ ասվումէ, գործ, կամ խնդիր, արժանի հարցասիրութեան, այս է բուն կլասիկական բառը, որ և Մովսէս Խորենացին գործ է ածում։

Բայց ինչպէս երևումէ, Պ. Գամառ-Քաթիպան և ուրիշ մարդիկ սխալվումեն այդ բանի մէջ, հետևելով Ռուսաց «любопытный» բառին, — որ նշանակումէ և հարցասէր և հարցասիրելի, բայց զանազանութիւնը մեր և Ռուսաց մէջ այս բառի գործածութեան ժամանակ, այն է, որ մերը ունի ներգործական միայն զօրութիւն, իսկ Ռուսացը երկուսը ևս. այսինքն, ներգործական և կրաւորական, ըստ որում «любопытный» ասվումէ և մարդը, որ հարցասիրումէ և գործը, որ հարցասիրվումէ։ Այս և նմանապիսի սխալանքը բաւական յաճախ

պատահումէն Ռուսաստանի Հայերի մէջ, և պատճառը ակնյայտնի է առանց մեր բացատրութեանը ևս։ Հայերը իւրեանց բոլոր ուսումը և գիտութիւնը ստանալով օտար լեզուով, մտածումէն և խօսումէն օտարաբար աւելի քան թէ հայաբար. շատ բնական բան։

Պ. Գամառ-Քաթիպան ուշ չէ դրել նոյնպէս բառերի յարմարագրութեանը, նա փոխանակ գրելու, «ճանապարհ, աշխարհ», գրումէ— «ճանապար, աշխար», որ շատ խորթ է, ու շատ անգամ փոխումէ բառի նշանակութիւնը։ Եթէ ժողովուրդը այնպէս է գործ ածում այդ բառը իւր խօսելու ժամանակ, որ որոշակի չէ լսվում հ տառի ձայնը, դորա պատճառը է տառի հագագային լինելը, որ բառերի վերջերումը գրեթէ կորուսանումէ իւր ձայնը, և եթէ բնութեամբ արտաբերվի, բաւական կոշտ կը լինի։ Դիցուք թէ արտաբերումէ ժողովուրդը կամ չէ արտաբերում, ի՞նչ հարկաւոր է հետևել նորա աղճատանքին. մեք կը համաձայնինք այն ժամանակ զոհել բառի բուն յատկութիւնը, եթէ միայն չհասկանալու վտանգ կար. տարակուսելի բան չէ, որ «աշխար, ճանապար» հասկացող մարդը կը հասկանայ նոյնպէս, եթէ այդ բառերը գրված լինէին ինչպէս հարկն էր, ճանապարհ, աշխարհ և այլն։

Մեր ժողովրդական լեզուն այնքան աղճատված չէ, ինչպէս թվումէր մի մարդու առաջին անգամ. այն աւերանքը, որ յառաջացել են Իտալականի և միւս Հռովմէական ասված լեզուների մէջ նայելով Լատինականի ամբողջութեանը, չը կայ մեր ժողովրդական լեզուի մէջ, համեմատելով մեր հին լեզուի ամբողջութեան հետ, եթէ մեք չը ստրկանանք որ և իցէ դասական բարբառի։

Գրել ժողովրդական լեզուով առանց ծառայանալու դասական բարբառներին, մի և նոյն ժամանակ ամբողջ պահելով լեզուի ժողովրդականութիւնը, մշակել այդ լեզուն, ներս բերելով դորա մէջ նոր մարդավայել և արժանի Եւրոպական անունի գաղափարներ, ահա այն մի հատիկ գործը, որով պիտոյ է պարապէին հոգիազգեաց հեղինակները և թարգմանիչքը մեր ազգի ուր և իցէ։

Վերջացնելով մեր խօսքը, յայտնումենք Պ. Գամառ-Քաթիպային մեր սրտի անկեղծ շնորհակալութիւնը. կը ցանկանայինք, որ օգտակար լինէին նորան մեր բարեմիտ փոքր ի շատէ ծանօթութիւնքը նորա աշխատութեան վերայ, նորա ապագայ ասպարիզումը։

Մ. Նալբանդեանց։

ՆՈՐԱՏԻՊ ՀԱՅԵՐԷՆ ՄԱՏԵԱՆՔ ՄՈՍԿՎԱՅԻ ՄԷՋ.

ՍՏԵՓԱՆՈՍԻ ՆԱԶԱՐԵԱՆՑ

1) *Հանդէս Նոր Հայախօսութեան, Հատոր Ա. մեծ ութածալ. երես* 505., *գինը* 2 *ման. արծ. կազմած.* 1 *ման.* 80 *կոպ. անկազմ. Ճանապարհի ծախքը հաշուելի է* 3 *ֆունտի համար։*

2) *Հանդէս Նոր Հայախօսութեան, Հատոր Բ. մեծ ութածալ. երես* 503., *գինը* 2 *ման. արծ. անկազմ* 2 *ման.* 20 *կոպ. կազմած. Ճանապարհի ծախքը հաշուելի է երեք ֆունտի վերայ։*

3) *Պաւլոս և Վիրգինիա հանդերձ Հնդկական խրճիթով, պատկերազարդ. Թարգմանութիւն Ֆրանսիական բնագրից. դեռ ևս տպագրական մամուլի մէջ. գինը* 1 *մ.* 50 *կ. արծ. անկազմ. կազմով* 1 *մ.* 65 *կոպ։ Ճանապարհի ծախքը հաշուելի է* 1 *ֆունտի վերայ։*

ՄԻՔԱՅԷԼԻ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

1) *Թափառական Հրէայ, — Եւժէն Սիւ Ֆրանսիական հեղինակի գործը, ընդարձակ յառաջաբանութեամբ Յիսուսեան կարգի աբեղաների մասին. Հատ. Ա. մեծ ութածալ. երես* 350., *գինը* 1 *ման.* 25 *կոպ. արծ., հասարակ կազմով։ Ճանապարհի ծախքը հաշուելի է երկու ֆունտի վերայ։*

2) *Դքսուհի դը Շեվրեօզ, Կլեմանս Ռոբերտի գործը. գինը* 30 *կոպ., Ճանապարհի ծախքով* 50 *կոպ. արծ։*

3) *Օրացոյց գալոց* 1859 *Թուականի. գինը* 25 *կոպ. արծ։*

Կամեցողքը ստանալ այս գրքերը, կարող են պատկանեալ արծաթովը միասին ուղարկել իւրեանց խնդիրը այսպիսի հասցէով.

Въ Редакцію Армянскаго Журнала «Сѣверное Сіяніе», на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника Назарьянца, въ Москвѣ.

ՆՈՐԱՏԻՊ ՀԱՅԵՐԷՆ ՄԱՏԵԱՆՔ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԷՋ·

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ

1) *Լիակատար Երգարան (տաղարան), հանդերձ կանոնաւոր երաժշտական խաղերով· գինը* 1 *մանէթ արծ· ճանապարհի ծախքը հաշուելի է* 1 *ֆունտի վերայ։*

2) *Ռօբինզօն կռուզօի պատմութիւնը, հանդերձ* 8 *պատկերով և բառագրով· գինը* 65 *կոպ· արծ· ճանապ· ծախքով* 85 *կոպ։*

Բ. ԽԱՉԵՉԵԱՆՑ

1) *Երգք Սերովբէ վարժապետի Պատկանեանց, գինը* 80 *կ· արծ· ճանապարհի ծախքով* 1 *ման։*

2) *Զուարճարանութիւնք Բալակիրեւի, հանդերձ բառագրով· գինը* 50 *կոպ· արծ· ճանապարհի ծախքով* 75 *կոպ։*

Յանկացողքը ստանալ այս գրեանքը, կարող են գրել այս հասցէով,

Въ С. Петербургъ. Аветику Каспровичу Хазезьянцу, на Невскомъ проспектѣ, въ домѣ Армянской церкви № 11.

---

1. Հիւսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլ և մանաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ։

2. Բնագիտական ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և դոցա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր զանազան ֆիզիքական յայտնագործութիւնների, հասարակախօս Աստեղաբաշխութեան, Քիմիայի, Հանքաբանութեան և Ֆիզիօլօգիայի վերայ. այլ և բանախօսութիւն տունկերի, գիտութեան արժանի բոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենցաղօգուտ գիւտերի և յայտնագործութիւնների մասին։

3. Բարոյական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և զգայողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով. թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութիւնից. այլ և Կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ։

Ցանկացողքը ստանալ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. въ Редакцію Армянскаго Журнала «*Сѣверное Сіяніе*», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. կամ թէ Մոսկվայի նամակատանը այսպիսի հասցէով. въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Տարեկան 12 տետրակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար 9½ մանէթ։

Печатать позволяется. С. Петербургъ, Іюня 3-го, 1858 года.

Ценсоръ В. Бекетовъ.